

Սյունյաց աշխարհի Արեւիք գավառում՝ աստվածաշնչային Արաքսի ափին, 60 տարի առաջ ծնունդ առավ Ագարակ քաղաքը

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003
 ՎՈՒՅԵՆԵՐԻ 1-ԻՑ
 ՀԻՄՆԱԴԻՐ
 ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
 ՍԱՐԱՆԱԲՈՎ
 ՊԱՏԱՆԱԿԱՎՈՒԹՅԱՆ
 ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ
 Գինը՝ 100 դրամ:


ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ

№ 19 (191) • 10 հոկտեմբերի 2009թ. • 2աբաբ

• Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 • Ինքնբնիկ՝ www.syuniacyerkir.am

*Սրբիր ճակատիդ
 քրտինքը մաքուր
 Եվ նորից գնա...*
 ԴԱՍՈՍ ՍԱՀՅԱՆ

**Ահա Ագարակը՝
 Հայաստանի
 Հանրապետության
 հարավային ոստանն ու
 սահմանադուռը**



Ռոբերտ Կամոյան, «Ագարակ», կտավ, յուղաներկ, 100x80
 «Սյունյաց երկիր» հայտարարած մրցույթում նվիրված Ագարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակին, լավագույն գեղանկար է ճանաչվել կապանցի գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի սույն աշխատանքը (մրցույթի հովանավոր՝ Սամվել Հայրապետյան):

ՀԱՄԱՐՈՒՄ

**Շնորհավորանքներ
 Ագարակի հիմնադրման
 60-ամյակի
 կապակցությամբ**
 » 2, 3, 4, 6

**Անդրադարձ Ագարակ
 քաղաքի պատմական
 անցյալին**
 » 16, 18

**Ագարակ քաղաքի Եւ
 պղնձամուլիբդենային
 կոմբինատի հիմնադրումը**
 » 10, 11, 15, 17

**Մասնակցություն
 Արցախյան
 ազատամարտին, ինչի
 արդյունքում նաեւ ծնվեց
 Ագարակի զորամասը**
 » 6, 14

**Հրեյլանի առթիվ
 հայտարարվել էր
 գեղանկարի, քաղաքի
 զինանշանի Եւ
 դպրոցականների
 շարադրությունների
 մրցույթ**
 » 9, 16

**Ագարակի
 երախտավորներից մի
 քանիսը**
 » 5, 9, 13

**Մերօրյա Ագարակը.
 գործընթացներ,
 իրողություններ,
 հիմնախնդիրներ,
 ծրագրեր**
 » 3, 4, 7, 8, 11, 12, 13, 19

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը շնորհակալություն է հայտնում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, «Պետրոսյանի» խմբի նախագահ Ռոման Խուրդուխչյանին, Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանին, «Մեղրու ճՇՇԶ» ԲԲԸ փնտրեն Ագարակի Գաղափարյանին, Երեւանի քաղաքապետ Կարապետյանին՝ թերթի սույն համարի հրատարակմանն աջակցելու համար:

ՀՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

Մեծ Ազարակը՝ մեր Ազարակը, գուրգուրանքի եւ փայփայանքի կարիք ունի



Սիրելի հայրե-
նակիցներ

Ընդհարմարում
եմ ձեզ Ազարակ քա-
ղաքի հիմնադրման
60-ամյակի կապակ-
ցությամբ: Բոլորիդ
մաղթում եմ անձնա-
կան երջանկություն
եւ հաջողություններ:
Երախտապարտ
ազարակցիների ու

մեղրեցիների հետ ես նույնպես գլուխ եմ խո-
նարհում այն մարդկանց (երկրաբաններ, նա-
խագծողներ, ճարտարագետներ, շինարարներ,
լեռնագործներ, բանվորներ) գործի եւ հիշատա-
կի առջեւ, ովքեր տասնամյակներ առաջ Արաքսի
ափին հիմնեցին Ազարակը, որի կառուցումը վկա-
յությունն է մեր ժողովրդի ստեղծագործ ուժի:

Ազարակի 60-ամյա տարեգրությունը հայ
ժողովրդի այդ շրջանի պատմության մի մասն է:
Եվ այդ ընթացքում Ազարակն ու ազարակցին իր
ժողովրդի հետ էր՝ իր նվիրակյալ աշխատանքով
ու հայրենիքի նկատմամբ հոգածությամբ: Ազա-
րակցին իրեն արժանապատվորեն դրսևորեց
նաեւ 1980-90-ականների ազգային վերածննդի
ժամանակ, Արցախյան գոյամարտի օրերին եւ
անկախ պետության կառուցման ներկա ընթաց-
քում:

Պղնձամուլիբդենային կոմբինատը զգալի դեր
ունի մեր երկրի տնտեսության մեջ, ինչը հատկա-
պես կարեւոր է հանրապետության հարավային
սահմանի ամրապնդման համատեքստում: Ես

քաջատեղյակ եմ բոլոր այն դժվարություններին,
որ վերջին տարիներին ու հատկապես վերջին
ամիսներին առաջացել էին Ազարակում՝ պայ-
մանավորված համաշխարհային տնտեսական
ճգնաժամի հետեւանքով պղնձամուլիբդենա-
յին կոմբինատի ոչ կանոնավոր աշխատանքով:
Հանրապետության կառավարությունն արդեն
քայլեր է ձեռնարկել այդ դժվարությունները
հաղթահարելու, դրանց հետեւանքները մեղմե-
լու, համբարդյունաբերական ձեռնարկության
գործունեությունը կայուն հուն տեղափոխելու
գործում: Ազարակի կոմբինատի՝ Մեղրու տարա-
ծաշրջանում ունեցած բացառիկ դերի ու առաքե-
լության գիտակցումն ունի նաեւ ձեռնարկության
սեփականատեր խումբը:

Տարածաշրջանի մյուս խնդիրների աստիճա-
նական լուծումը եւս մեր ուշադրության կենտրո-
նում է:

Ազարակն այսօր նաեւ մեր երկրի հարա-
վային սահմանադուռն է, հայ-իրանական եւ
հայ-ադրբեջանական սահմանին հաղորդակցու-
թյան ուղիների խոշոր հանգուցակետը: Մեղրու
տարածաշրջանը, մասնավորապես Ազարակը,
գտնվում է ռազմավարական կարեւորություն
ունեցող դիրքում՝ դրանից բխող բոլոր հետեւու-
թյուններով:

Դժվարությունների ու ներքին տագնապների
հաղթահարումը, զարգացման ծրագրերի իրա-
գործումը հնարավոր է միայն բոլորիս համատեղ,
համաձայնեցված աշխատանքով:

Շնորհավոր տոնը, Ազարակ:
Թող բարի լինի թո երթը դեպի ապագա:

Այունիի մարզպետ Սուրեն Խաչատրյանի շնորհավորանքի խոսք ազարակցիներին Ազարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակի կառուցությունը



Հարգելի ազա-
րակցիներ

Վեց տասնա-
մյակ է անցել այն
ժամանակվանից,
երբ ԽՍՀՄ կառավա-
րության որոշմամբ
մեկնարկ տրվեց
Ազարակի պղնձա-
մուլիբդենային կոմ-
բինատի կառուց-
մանը, երբ Արաքսի

ծախ ափին, իբրեւ ապագա քաղաքի առաջնեկ,
կառուցվեց առաջին փայտյա տնակը: Խնդիր էր
դրվել այնտեղ կանոնավոր արդյունաբերական
ռեյսերի վրա դնել պղնձի եւ մուլիբդենի խտա-
մյութերի արդյունահանումը, ինչն այդ վայրում
պարզագույն եղանակով իրականացվում էր
դեռեւս 19-րդ դարի կեսերից (դրանում, երկրա-
բանական ուսումնասիրության տեսակետից,
իրենց ծանրակշիռ ավանդ ունեն հայ ժողովրդի
նե՛ծ զավակ Խաչատուր Աբովյանն ու աշխար-
հահռչակ երկրաբան Յերման Աբիխը): Անցած
տարիներին նախ կառուցվեց ժամանակի տեխ-
նիկական նվազագույնի համահունչ հանքար-
դյունաբերական ձեռնարկություն: Զուգահե-
ռաբար կառուցվեց եւ այժմյան տեսքին բերվեց
Ազարակ քաղաքը:

Յուրեղանի առիթով ես նախ եւ առաջ շնոր-
հավորում եմ ազարակցիներին եւ բոլորին մաղ-
թում քաջառողջություն ու հաջողություններ: Այ-
նուհետեւ ես իմ հարգանքն եմ ընծայում բոլոր
այն մարդկանց, ովքեր մեր երկրի հարավային
սահմանագլխին վեց տասնամյակ առաջ լծվե-
ցին նոր քաղաքի ու նոր ձեռնարկության կա-
ռուցմանը: Որքան տեղյակ եմ, համաժողովրդա-
կան այդ կառուցումը ընդգրկված էին ոչ միայն
մեր հանրապետության տարբեր շրջանների, այ-
լեւ 30 ազգերի ներկայացուցիչներ՝ Խորհրդային
Միության տարբեր վայրերից:

Ժամանակները փոխվել են, անշուշտ, եւ
Ազարակ քաղաքը, կարելի է ասել, պատմական
նոր առաքելություն է ստանձնել՝ պայմանավոր-
ված իր աշխարհագրական դիրքով, կոմունիկա-
ցիաների հանգուցակետ լինելով: Չնայած դրան՝
Ազարակի լինելության գրավականը շարունա-
կում է մնալ պղնձամուլիբդենային կոմբինատը:
Ցավոք, համաշխարհային տնտեսական ճգնա-
ժամը որոշակի անդրադարձներ է ունեցել նաեւ
այդ ձեռնարկության, հետեւաբար՝ քաղաքի
վրա: Թվում է, այդուհանդերձ, թե դժվարությու-
նները հիմնականում մնացել են անցյալում: Եվ
հիմն, շնորհիվ ՀՀ նախագահի աջակցության,

կոմբինատը դուրս է գալիս կայուն զարգացման
ճանապարհ (ի դեպ, 2008թ. նոյեմբերի 1-ից մին-
չեւ 2009թ. հուլիս ընկած ժամանակաշրջանում
թեւեւ կոմբինատը չէր աշխատում, եւ ազարակ-
ցին հույսը կորցրել էր վարվա օրվա հանդեպ,
Սերժ Սարգսյանի անմիջական միջամտությամբ
լեռնագործները ստացան իրենց հասանելիքը,
ինչը քաղաքում վերականգնեց խաթարված բա-
րոյահոգեբանական մթնոլորտը): Համոզված եմ
նաեւ, որ մենք այլեւս չենք բախվի գործազրկու-
թյան ցավոտ հարցին:

Կոմբինատի աշխատանքների լիարժեք
վերականգնումն հետ մեկտեղ քայլեր են ձեռ-
նարկվում համայնքային այլ հիմնախնդիրների
լուծման ուղղությամբ: Իսկ այդպիսի խնդիրները
շատ-շատ են Ազարակում:

Մենք չենք մոռացել ու երբեք չպետք է մոռա-
նանք, որ Ազարակի առաջընթացով է պայմանա-
վորված Արեւիքի տարածաշրջանի զարգացումն
ու ամրապնդումն առեւտրական:

Մենք չենք մոռացել ու երբեք չպետք է մո-
ռանանք, որ Հայաստանի Հանրապետությունը
սկսվում է Ազարակից, ինչը լրացուցիչ խնդիրներ
է առաջադրում եւ մարդպետարանին, եւ տեղա-
կան ինքնակառավարման մարմիններին:

Մենք չենք մոռացել ու չպետք է մոռանանք,
որ Ազարակը երկրի ամենհարավային բնակա-
վայրն է, որ Ազարակը սահմանադուռն է սահ-
մանապահ քաղաք է, ինչը նոր նշանակություն է
տալիս նրան:

Ազարակի պատմության փառավոր էջերից
է Արցախյան գոյամարտի շրջանը: Ազարակցի-
ներն իրենց յոթ զավակների արյամբ պաշտ-
պանեցին հայ-ադրբեջանական սահմանի այդ
հատվածի անձեռնմխելիությունը: Ազարակի
ազատամարտիկների այդ շրջանի հայրենան-
վեր գործունեությունը, մեր մարտական ընկեր
Ղեւոնդ Հովհաննիսյանի գլխավորությամբ, եղել
եւ մնում է խոնարհումի արժանի երեւույթ ներկա
եւ գալիք սերունդների համար:

Քաղաքի հիմնադրման 60-ամյակի առիթով
հիշում ենք ոչ միայն անցած ճանապարհը, այլեւ
քաղաքի առջեւ ծառայած խնդիրները: Ազարա-
կը պետք է լինի հարմարավետ քաղաք ապրե-
լու համար: Ազարակը պետք է լինի մեր երկրի
արժանի սահմանադուռն Հայաստան-Իրան սահ-
մանի վրա: Ազարակը պետք է ծանրակշիռ ներ-
դրում ունենա Այունիքի մարզի, մասնավորապես
Արեւիքի տարածաշրջանի ամրապնդման ու
զարգացման գործում: Այդ ծրագրերով ու ակն-
կալիքով էլ նշում ենք քաղաքի ծննդյան օրը:

Շնորհավոր տոնը, Ազարակ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեր սիրելի հորեյլարը՝ մեր Ազարակը, գուրգուրանքի եւ փայփայանքի կարիք ունի

Ազարակ քաղաքը չունեցավ այնպիսի
սկիզբ, ինչպիսին ունեցել են հայոց շատ
ու շատ ուստաններ: Երբ, օրինակ, Հայոց
արքան՝ հեծած իր Արծիթե ձին, գալիս
ու ամրոց շինելու հրովարտակ է արծա-
կում ու քարագործ վարպետի ձեռքով
հիշատակող սալի վրա անմահացնում
արքայական իր գործը: Ազարակն ունե-
ցավ բոլորովին այլ սկիզբ ու այլ ընթացք:
Հայաստանի երկրորդ հանրապետության
օրերում ծնվեց այն: Զուտ տնտեսական
առաքելություն ուներ ի սկզբանե՝ պայ-
մանավորված Խորհրդային Միության
ընդհանրական շահերով, ելնելով իրողու-
թյունից, որ այնտեղ է գտնվում Հայաստա-
նի պղնձամուլիբդենային երկրորդ խոշոր
(Քաղաքանից հետո) հանքավայրը՝ միջին
դարերից հայտնի: Քաղաքի հիմնումն ու-
նեցավ նաեւ այլ նշանակություն. Հայաս-
տանի Հանրապետության հարավային
սահմանագլխին՝ Մեղրու շրջանում՝ աստ-
վածաշնչային Արաքսի ափին, հառնեց նոր
բնակավայր:

Հիմա դժվար է ասել՝ ճիշտ էր ժամա-
նակին այնտեղ քաղաք կառուցելը, թե՞ ոչ:
Չէ՞ որ քաղաքի կառուցմանը զուգահեռ
մերձակա եւ հնամենի գյուղեր կուլ գնա-
ցին (Ազարակ գյուղը) կամ թուլացան ու
բռնեցին քայքայման ճանապարհ՝ Կուրիս,
Գուղեմնիս (պատմական Կաթավաբերդի
զավառակը): Մերձակա մյուս գյուղերից էլ՝
Կարծեսան, Վահրավար, Տաշտուն, Լիճք եւ
այլն, երիտասարդության հոսք եղավ դե-
պի Ազարակ: Եվ վերացված ու վերացվող,
դակացած մի քանի գյուղերի փոխարեն
ունեցանք մի նոր՝ առավել խոշոր բնակա-
վայր՝ Ազարակ անունով քաղաք:

Տարածքը, որտեղ 1949թ. հիմնադրվեց
Ազարակը, Այունյաց աշխարհի հնագույն
բնակատեղիներից է: Այդ հողն ու լեռն
ժայռերը դարեր շարունակ վկա են եղել
մեր ժողովրդի համար վճռորոշ իրադար-
ձությունների:

Տարիներ շարունակ Ազարակն ունե-
ցավ զարգացման բնականոն ընթացք,
տնտեսական ակտիվ կյանք, որն էականո-
րեն խախտվեց անցած դարի 80-90-ական
թվականների սահմանագծում՝ տնտե-
սական ձեւավորված կապերի հետեւանքով:
Քաղաքային որոշ ենթակառուցվածքներ
ու տնտեսավարող սուբյեկտներ այդ ամե-
նի արդյունքում փակվեցին-լուծարվեցին՝
ծնունդ տալով զբաղվածության՝ առայսօր
մտատանջող խնդրին եւ սոցիալական
բազմաթիվ հարցերի:

Անկախության տարիներին Ազարակը,
որն ի սկզբանե դիտվում էր իբրեւ հան-
քարդյունաբերության բնօրրան, ստացավ
միանգամայն նոր կարգավիճակ ու նոր
առաքելություն: Այն դարձավ երկրի հա-
րավային սահմանադուռն, ինչը շատ կար-
եւոր հանգամանք է հանրապետության
շրջափակման պայմաններում: Ազարակը
դարձավ ֆորպոստ քաղաք՝ բանտված
Նախիջևանի սահմանագծում: Ազարա-
կը դարձավ հաղորդակցության ուղիների
(ավտոմայրուղի, գազատար, էլեկտրա-
հաղորդակցման գծեր) խոշորագույն հան-
գուցակետը Իրան-Հայաստան հարաբե-
րություններում: Այդ հանգամանքն ավելի
ծանրակշիռ կդառնա երկու երկրների
տնտեսական համագործակցության խո-
րացմանը, Արցախյան հիմնախնդրի կար-
գավորմանը զուգահեռ:

Ազարակի ռազմավարական դերը
նկատելի դարձավ հատկապես Արցա-
խյան պատերազմի շրջանում: Պատերազ-
մը ցույց տվեց, որ ազարակցին նաեւ քաջ
զինվոր է ու երկրապահ. յոթ հոգի իրենց
կյանքը զոհաբերեցին հանուն մեր երկրի
պաշտպան եւ անկախության: Արդյուն-
քում՝ նախիջևանյան սահմանը պատե-
րագամ ընթացքում մնաց անառիկ: Պատե-
րագամական օրերին այնտեղ ծնունդ առավ
հայոց ազգային բանակի զորամասերից
մեկը, որ այսօր արժանապատվորեն իր
առաքելությունն է իրականացնում հայ-
ադրբեջանական սահմանի երկարու-
թյամբ:

Ազարակը մեր հանրապետությանն ու
աշխարհին տեսանելի դարձավ 1963թ.
մայիսի 28-ից հետո, երբ գործարկվեց
պղնձամուլիբդենային ձեռնարկությունը:
Դա դարակազմիկ իրադարձություն էր
տարածաշրջանի պատմության մեջ: Այդ
ձեռնարկությունը կյանքի ուղեգիր ստա-
ցավ Խորհրդային Միության բազմաթիվ
ազգերի ու ազգությունների ներկայացու-
ցիչների, մեղրեցիների, ինչպես եւ հան-
րապետության մյուս շրջանների ներկա-
յացուցիչների ջանքերով:

Թեւեւ Ազարակն այսօր ունի նաեւ այլ
առաքելություններ, սակայն նրա լիար-
ժեք ու բարգավաճ կյանքի գլխավոր առ-
հավատաշյան եղել ու մնում է «Ազարակի
պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ըն-
կերությունը, որտեղ այսօր էլ աշխատում
է մոտ 900 մարդ: Եվ եթե այսօր խոսքն
Ազարակի մեծօրյա խնդիրների ու գալիքի
մասին է, ապա դա հնարավոր չէ առայժմ
պատկերացնել առանց կոմբինատի կանո-
նավոր գործունեության: Կոմբինատը կրել
ու դեռեւս կրում է համաշխարհային ֆի-
նանսատնտեսական ճգնաժամի դրոշմը:
Այդ բոլորով հանդերձ կառավարության
ձեռնարկած քայլերի (նկատի ունենք կա-
ռավարության հունիսի 26-ի միստում ձեռ-
նարկությանը հատկացված 14 մլն դոլար
վարկը), «Գեոպրոմայնինգ» խմբի (ընկե-
րության սեփականատերն է) ձեռնարկած
միջոցառումների, գունավոր մետաղնե-
րի միջազգային շուկայում տեղի ունեցող
դրական փոփոխությունների արդյունքում
նկատվում են որոշ տեղաշարժեր ընկերու-
թյան գործերում եւ Ազարակի առօրյայում,
չնայած շատ վաղ է խոսել կայունություն
եւ զարգացման անշրջելիության մասին:

Այդուհանդերձ Ազարակը շատ վաղուց
կարիք ունի դիտվելու ոչ միայն իբրեւ հան-
քարդյունաբերական կենտրոն: Ազարակն
այսօր կրթական, մշակութային, մարզա-
կան, գեղագիտական, հոգեւոր կյանքի
նորոգման կարիք ունի, ինչը կարեւոր է
ապրելու եւ արարելու համար:

Ազարակի քաղաքապետարանը, հու-
րախություն բոլորիս, որոշել է առաջին
անգամ նշել քաղաքի ծննդյան օրը, որ-
քան էլ Ազարակում գործերի դրույթունը
վերջնականապես միֆթարկական չէ, որ-
քան էլ ազարակցիների տրամադրությու-
նը հեռու է տոնակալ լինելուց: Նպատա-
կը, ըստ էության, մեկն է՝ լավատեսություն
եւ վաղվա օրվա հանդեպ հույս մերժել
մարդկանց, իշխանությունների ուշադրու-
թյունը հրավիրել քաղաքի կենսական
խնդիրների վրա, լիովին վերականգնել
քաղաքի գլխավոր գարկերակի՝ կոմբինա-
տի կայուն գործունեությունը:

Ազարակի քաղաքապետարանի կող-
մից սահմանված տոնը՝ «Քաղաքի օրը»,
կարծեք, ավանդական ու ամենամյա դառ-
նալու միտում ունի, ինչը ողջունելի է:

Քաղաքների ծննդյան օրվա, քաղաք-
ների հորեյլաների նշանավորումը, առ-
հասարակ, խոր իմաստ ունի: Այս դեպքում
դա ավելի իմաստալից է, քանզի նշում ենք
Հայաստանի Հանրապետության ամենա-
հարավային քաղաքի, սահմանադուռն եւ
սահմանապահ քաղաքի հորեյլանը:

Յենց այդ հորեյլանի իմաստն ըմբռնե-
լու, գիտակցելու արդյունքում է, որ «Այու-
նյաց երկիրը» թողարկում է իր հորեյլա-
նական համարներից հերթականը, ինչը
կդառնա քաղաքի 60-ամյակի նշանավոր-
ման մի բաղադրիչ:
«Այունյաց երկիր» խմբագրակազմը
շնորհավորում է Ազարակի բնակիչներին
քաղաքի հիմնադրման 60-ամյակի կա-
պակցությամբ: Տոնակալն այս առիթով
կրկին ասում ենք՝ մեր սիրելի հորեյլարը՝
մեր Ազարակը, գուրգուրանքի եւ փայփա-
յանքի կարիք ունի:

Թող Ազարակն ապրի իրապես բարե-
բախտ կյանքով, թող նրա ընթացքը ձուլվի
հավերժին, որ էլ ավելի ամուր լինի երկրի
հարավային սահմանը:

Շնորհավոր ծնունդը, Ազարակ:
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժամանակն է, որ Ագարակն ունենա իր ավանդական փոնը



Լուսանկար՝ Ա. Ավագյանի

■ Համայնք

Ագարակի հոբելյանին պատրաստվելու, քաղաքում կուրսակված հիմնախնդիրների ու դրանց լուծման, ինչպես նաև պաշտոնավարման մեկ փարվա արդյունքների մասին է գրույցը քաղաքապետ Մխիթար Զաքարյանի հետ:

— Պարոն Զաքարյան, շնորհավորանքի ի՞նչ խոսքեր ու մաղթանք ունեք՝ հոբելյանի կապակցությամբ հղելու Ձեր համաքաղաքացիներին:

— Ես դեռ առիթներ կուրսակված շնորհավորելու քաղաքի բնակիչներին ու տարբեր կոլեկտիվների, այդուհանդերձ, այս առիթն օգտագործելով՝ թերթի միջոցով եւս ջերմորեն ու անկեղծությամբ շնորհավորում եմ ագարակցիներին քաղաքի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ: Կարծում եմ՝ սա բոլոր ագարակցիների տոնն է, ուրեմն՝ յուրաքանչյուր ագարակցու ցանկանում եմ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, մշտական աշխատանք: Ցանկանում եմ հաղթահարված տեսնել Ագարակի հիմնախնդիրները, իսկ քաղաքը՝ զարգացած ու հրապուրիչ՝ ապրելու համար: Եվ քանի որ սահմանի մոտ ենք ապրում, մաղթում եմ խաղաղ սահման, որը մեզ համար շատ կարևոր է:

— Առաջին անգամ է նշվում քաղաքի օրը: Ի՞նչպե՞ս ծնվեց այդ գաղափարը, մտադիր էր տոնը ավանդական դարձնել:

— Եթե անկեղծ լինեմք, հենց ավանդական դարձնելու գաղափարը խթանեց, որ նշեմք տոնը... Որովհետև, անկեղծ ասած, թե՛ քաղաքապետարանի, թե՛ քաղաքի տնտեսական հիմք կոմբինատի ներկայիս ֆինանսական վիճակը նկատի ունենալով՝ տարին այնքան էլ տոնական չէ, բայց քանի որ այն հոբելյանական էր, եւ շատ մեծ էր քաղաքի օր ունենալու ցանկությունը, որոշեցինք նշել: Կարծում եմ՝ ժամանակն է, որ Ագարակը ունյայես ունենա իր ավանդական տոները, նշանավոր օրերը: Այն երիտասարդ քաղաք է ու ավանդույթների պակաս ունի, ժամանակն է ձեռնադրելու դրանք եւ նմանվելու Սյունիքի ավելի «տարեց» քաղաքներին: Հիմա նման մի ավանդույթի հիմք ենք դնում՝ հույս ունենալով, որ կդառնա ամենամայնա ու հետագայում ավելի լավ պայմաններում կնշվի այդ օրը... Ցանկանում եմ, որ ագարակցիների համար այն դառնա տոնական օր. ոչ միայն օրացույցով, այլևս սրտանց նշեն այն, կուզենան, որ բնակչությունը ակտիվ մասնակցի տոնին, անկեղծ ուրախանա, իսկ մենք էլ ամեն ինչ կանենք, որ օրն իսկապես տոնի վերածվի: Ի վերջո, ամեն բնակավայր տոնի ժամանակ արտահայտում է նաև իր ու-

րախանալու մշակույթը, ներուժը:

— Ի՞նչ միջոցառումներով եք պատրաստվում նշանավորել Ագարակի 60-ամյակը:

— Հիմնական շեշտը հոկտեմբերի 10-ին դրվելու է ագարակցիների համար տոնախմբություն կազմակերպելու, ուրախ տրամադրություն ապահովելու վրա: Ասեմ, որ միջոցառումների կազմակերպման համար նախօրոք ստեղծել էինք հանձնաժողով:

Ցավոք սրտի, քաղաքի մշակույթի պալատը 2006թ. առաջօր չի գործում, եւ միջոցառումները կլինեն բացօթյա՝ Ագարակի հրապարակում: Համոզություն կլինի, որին կմասնակցեն մարզի բոլոր քաղաքներից հրավիրված գեղարվեստական խմբերը: Հյուրեր կլինեն տարբեր վայրերից, սպասում ենք մարզի դեկավարությանը, Սյունիքի համայնքների ղեկավարներին, քաղաքի երախտավորներին, դրսում ապրող ագարակցիներին եւ այլոց: Համոզությամբ զուգահեռ հրապարակում կկազմակերպվի բացօթյա հյուրասիրություն, որը կլինի Մեղրու տարածաշրջանի համայնքների, տարբեր կազմակերպությունների ուժերով: Տոնախմբությանը կմասնակցի նաև Ագարակում տեղակայված գործմատը, հանդիսավոր զինվորական շքերթ կլինի:

— Պարոն քաղաքապետ, հոբելյանը ոչ միայն ուրախանալու, քաղաքի անցյալն իմաստավորելու, այլև քաղաքի ներկա կացությունն ու հիմնախնդիրները քննարկելու, դրանց լուծման վրա համապատասխան մարմինների ուշադրությունը հրավիրելու առիթ է: Որո՞նք են Ագարակի առջև ծառայած գլխավոր հիմնախնդիրները:

— Խնդիրները բազմաթիվ են, գլխավորները նշեմ: Երբ անկախացումից հետո 77-ում վարչական կառուցվածքի փոփոխություն եղավ, Ագարակն էլ քաղաքի՝ իր արժանի կարգավիճակը ստացավ: Տարիներ են անցել, բայց այստեղ քաղաքին բնորոշ սոցիալական ենթակառուցվածքների բացակայություն կա... Եվ բնակչության պահանջներից լինելով՝ հիմնական ուղղությունը, որով շարժվում են քաղաքապետարանն ու ավագանին, տեղում անհրաժեշտ ենթակառուցվածքներ ձեռնարկելն է: Օրինակներ նշեմ. քաղաքը մինչ օրս չունի հրշեջ խումբ: Չունենք բանկի մասնաճյուղ, իսկ տարածաշրջանի ֆինանսական շրջանառության 80 տոկոսը ձեռնավորվում է Ագարակում, եւ կա դրա կարիքը, հաշվի առնենք նաև բնակչությանը սպասարկելու պահանջը: Չունենք ՔԿԱԳ-ի (ՁԱԳՍ), կադաստրի բաժանումը, նոտարական ծառայություն. այս ամենը ագարակցուն մատուցվում է Մեղրիում: Սոցիալական ծառայությունից օգտվելու համար, որն ամենախոցելի խավին է սպասարկում, ագարակցին 11 կմ է անցնում: Նպաստ ստանալու համար

ոչ մեկ անգամ պիտի Մեղրի հասնի...

Հաջորդը քաղաքում սպորտային կյանքի բացակայությունն է. սպորտի մեր նախկին պատասխանատուների գործունեությունը սահմանափակվել է մարզադահլիճներն ու մարզագույքը սեփականաշնորհելով կամ վաճառելով... Երիտասարդների քաղաք է Ագարակը, բայց այստեղ խնդիր է մշակութային ու ժամանցի կենտրոնների բացակայությունը...

Եվ ամենակարևորը, առանց որի մնացածի լուծումն անհնար է պատկերացնել. այստեղ պետք է բացի կոմբինատից այլընտրանքային աշխատատեղեր ստեղծել: Չբաղվածությամբ խնդիր կա, իսկ վերջերս էլ մոտ 550 մարդ կրճատվեց կոմբինատում, եւ դրանից հետո հարցն ավելի է սրվել: Կարծում եմ՝ իշխանություններն էլ կարող են ուղղորդել, որ կոմբինատը նպատի տեղում իրեն սպասարկող կազմակերպություններ ստեղծելուն, ներքին կոոպերացիային. եթե հնարավոր է որեւէ բան այստեղ արտադրել, որը մի քանի աշխատատեղ կապահովի, ինչո՞ւ չանել...

— Տեսնո՞ւմ եք նշված խնդիրների լուծման ճանապարհը, ի՞նչ քայլեր են կատարվում այդ ուղղությամբ:

— Ոչ միայն տեսնում ենք, այլև քայլ առ քայլ մոտենում ենք դրանք լուծմանը: Եթե չլինեք վրահաս տնտեսական ծգնաժամը, դրանք ավելի արագ լուծում կստանային: Մինչ տոնակատարությունը բացեցինք փրկարար ծառայությունը, որը նաև մերձակա համայնքները կսպասարկի: Տարածքի գերակշիռ մասը վերակառուցվել է կոմբինատի ներդրումով, մի մասն էլ, անհամեստությամբ չլինի, իմ անձնական ներդրումների հաշվին: Դրանով շահագրգռել ենք Արտակարգ իրավիճակների նախարարությանը, որ այստեղ ծառայություն բացի:

Քաղաքում սպորտային կյանքն արթնացնելու ուղղությամբ եւս քայլեր են արվում: Ստեղծել ենք ֆուտբոլային թիմ, որի մարզիչները զուտ է նտուզագանով պարապում են: Բազմիցս դիմել ենք կառավարությանը, եւ վերջապես ընդառաջեցին. ճիշտ է, մեր պահանջներն ամբողջությամբ չբավարարեցին, բայց առաջին քայլն արված է: Հունվարից Քաղաքանի մանկապատանեկան մարզադպրոցում կավելանա երեք հաստիք՝ Ագարակի ծյուրդի, ծանրամարտի եւ ֆուտբոլի մարզիչների համար... Իհարկե, պիտի հասնենք նրան, որ առանձին պետական սպորտդպրոց ունենանք, որը ողջ տարածաշրջանին կծառայի:

Մշակույթի պալատի վերանորոգման աշխատանքները նախագծային փուլում են, առաջիկայում Հայաստանի սոցիալ-դրամների հիմնադրամի միջոցներով կսկսվի դրա վերանորոգումը:

Նախնական պայմանավորվածությամբ կա «Յունիբանկի» հետ, եւ Ագարակում բանկի մասնաճյուղը պիտի բացվի: Եթե այստեղ բանկ գործի, իրատեսական կլինի նաև այլ սոցիալական ենթակառուցվածքների հիմնադրումը, եւ ագարակցին ստիպված չի լինի ամենօրյա հոգսերի համար Մեղրի հասնել: Հնարավոր է կամ ծառայությունների մասնաճյուղ ունենալ, կամ տեղում աշխատակից պահել, կամ շաբաթվա որեւէ օր աշխատող գործուղել Ագարակ: Մասնավաճառ քաղաքապետարանի վերանորոգումից հետո, հնարավորություն ունենք այդ ծառայություններին զրասենյակ տրամադրել: Գիշտ հասկացեք, մեր նպատակն այն չէ, որ ագարակցին չգնա Մեղրի, այլ որ գոնե սոցիալապես անապահով խավը կարողանա իր հարցերը տեղում լուծել:

Ինչ վերաբերում է այլընտրանքային աշխատատեղերին, մի հուսադրող բան արդեն կա. մեկ հեկտար հող է հատկացվել ներդրողին (Մաքսիմ Հակոբյան)՝ պահածոների գործարան կառուցելու համար: Մոտ 1 մլն դոլարի ներդրմամբ մվազագույնը 70 աշխատատեղ կստեղծվի:

Շարունակությունը՝ էջ 12

ԵՆՈՐՆԱԿՈՒՆԵՐՆԵՐ



ՍԵՐՈՅՑ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մեղրիի քաղաքապետ

Այսօր տոն է մեր Ագարակ քաղաքում: Տոն, որ բոլոր ագարակցիներինն է, քանզի շաղախված է նրանց կենսագրությամբ: Տարեդարձ, որը համայնքի բնակիչներին համակել է հպարտության

զգացումով, հայրենի հողի վրա ավելի հաստատուն կանգնելու վճռականությամբ: Տոնական տրամադրություն է համակել նաև մեղրեցիներին, քանզի մենք էլ անմասն չենք եղել թե՛ «նորելուկ»-ի ծննդից, թե՛ նրա մանկության ու հասունության տարեգրությունից:

Անհիշելի ժամանակներից հիշատակվող մեր հնամայն Մեղրիի համար Ագարակ բնակավայրի ծնունդն իրոք հայտնություն էր, որ վերջ դրեց առանձին մարդկանց այն կասկածներին, թե ամայն այդ տարածքն անհնարին է բնակեցնել: Ագարակը ծնվեց մարդկանց հավատից եւ հավաքական ուժից: Մեղրեցիներին աչքի առջև ծլարծակեց, հզորացավ, առնականացավ բնակավայրը, որին շունչ ու լիցք տվող լեռնարդյունաբերական հսկան էր՝ արձնամաղիքեղեմային կոմբինատը: Այն ոչ միայն արձատապես փոխեց մեր տարածաշրջանի տնտեսական դեմքը, ժողովրդագրական պատկերը, այլև ունեցավ իր կենարար ազդեցությունը շրջանի կյանքում: Այսօր Ագարակը սոսկ Սյունյաց աշխարհի հարավային բնակավայրը չէ, այլ մի արդյունաբերական քաղաք, որի հարուստ ընդերքի արտադրանքի իրացումը դուրս է եկել համաշխարհային շուկա եւ ճանաչելի մի փառք բերել նրան:

Ընդամենը վեց տասնամյակի ընթացքում ագարակցին ոչ միայն պղծում ու մոլորեցնեց արտադրեց, նեցուկ կանգնեց տարածաշրջանի տնտեսությանը, այլև արագ տեմպերով գրեթե ամայն տարածքում կառուցեց իր ոստանը՝ քաղաք կանաչների ու վարդերի մեջ: Հայաստանի քարտեզի վրա ավելացավ մի գեղեցկատես քաղաք՝ իր հանրակրթական ու արվեստի դպրոցներով, մանկապարտեզով ու մշակույթի պալատով, առողջապահական կենտրոնով, ծառայություններով, մաքսակետով, պետական սահման ու անվտանգություն պաշտպանող հայոց բաժնակի մի գնդով, եւ որ ամենակարևորն է, նաև ուժեղ, հաստատակամ, կառուցող ու արարող, գործադիր, իր հայրենի եզերքի հոգսերով մտահոգ բնակիչներով:

Որպես բարեկամ, որպես գործընկեր, մեր քաղաքապետարանի, համայնքի ավագանու եւ ազգաբնակչության անունից ջերմորեն շնորհավորում են հոբելյար քաղաքի ղեկավարներին, բոլոր ագարակցիներին համայնքի տոնի առթիվ: Մաղթում են հաջողություններ անձնական կյանքում եւ աշխատանքում:

Թող այսուհետ երբեք չընդհատվի Ագարակի աշխատանքային շիջումը, իսկ ագարակցին միշտ վայելի իր արդար վաստակի բերկարմբը: Թող ծաղկող քաղաքը նորից տուն կանչի իր համայնքի ժամանակավոր հեռացած բնակիչներին:



ԱՍԾ ՎԱՍՊՈՒՐՅԱՆ
«Մեղրիի ճՇՇԶ» ԲԲ ընկերության փնթեք

Այսօր Ագարակի մասին պետք չէ խոսքեր շեռնել, ոչ էլ ինչ-որ ավիտոսանք հայտնել առկա հիմնախնդիրների համար: Ագարակի երթին պիտի գործով մասնակցել, այսօր Ագարակը դրա կարիքն ունի: Ամեն մեկն իր ներկայությամբ պիտի հարստացնի Ագարակի տարեգրությունը, որ առաջ մեզ տանամայակով է չափվում: Ընդհավորում են քաղաքի 60-ամյա հոբելյանը, նրան մաղթում բարգավաճում եւ հարստություն: Ագարակը թեև 60 տարեկան է, բայց երկար ճանապարհ ունի անցնելու: Նաև հպարտ են, որ մեր ձեռնարկությունն էլ այս տարում Ագարակում խնդիրներ է լուծում: Խոսքը մայրուղուց քաղաք մտնող երկու ճանապարհների կառուցման եւ մշակույթի տան նորոգման մասին է, որը կիրականացվի առաջիկայում: Հավաստիացնում են, որ ամեն հնարավորը կանենք բնակավայրի այսօրվա եւ վաղվա հարցերի լուծմանը մեր ակտիվ մասնակցությունն ապահովելու համար: Ընդհանրապես առաջիկայում էլ «Մեղրիի ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ԲԲԸ-ն իր ավանդն է ունենալու համայնքի ենթակառուցվածքների զարգացման գործում:

Ագարակը կառուցել է մեզ են հանձնել մեր պապերը, հայրերը, այսօր այն շենացնելու հերթը մերն է, եւ պարտավոր ենք զավիք սերունդներին հանձնել ավելի բարգավաճ եւ ակնհաճոք քաղաք, ավելի քիչ հիմնախնդիրներով բնակավայր: Ագարակը մեր համարապետության հարավային դարպասն է, որը երկիրը պաշտպանող վահանի նշանակություն ունի, ուստի յուրաքանչյուր պետք է շահագրգիռ լինենք, որ ամուր լինեն այդ դարպասն ու վահանը:

ՌՈՍԱՆ ԽՈՒՌՈՒԽՅ. «Ձգարում ենք լուծել քաղաքային համայնքի առջև ծառայած խնդիրները եւս»

Հարցազրույց «Գեոպրոմայնինգ» խմբի նախագահի հետ՝ Ազարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակի առթիվ

Պարոն Խուրդոյի, վերջին մեկ տարվա դժվարությունները կարծես թե հետեւում են մնացել: Ինչպիսի՞ն է Ձեր գլխավորած խմբի մեջ գտնվող «Ազարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության ներկայիս վիճակը:

— Ըստ իս՝ իրավիճակը բնականոն հուն է մտել, թեև վաղ է մտածել, թե բոլոր դժվարությունները հետեւում են մնացել: Իրականում չի բացառվում, որ շուկայում մետաղների գների վայրկյանային լինելու նորից: Բայց դա բնավ չի խանգարում, որ երախտագիտություն հայտնենք կոմբինատի ղեկավարությանը, որ ամենածանր պահին կարողացավ հաղթահարել հիմնական դժվարությունները: Կոմբինատն այսօր աշխատում է եւ պիտի աշխատի, եւ այն փորձը, որ ձեռք բերեցինք ֆինանսատնտեսական ճգնաժամի օրերին, մեզ վստահություն է ներշնչում, որ կոմբինատն այլեւս չի դադարելու գործել: Երախտագիտ ենք Հայաստանի կառավարությանը՝ ձեռնարկությանը վարկ տրամադրելու համար, որն ուղղվել է կոմբինատի տեխնիկական վերազինմանը, հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցմանը: Երեկ եւ այստեղ եմ ժամանել մասնագետների հետ, պիտի քննարկենք բոլոր առաջարկություններն ու դիտողությունները եւ արդեն ձեռնամուխ լինենք վերակառուցման նախագծային աշխատանքներին:



Ռոման Խուրդոյի, «Գեոպրոմայնինգ» խմբի նախագահ

Եղել է Հինգ «Բելազ» ստացվել է, եւս հինգ 55 տոննանոց «Բելազ» մոնտաժվում են, համապատասխանաբար պիտի ձեռք բերենք ամբարձիչներ: Եվ ամենաազնավարական հարցը, մենք պիտի կենտրոնանանք մի այնպիսի կարելու խնդրի վրա, ինչպիսին մոր ֆաբրիկայի կառուցումն է: Եթե նախորդ թվարկածներս մոտ ապագայի խնդիր է, ապա ֆաբրիկայի կառուցումը երկարաժամկետ հեռանկարի խնդիր է, որը մանրակրկիտ պիտի ուսումնասիրել, արտասահմանցի մասնագետներ ենք ներգրավել այդ ծրագրի իրականացման գործում՝ նորակառույցի տեխնիկատնտեսական հիմնավորումը տալու համար: Ըստ էության՝ մենք այլ տիպի արտադրության հիմք ենք դնում այս ճնդակայրում՝ հանքաքարի մշակումը մոր մակարդակի հասցնելու համար:

— Ազարակ քաղաքը ժամանակին հիմնվել է հանքարդյունաբերական ձեռնարկության հիմնադրման արդյունքում: Այսինքն՝ քաղաքն ու կոմբինատն առանձին, տարանջատ հասկացություններ չեն, դրանք մեկ ամբողջ օրգանիզմի տարբեր բաղադրիչներ են: Հետեւաբար ցանկալի է իմանալ, թե ինչ համագործակցություն կա կոմբինատի սեփականատերերի եւ Ազարակ քաղաքի ղեկավարության միջև:

— Կոմբինատը դատարկ տեղում չի գործում, այլ սոցիալական այն միջավայրում, մարդկային այն փոխհարաբերությունների պայմաններում, որ գոյություն ունեն այսօր: Կոմբինատի աշխատողներն Ազարակի բնակիչներն են, եւ հստակ գիտակցում ենք, որ եղել են ժամանակներ, երբ հնարավորություն չէր ունենալ

օգտակար լինել քաղաքին: Հիմա ձգտում ենք Ազարակի համար որդեկ նշանակալի բան անել, քաղաքի հիմնախնդիրների լուծմանը մասնակից լինել:

— Ի՞նչ կոնկրետ խնդիրներ է լուծել կոմբինատը վերջին շրջանում Ազարակ քաղաքում:

— Մենք, բնականաբար, գիտենք, թե ինչ է նշանակում քաղաք արարող եւ ձեւավորող ձեռնարկություն, ինչ է պայմանավորված դրանով, եւ վեց տասնամյակ ի վեր ինչ դերակատարություն է ունեցել կոմբինատն Ազարակի կառուցապատման գործում: Այսօր էլ հնարավորություն սահմաններում ջանում ենք լուծել քաղաքային համայնքի առջև ծառայած խնդիրները: Դպրոցին ավտոբուս է պետք՝ տրամադրում ենք, վերամբարձ կրունկ է հարկավոր՝ հատկացում ենք, դրանք մանր, ընթացիկ հարցեր են, որոնցից երբեք չենք խուսափում: Բայց լուծում ենք նաեւ ավելի առաջնահերթ, տարողունակ խնդիրներ: Խոսենք կոնկրետ փաստերով. 2008-ին ձեռնարկության միջոցներով նորոգվել է Ազարակի միջնակարգ դպրոցի առաջին հարկն ու ուսուցանողական Ազարակի տեղամասը, ֆինանսավորվել է կոմբինատի աշխատակիցների եւ նրանց հարազատների բուժապատրուկը, Ազարակի հիվանդանոցը, Մեղրի քաղաքի ջրամատակարարումը, անվճար ավտոբուսներ են երթեւեկել Մեղրի-Ազարակ երթուղով եւ այլն: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Մեղրիի սահմանապահ ջրհատին, քաղաքապետարանին, մանկապարտեզին եւ այլն:

Այս օրերին, երբ պատրաստվում են նշելու քաղաքի տո-

նը, քաղաքապետարանին կից ստեղծվել է համեմատողով, որում ներգրավված են նաեւ կոմբինատի աշխատակիցներ: Չմոռանա մշել, որ այս օրերին կոմբինատի միջոցներով շարք է մտել իրչեջ ծառայությունը, որը, իսկապես, մվեր է քաղաքի տոնին: Մի խոսքով, քաղաքի իշխանությունների հետ աշխատանքային նորմալ հարաբերությունների մեջ ենք:

— Որո՞նք են Ազարակ քաղաքի առաջնային լուծում պահանջող հիմնախնդիրները, եւ որքանո՞վ դուք կմասնակցեք դրանց լուծմանը:

— Ես տեսել եմ այն ժամանակը, երբ կոմբինատը չէր աշխատում, եւ համոզվեցի, որ քաղաքի կյանքը սերտորեն կապված է կոմբինատի գործունեության հետ: Տեսեք, թե այս վերջին երկու ամսում, երբ կոմբինատն սկսել է գործել, ինչպես է փոխվել իրավիճակն Ազարակում: Քաղաքում բարեկարգվում են ճանապարհներն ու մայրերը, մշակույթի պալատն է նորոգվում, զգացվում է, որ քաղաքը կենդանացել է եւ բարգավաճում է: Գիտակցում են, որ մեծ գումարներ երբեք չեն ճարվում, բայց քչով էլ կարելի է տեսանելի գործեր անել: Եվ ինչպես մեր նախորդ գոյության մեջ, աշխատանքի ավարտից հետո մարդը ոչ միայն իր այգում ու բանջարանոցում պիտի լինի, այլև ընտանիքով կինոդահլիճ գնա կամ պարզապես զբոսնի բարեկեցիկ պարտեզում, ահա ինչու Ազարակում պիտի զարգացնել ենթակառուցվածքները: Այս ամենի վրա երբեք ժամանակ եւ միջոցներ չեն եղել ուշադրություն դարձնելու համար: Քաղաքում հասակ են առնում մեր աշխատողների երեխաները, ուստի Ազարակում պիտի գործեն մարզապարտեզ, լողավազանը, մարզադաշտը, որ նրանք առողջ եւ առույգ մեծանան: Այդ դեպքում նրանց ծնողները զերծ կլինեն հոգսերից եւ կկատարեն իրենց առջեւ դրված արտադրական խնդիրները:

— Եվ վերջում կցանկանա՞լիք լսել Ձեր շնորհակալությունները Ազարակի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ:

— Ի սրտե շնորհակալում եմ ազարակցիներին քաղաքի հոբելյանի առթիվ: Ազարակը, ըստ էության, երկրասարդ քաղաք է, դեռ ձեւավորվելու եւ սեփական դիմագիծը գտնելու ճանապարհ ունի անցնելու եւ իր տեղը գտնելու Հայաստանի հիասթափեց քաղաքների շարքում: Դա մեծապես պայմանավորված է ազարակցիների ակտիվ դիրքորոշումով, նրանց նվիրվածությամբ: Կուզեի բոլորին մարթել ամուր առողջություն, բարեկեցություն՝ նրանց ընտանիքներին: Այնպես լինի, որ մանուկներն ուրախություն կպարգեն մեծերին, վերջիններս կպարտանան իրենց երեխաներով: Եվ ոչ թե մարդիկ հեռանան Ազարակից, այլ ընդհակառակը, նախկինում հեռացածները վերադառնան իրենց ջջախները:

ՍԱՍՎԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մեղրու մաքսակերպի պետ



Արդեն տասներեք տարի է՝ աշխատում եմ Ազարակում, եւ համոզմունքս այն է, որ քաղաքի ու ազարակցիների կյանքում մաքսակետը մեծ դեր ունի: Մեր կառույցի հետ նրանք շփվում են տարբեր առումներով. մեկը բիզնես ունի, մյուսը բեռնափոխադրումներ է կատարում, մեկ ուրիշն էլ աշխատում է այստեղ: Այսինքն՝ մաքսակետը Ազարակի առօրյայում կա եւ մեծ տեղ է զբաղեցնում: Ինչ վերաբերում է քաղաք-մաքսակետ փոխհարաբերություններին, դրանք միշտ էլ եղել են բարիդրացիական, փոխզիջողական: Նախկին քաղաքապետների եւ մաքսակետի նախկին պետերի հարաբերությունները ձեւավորվել են փոխըմբռնման, փոխօգնության մթնոլորտում, եւ այժմ էլ մեր ու քաղաքի ներկա իշխանությունների համագործակցությունը բարձր մակարդակի վրա է, պատրաստ ենք օգնել մեկմեկու: Համախառն հանդիպում ենք, փորձում համատեղ եւ մեր հնարավորությունների սահմաններում լուծել խնդիրները: Մաքսակետը անմասն չէ քաղաքի կյանքից, միասին նշում ենք տոները, մասնակցում միջոցառումներին: Օգտվելով առիթից՝ շնորհակալում եմ ազարակցիներին քաղաքի տոնի առթիվ, մարդուն բարեկեցություն, խաղաղություն, ցանկանում, որ հարազատ հողում իրենց երջանիկ ու ամուր զգան, իսկ Ազարակն էլ զարգացում ապրի, ծիլ ու ծաղկի:

ՍԵՐՈՒՅՑ ԳՈՒՈՎԻԿԻՆ

«Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն



Ուրախ եմ, որ ճակատագիրն ինձ կապել է Ազարակի հետ, որ այստեղ եկա ապրելու եւ աշխատելու, ղեկավարելու արդյունաբերական հզոր ձեռնարկություն: Անկեղծ մաղթանքներ են հղում բոլորին՝ քաղաքի տոնի առթիվ, ցանկանում երջանկություն, ընտանեկան բարեկեցություն: Կարծում եմ՝ Ազարակը զարգացման հեռանկարներ ունի: Թող այստեղով երկաթուղի անցնի, էլեկտրակայան կառուցվի, կոմբինատն ամխափան գործի, քաղաքը հզորանա, որ մարդիկ հաճույքով այստեղ ապրեն եւ աշխատեն, որ շարունակվի Ազարակի տարեգրությունը:

Ինձ մտահոգում է յուրաքանչյուր ազարակցու ճակատագիրը, առավել քան նրանց, ովքեր աշխատում էին կոմբինատում, բայց հանգամանքների բերումով կործանվեցին: Հավատացնում եմ, որ կոմբինատի արտադրական հզորություններն ընդլայնվելու են, այդ ուղղությամբ ընդգրկում ծրագրեր կան: Իհարկե, նաեւ դժվարություններ կան, բայց ապագային պիտի նայենք լավատեսորեն եւ ապրենք այն անխախտ հավատով, որ բոլոր դժվարությունները հաղթահարելի են:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ
22 սեպտեմբերի 2009թ.

ԱԳԱՐԱԿԻ ՊԱՏՎԱԿՈՐ ԲԱՂԱԲԱՑԻՆ

ՍԱԲԻՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Ինձ համար ամենակարեւորը ժողովրդին ծառայելն էր»



Ճակատագիրը երկու անգամ է Սաբիր Ստեփանյանին «հանդիպեցրել»։ Ագարակի հետ: Կյանքը վաղ հասունացրեց նրան: Հորը՝ ճանաչված ու հարգված փոփոխազգեստ Նիկոլայ Ստեփանյանին, 1938-ին ձերբակալեցին: Ստեփանյան բռնադատվեց իրենց ակիբեների մեջ էին առնում նաև միանգամայն անմեղ մարդկանց: Երկու փարի հետո սիբիրյան հեռուներում նա իր մահկանացուն կնքեց: Թեև փարիներ հետո արդարացվեց, բայց դա քիչ սփոփանք էր ընտանիքի համար, որի հոգսն ընկել էր Թագուհի մոր եւ պապանի Սաբիրի ուսերին:

Ծնվել է Ղազախ ավանում, որտեղ Ստեփանյանների ընտանիքն ավելի վաղ տեղափոխվել էր Ստեփանավանից: Տակավին 14 տարեկան էր, երբ ուղի դրեց Երեւանի լեռնամետալուրգիական տեխնիկումի շենին: 1951-ին, երբ նրա դպրոցական ընկերները նոր-նոր հասունություն վկայական էին ստանում, ինքն արդեն դիպլոմավոր մասնագետ էր եւ գործուղվեց Քաջարան՝ ընդգրկվելով այդտեղի ծննդավայրի պաշարների հաշվարկող երկրաբանների խմբում: Խոստումնալից երկրաբանին մի քանի տարի հետո, ավելի ստույգ՝ 1955-ին, նշանակեցին Ագարակի լեռնահետախուզական արշավախմբի ղեկավար: Այդ ժամանակ Ագարակը փոքրիկ մի գյուղ էր՝ անհրապույր, հողաչեն տնակներով: Ագարակցիների մի մասը մնացել էր երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում, ընտանիքների մի մասը թողել էր իր օջախները, բնավորվել այլ տեղերում: Բայց ովքեր կային, Սաբիրին ընդունեցին հին ծանոթի պես: «Շնորհակալ եմք, նաչալնիկ ջան, որ մեզ մոտ եք եկել, երազում ենք մեր գյուղի վերածնունդը, եթե մեզ մի գործ տաս, մեր երազները կիրականանան»:

«Ագարակցիները բացսիրտ մարդիկ էին, առատաձեռն ու աշխատասեր»,- այդպիսին էր Սաբիրի առաջին տպավորությունը, որ ստացել էր տեղաբնակներից: Մի անգամ նրան դիմեց մի ագարակցի.

- Նաչալնիկ, օգնիր շինանյութով:
- Քո ինչի՞ն է պետք,- հարցնում են:
- Ուզում եմ տուն կառուցել,- պատասխանում է:

- Գիշտ ես անում, բայց եթե կառուցում ես, արի՛ր բանվորական ավան կառուցենք:

Տուն կառուցելու հետ ամռանը մի այլ միջադեպ էլ ընդմիջտ մնացել է հիշողության մեջ: Ագարակ էր եկել հանրապետության ղեկավարը՝ Անտոն Երվանդի Քոչինյանը: Միասին շրջեցին հարստացուցիչ ֆաբրիկայում, այլ արտադրամասերում: Ասաց՝ Անտոն Երվանդիչ, ժողովուրդը շինանյութ է գողանում, ի՞նչ անենք: Հետևեց կշտամբանքը. «Այ տղա, այս քարերի, այս լեռների մեջ մարդ ապրի, տուն էլ չունենա՞, տանում են, թող տանեն, աչքերդ փակիր, չտեսնելու դիր»:

Որոշ ժամանակ անց Սաբիր Ստեփանյանն արձակուրդ է վերցնում եւ որեւէ մեկին ոչինչ

չասելով՝ մեկնում է Վորոնեժ: Հանձնելով բոլոր քննությունները՝ ընդունվում է համալսարան: Դա 1958-ի օգոստոսն էր, իսկ 1962-ին իրականացնում է ճարտարագետ դառնալու նրա երազանքը:

1966-ին կրկին կանչեցին կուսակցության կենտրոն եւ առաջարկեցին վերադառնալ Մեղրիի շրջան՝ Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ, բայց արդեն՝ որպես ձեռնարկության տնօրեն: Նա ընդամենը 33 տարեկան էր: «Ես մեծ հաճույք էի ստանում՝ շփվելով այդ մարդկանց հետ, այդտեղ շատ աշխատասեր մարդիկ են ապրում, հիանալի մասնագետներ, խոնարհվում են նրանց առջեւ: Անբողջ կյանքում նրանք չեն ջնջվելու իմ հիշողությունից», - հետագայում կխոստովանի ծանաչված լեռնագործը: Իսկ Ագարակում աշխատելու տարիներին՝ 1967-ի հունվարից մինչև 1971-ի հունիսը, նրա ղեկավարած ձեռնարկությունը՝ պղնձամուլիբդենային կոմբինատը, հասավ իր արտադրական հզորությանը: Բացի դրանից՝ իրականացվում էին մեծ ծավալի մակաբացման աշխատանքներ: Կոմբինատը ոչ միայն պարբերաբար գերակատարում էր արտադրական պլանները, այլև օգուտների հաշվին կառուցապատվում էր բնակավայրը, մեծ ուշադրություն էր դարձվում քաղաքի ենթակառուցվածքների ստեղծմանը եւ զարգացմանը:

Նախելառաջ կառուցվեց Ագարակ-Օրդուբադ-Երեւան ավտոմայրուղին, ինչը հնարավորություն էր տալիս ոչ միայն երեք ժամում հասնել մայրաքաղաք, այլև իջեցնում էր

ջուրն ուղղակի փրկություն էր: Մի այլ միջադեպ կապված է երաժշտական դպրոց կառուցելու հետ: Ագարակի երեխաները երաժշտական կրթություն ստանալու համար Մեղրի էին գնում: Օրերից մի օր երեխաներին տեղափոխող ավտոբուսը քիչ մնաց՝ գլորվեք Արաքսը: Ճանապարհի հեռավառը փուլ եկավ: Սաբիր Ստեփանյանը մայրաքաղաքում շատ դժներ բախեց, մինչև կարողացավ Ագարակում երաժշտական դպրոց կառուցելու հնարավորություն եւ միջոցներ ստանալ: Նրա ուրախությանը սահման չկար. դպրոցը հանձնվեց ագարակցիներին, որտեղ դեռահասները սովորում էին նվագել թե՛ ժողովրդական, թե՛ դասական գործիքներ: Կառուցվեց նաև հիվանդանոցային համալիրը, Ագարակ բուժան էին գալիս նաև շրջակա գյուղերից: Նրա ջանքերով Ագարակում վեր հանեց Մեծ հայրենականում ընկած ագարակցիների հիշատակը հավերժացնող կոթողը:

Երբ Սաբիր Ստեփանյանը ձեռնամուխ էր լինում կառուցել սոցիալ-մշակութային որեւէ օբյեկտ, կարողանում էր թե՛ միութենական, թե՛ հանրապետական կառավարություններից ֆինանսական միջոցներ հայթայթել: Երբեմն օգտագործում էր անձնական կապերը: Լայն էր նրա շփումների շրջանակը: Մի անգամ՝ 1960-ականների վերջերին, Կարեն Դեմիրճյանը հյուրընկալվում է Սաբիր Ստեփանյանին Ագարակում: Դեմիրճյանը ցանկանում է ծանոթանալ Նախիջեւանի ինքնավար Մարզում հայկական մշակութային կոթողների վիճակին: Հանդիպեցին Ազուլիս տանող ճանապարհին: Արդեթեւա-



Հայաստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատում

ներկրվող ապարների ինքնարժեքը: Սաբիր Ստեփանյանի ջանքերով Ագարակում շարք մտավ արոժարտիկական ուսումնարանը՝ երկրաբանական եւ մետալուրգիական թեթու-մով: Կոմբինատին անհրաժեշտ մասնագետները պատրաստվում էին տեղում: Աշխատելով Ագարակում՝ ձեռնարկության տնօրենը վաղուց մտնում էր դպրոցական շենք կառուցելու մասին. մտախղացումն իրականություն դարձավ կարճ ժամանակում: 1040 աշակերտական տեղով դպրոցը որոշեցին կոչել Եղիշե Զարեցի անվան, եւ միտք հղացավ կրթօջախի առջեւ տեղադրել մեծանուն բանաստեղծի կիսանդրին: Այս հարցով մեկնեց Երեւան եւ անձամբ դիմեց ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանին, որի հետ մտերմություն ուներ եւ բարձր էր գնահատում նրա արվեստը: Քանոնակագրորդ կիսանդրին ստեղծեց կարճ ժամանակում, եւ հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ բանաստեղծի գրանիտ կիսանդրու բացումը:

Երբ գրուցում էի անվանի մարդու հետ, անթաքույց հպարտությամբ պատմեց, թե ինչպես Ագարակում կառուցեց պոմպակայան, որը ոռոգման ջուրը մղում էր հենց Արաքսից: Ագարակի քարտու եւ պապակ հողի համար այդ

ցիների վերաբերմունքը հայ ճարտարապետական մշակույթի արժեքների հանդեպ, առանց չափազանցության, վանդալիզմ եւ բարբարոսություն կարելի էր որակել: Մարմարե եւ գրանիտե հրաշք կոթողները ծառայում էին որպես սովորական շինաքար: Կարեն Սերոբյանի դուր եկան երկու խաչքար եւ մի մահարձան, որոնք խնդրեց տեղափոխել Երեւան: Սաբիր Ստեփանյանից ամիսներ տեւող բանակցություններ պահանջվեցին այդ կոթողների տեղափոխման թույլտվությունը ստանալու համար: Սա այդպես եզակի խաչքարերը եւ տպամանքարը փրկվեցին ոչնչացումից եւ այժմ պահպանվում են Սարդարապատի հուշահամալիրում:

Սաբիր Ստեփանյանի գործն աննկատ չմնաց. 1969թ. արժանացավ հանրապետության վաստակավոր երկրաբանի կոչման, թեև ընդամենը 36 տարեկան էր, մեկ տարի առաջ պարգևատրվել էր «Պետական սահմանների գերազանց պահպանության համար» մեդալով՝ սահմանամերձ Ագարակում ենթակառուցվածքներ ստեղծելու եւ զարգացնելու համար: Ագարակում նրա ծավալած լեռնահանքային եւ կառուցապատման գործունեությունը գնահատվեց Աշխատանքային կարմիր դրոշմ շքանշանով:

Նույն թվականին արտադրական բարձր ցուցանիշների համար Ագարակի պղնձամուլիբդենային եւս արժանացավ մեծ շքանշանի:

1971-ին հանրապետության ղեկավարությունը նրան գործուղեց Յրազարան՝ ստանձնելու լեռնաքիմիական կոմբինատի տնօրենի պաշտոնը: «Կյանքը, աշխատանքը, մարդիկ» հուշագրության մեջ (հրատարակված 2002 թվականին) այդ օրերի մասին գրում է. «Ագարակում կոմբինատի տնօրենի պաշտոնում երաշխավորեցի գլխավոր ինժեներ Յուրի Սուքիասյանին: Գնում էի Յրազարան եւ մտածում Ագարակի մասին: Այնտեղ ես թողել էի մի կուլտիվ՝ ինձ մոտ ու հարազատ: Երկարուձիգ տասը տարի նվիրաբերեցի այդ ավանին, այդ ծննդավայրին. կյանքիս լավագույն տարիները, ողջ երիտասարդությունս տվել եմ Ագարակին: Դա ոչ թե կարոտախտ էր, այլ այդուր գագանուց՝ կապված սիրելի մերձավորից բաժանման հետ: Անես հրաժեշտ էի տալիս երիտասարդությանը եւ ուղե դնում մոր, անծանոթ կյանքի շենին: Ագարակը հավերժ դաջվել է հիշողությանս մեջ՝ որպես կյանքիս լավագույն տարիներ, պայքարի եւ սիրագործության տարիներ: Միշտ հոգով ու սրտով ես այնտեղ էի՝ Ագարակում»:

1977-ին հետեւեց նոր նշանակում. այս անգամ ղեկավարեց «Հայուսկի» միավորումը եւ աշխատեց վեց երկար ու հազեցած տարի: 1983-1986 թվականներին հանրապետության գազիֆիկացիայի պետական կոմիտեի նախագահն էր, այնուհետեւ ՀԿԿ կենտրոնի բյուրոյի որոշմամբ ստանձնեց հանրապետության պետմատակարարման պետական կոմիտեի նախագահի պաշտոնը, ինչը նշանակում էր նաև Նախարարների խորհրդի անդամ լինել: Անուրանալի են Սաբիր Նիկոլայի ծառայությունները սպիտակյան երկարաժամի հետեւանքները վերացնելու գործում: Իր անձնական առաջին օրերի շնորհիվ աղետի գոտի ներկրվեցին ծածկոցներ, վրաններ, մեքենասարքավորումներ, այն ամենը, ինչն անհրաժեշտ էր աղետյալ Հայաստանին: Իսկ նորանկախ Հայաստանի առաջին օրերին, երբ հանրապետությունը ընդամենը մեկ օրվա հացի պաշար ուներ, Հայաստանի վարչապետ Վազգեն Մանուկյանի առաջարկով մեկնեց Ղազախստան, եւ կնճռոտ խնդիրը դարձյալ նրա անձնական կապերի միջոցով լուծվեց:

Եվ այս ամենից հետո ՀՀԿ-ական ֆունկցիոներները պետմատակարարման կոմիտեի նախագահի պաշտոնում ցանկացան տեսնել իրենց մարդուն: Այն, ինչը չգնահատեցին նորանկախ Հայաստանի իշխանավորները, գնահատեց ԽՍՀՄ կառավարությունը, որի որոշմամբ 1991 թվականի հունվարի 30-ին նշանակվեց Թուրքիայում առևտրի ներկայացուցչության նախագահի առաջին տեղակալի պաշտոնում: Այսպես սկսվեց նրա դիվանագիտական աշխատանքը, որ տեւեց մեկուկես տարի: Եվս հինգ տարի Մոսկվայում Հայաստանի ցուցաբերվող օգնության հանձնաժողովի նախագահի տեղակալն էր: Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում բեղուն գործունեություն է ծավալել անձնական բազմաբնույթ կապեր ստեղծել պետական գործիչների եւ գործարարների հետ՝ ի շահ Հայաստանի Հանրապետության:

Ինչպես ինքն է խոստովանում, սովորել է եւ պետական գործիչ, եւ շարքային քաղաքացուց: Բայց հիշողության մեջ ընդմիջտ մնացել է զանգեզուրցի շինականը, որի խրճիթում երկրաբաններով պատսպարվել էին լեռնային հողմից: Ստատո էին թոնրի շուրջ, որում թե՛ կրակի մեջ խորվվում էր կարտոֆիլը: Հետաքրքրությամբ լսում էին ծերունու խորհրդածությունները: Հյուրասիրեց իրենց՝ ինչով կարող էր եւ սասց. «Դուք, տղերք, սարերում ոսկի եք որոնում, իսկ գիտե՛ք, որ ոսկին հենց մարդիկ են»:

... Իր բովանդակալից կյանքում պարգևներ եւ կոչումներ քիչ չի ստացել, բայց այդ ամենից բարձրը, ինչպես խոստովանում է վերը հիշատակված հուշերի գրքում, Սաբիր Ստեփանյանը համարում է «Ագարակի պատվավոր քաղաքացի» կոչումը, որ նրան շնորհվել է 2000 թվականին Ագարակում իր աշխատանքային գործունեությունն ավարտելուց մոտ երեք տասնամյակ հետո:

ՎԱՀՐԱՍ ՕՐԵԵՆՆԱՆ

» ԶՈՐԱՄԱՍ

Զինվորականությունն այլեւս Ագարակի անքակտելի մասն է

Չորամասի առօրյան

ՀՀ ՊՆ N գործառնալ տեղակայված է Այունիքի մարզի Ագարակ քաղաքում, համարվում է մարտական հենակետեր ունեցող զորամաս, գտնվում է մշտական մարտական պատրաստակառության ուսուցման անենօրյա գործունեության մեջ: Գնդի հիմնական խնդիրն է պաշտպանել, անառիկ ու անվտանգ պահել երկրի հարավարեւելյան սահմանը եւ կատարել վերադաս հրամանատարության կողմից տրված մարտական առաջադրանքները: Համաձայն հաստատված կարգացուցակի՝ զորամասի անձնակազմի ծառայողական օրը սկսվում է ժամը 6:30 «վերկացով», այնուհետեւ անցկացվում է մարմնամարզություն, տարածքի, գործառնի եւ անձնական մաքրություն, լինում է նախաճաշ: Երկուշաբթիից ուրբաթ օրերը ժամը 9:00-14:00 կազմակերպվում են մարտական պատրաստակառության պարամունքներ տարբեր առարկաներից: Անձնակազմի հետճաշյա հանգստից հետո կազմակերպվում է խնամիկայի եւ սպառազինության խնամք: Այնուհետեւ տրվում է ինքնապատրաստության ժամ, որից հետո կազմակերպվում են դաստիարակչական, իրավական եւ սպորտային զանգվածային միջոցառումներ: Ընթրիքից հետո անձնակազմին հատկացվում է ազատ ժամանակ անձնական կարիքների համար, այնուհետեւ լինում է հեռուստահաղորդումների դիտում, երեկոյան զբոսանք, երեկոյան անվանական, իսկ ժամը 22:00-ին՝ ընդ: Յուրաքանչյուր շաբաթ օր՝ մինչեւ ճաշը, անձնակազմը զբաղվում է տնտեսական աշխատանքներով, իսկ ճաշից հետո անձնական սանիտարիայի գիտնիկ բնույթի գործեր են անում: Կիրակի օրերին իրականացվում են պլանավորված հանգստի եւ ժամանցային միջոցառումներ. զորամասում կազմակերպվում են համերգներ, վիկտորինաներ, սպորտային խաղեր, հանդիպումներ անվանի մարդկանց հետ, կինոդիտումներ, գործում է ռադիոհանգույցը, պատրաստվում են հաղորդումներ եւ հեռարձակվում ողջ զորամասում, իսկ լավագույն գինվորներին տրվում են ազատ-արձակուրդներ: Յուրաքանչյուր ամսվա վերջին կիրակի օրը կազմակերպվում է «բաց դռների օր», որի ընթացքում պարտադիր ժամկետային գինծառայողների ծնողներն ու հարազատներն այցելում են զորամաս, հանդիպում իրենց զավակներին եւ նրանց անմիջական հրամանատարների հետ, ծանոթանում զորամասի կենցաղային պայմաններին եւ առօրյային:

Անենակարելուր ամենամայա միջոցառումը, որ իրականացվում է զորամասի անձնակազմի ծափահարությունների ներքո, մարտական հենակետերում 15-օրյա հերթապահություն իրականացնող անձնակազմին ճանապարհելու եւ ընդունելու արարողությունն է: Զորամասում առկա է կայացած եւ առողջ գինվորական կղզեկտիվ, որտեղ բացակայում են այնպիսի արատավոր երեւույթներ, ինչպիսիք են, այսպես կոչված, «դեղովի շինան» եւ «հեղինակությունները»: Անձնակազմի բարոյա-հոգեբանական վիճակը կայուն է: Զորամասում խստորեն պահպանվում են գինծառայողի սոցիալ-իրավա-

ՅՆՈՐԱՄԱՍ

ՎԻՉԵՆ ԱՎԱԳՅԱԼ

Գնդապետ, N գորամասի հրամանատար

Հարզելի ագարակցիներ, ես նույնպես ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ սիրելի քաղաքի 60-ամյա տարեդարձի առթիվ: Բացի պղնձի ու մոլիբդենի խտանյութ արտադրելուց, սերունդներ կրթելուց, շեն տուն ու օջախ պահելուց, դուք նաեւ շատ լավ սահմանապահներ եք: Դարեր ի վեր թուրքի աչքը մեր հողի վրա է եղել, բայց մեր բազկի ուժից, համախմբվածությամբ միշտ էլ սարսափել եւ հետ է կանգնել իր ծրագրերից, վկան երբեք ասպատակություններ չտեսած այս հողն է:

Թեեւ շատ կարճ ժամանակ է, ինչ եւս Ագարակում են ապրում ու ծառայում, բայց արդեն ճանաչում են շատերին եւ համոզվել են, որ բոլորդ ի խոսքի ու գործի մարդիկ են: Ինձ հիացրել է ձեր համերաշխությունը, ձեր տունը՝ Ագարակը, շեն ու գեղեցիկ տեսնելու ջանքերն ու ծրագրերը: Այս հողը հերոս որդիներ շատ է ծնել, որոնցից նաեւ հանուն հայրենյաց նահատակներ կան: Նրանց քարե ներկայությունից անգամ սարսափած է թշնամին: Կցանկանամ, որ այս հողի ժողովրդի ազատատենչ ոգին միշտ արթուն մնա, իսկ մենք՝ որպես գինվորներ, ամեն ինչ կանենք, որ միշտ խաղաղ բացվեն առավոտներն այս ջքնաղ երկրամասում:

Կրկին շնորհավորում եմ ձեզ քաղաքի հորեւյնի կապակցությամբ: Եղեք միշտ այդպես հպարտ, ամուր: Համոզված եմ, որ համաշխարհային ճանաչում եւ բարի համբավ ունեցող Ագարակը պատմության մեջ դեռ կզրի նոր, փայլուն էջեր:

Մնա՛ք ջո հերոս որդիների նման հավերժ, նաեւ անառիկ, Ագարակ, եւ բախտ ունեցիր նշելու ջո ծննդյան նորանոր հորեւյններ:



... Երբ դեռ նոր էր կազմավորվում զորամասը:

կան իրավունքները, արձակուրդները տրվում են՝ բացառապես հաշվի առնելով գինվորների ծառայողական բնութագրերը, իսկ առանձին դեպքերում նաեւ պայմանավորված ընտանեկան հանգամանքներով:

Գնդի հրամանատարներ

ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհի» անվան առանձին մոտոհրաձգային գնդի առաջին հրամանատարն է եղել «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանի ասպետ, գնդապետ Ղեւոնդ Յովհաննիսյանը, այնուհետեւ գնդի հրամանատարն են եղել մայր Սերյոժա Ստեփանյանը, գնդապետ Համլետ Թանգսյանը, գնդապետ Արիս Բրուտյանը, գնդապետ Վահան Վարդանյանը: 2009 թվականի հունվարի 19-ից մինչ օրս գնդի հրամանատարն է գնդապետ Վիգեն Ավագյանը: Գնդի շարքերում ծառայել են նաեւ այնպիսի սպաներ, որոնք այսօր զբաղեցնում են բարձր եւ պատվավոր պաշտոններ:

«Գարեգին Նժդեհի» անվան գնդի մարտական դրոշի դասնություն

1995թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ նախագահի կողմից՝ որպես գինվորական պատվի, փառքի եւ արիության խորհրդանիշ, հիշեցում զորամասի յուրաքանչյուր գինծառայողի՝ իր սրբազան պարտքի՝ հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, այն քաջաբար եւ հնտորեն պաշտպանելու, հայրենի հողի յուրաքանչյուր թիզը թշնամուց պաշտպանելու համար զորամասին հանձնվել է մարտական դրոշ: 2001թ. հուլիսի 19-ին ՀՀ նախագահի թիվ 895 հրամանագրով զորամասը անվանակոչվել է «Սեժն Գարեգին Նժդեհի» անվամբ:

«Գարեգին Նժդեհի» անվան առանձին մոտոհրաձգային գնդի մարտիկներից երեք գինծառայող պարզեատրվել է «Մարտական խաչ 2-րդ աստիճանի», երկու գինծառայող՝ ԼԳՀ «Արիության», հինգ գինծառայող՝ «Մարտական ծառայության» մեդալներով:

ՀՀ պաշտպանության նախարարի կողմից սեպտեմբերի 2-ը հաստատվել է որպես գնդի կազմավորման օր:

Գնդի մարտական ուղին

«Գարեգին Նժդեհի» անվան զորամասը 1991-1994թթ. ընթացքում իր մարտական ուղին է անցել եւ մասնակցել ՀՀ սահմանամերձ

շրջանների պաշտպանական եւ ԼԳՀ որոշ տարածքների ազատագրական մարտական գործողություններին. 1991թ. օգոստոսի 8-ին Նյուվադի գյուղի ազատագրում, 1992թ. օգոստոսի 16-ից 17-ը Խոշլիդաղի ազատագրում, 1993թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Բարթազ սարի ազատագրում:

1994թ. հունվարից մինչեւ մայիս ընկած ժամանակահատվածում գունդը մասնակցել է Արցախի պաշտպանության համար նվաճված լայնածավալ մարտական գործողություններին՝ Հորադիզի, Ֆիզուլիի եւ Աղդամի ուղղությամբ:

ՀՀ սահմանների պաշտպանության եւ ԼԳՀ տարածքի ազատագրման համար նվաճված մարտական գործողությունների ժամանակ իրենց կյանքն է նվիրաբերել 48 մարտիկ, իսկ վիրավորների թիվը գերազանցել է 80-ը:

Պատանի գնդի սարեգրությունից

1988 թվականն էր, արցախյան հերոսամարտի նախաշեմին: Կրակոցներ մարդատար գնացքների վրա, հարձակումներ սահմաններում, հեռահար ականներից գնդակոծություններ, մարդագողության եւ անասնազողության դեպքեր: Վախ, խուճապ, հայրենի հողի վրա ապրելու մտավախություն: Սեփական տան պատիվը պաշտպանելու գործին առաջինը ձեռնամուխ եղան մի խումբ հայրենասեր տղաներ՝ ոմանք որսորդական գեներով, ոմանք էլ անգեմ, ով ինչով կարող էր, բայց կամքով ու անվախ: Ստեղծվեցին առաջին ինքնապաշտպանական ջոկատները: Ամեն ինչ կատարվում էր արագ, հապճեպ, զգացվում էր ռազմական կրթություն ունեցող գինվորականների պակաս: Այդ ծանր բեռն իր ուսերին առավ հայրենասեր ու անվախ մի երիտասարդ՝ Ղեւոնդ Յովհաննիսյանը, որի բազկի ուժից, անվերջ կրակահերթերից, անվախությունից, անգամ անուցից սարսափած էր թշնամին: Նրանց միացան շատերը, ում համար թանկ էր հայրենի տունն ու օջախը: Անհրաժեշտություն էր դարձել ստեղծել գինվորական գունդ: Տղաները աշխատում էին գիշեր ու ցերեկ: Հարկ էր գրեթե ոչնչից ստեղծել մի այնպիսի կառույց, որն ի գործու լինելու իրականացնելու տարածաշրջանի սահմանների պաշտպանության խնդիրները: Եվ այսպես 1993թ. հիմք դրվեց վաշտի ձեւավորմանը: Ղեւոնդ Յովհաննիսյանի ղեկավարությամբ հայրենա-

սեր տղաները ներսից-դրսից ձեռք բերեցին տեխնիկա, գեներ, շինանյութ: Ով ինչով կարողանում էր, օգնում էր: Հրատապ էր դարձել սահմանային բարձր դիրքերում զորանոցների կառուցումը, ձմռանը դիմակայելու պայմանների ստեղծումը: Սահմանների պաշտպանության գործին ձեռնամուխ եղան բոլորը, ողջ բնակչությունը:

Որոշ ժամանակ անց ֆիզալիներին փոխարինելու եկան ռազմական կրթություն ստացած նորաթուխ ու նաեւ փորձառու սպաներ, ստեղծվեց աշխատակազմ, հաստատվեց իսկական ռազմական կարգապահություն, վերանորոգվեց, ընդարձակվեց զորանոցը, մարզահամալիրը, բարեկարգվեց, կանաչապատվեց տարածքը: Ագարակցիների ու մեղրեցիների վճռականությամբ ու աջակցությամբ ստեղծվեց մի գունդ, որը հանրապետությունում առաջինն իրավունք ստացավ ունենալու մարտական դրոշ: Գունդը ծաղկում ու փոխվում էր օր օրի, հարստանում նյութատեխնիկական բազայով, Նժդեհի քարե ներկայությամբ ու նկարներով: Գնալով բարձրանում էր տղաների մարտական ոգին, որն առավել դրսեւորվեց 1994թ. օգոստոսյան այն օրիսական ժամանակաշրջանում, երբ թշնամու հաջողվել էր կարճ ժամանակով իր կրակակետերի հսկողության տակ պահել Սեղիքի քաղաքը: Թեեւ ժամեր տեւող դժվարին մարտերից հետո դիրքերը դարձավ մեր հսկողության տակ անցան, բայց այդ օպերացիային, ցավոք, գոհ գնացին երկու հայրենասեր երիտասարդներ՝ Գեորգը եւ Հրաչը: Գնդի տղաների հետախուզական ճիշտ գործողությունների արդյունքում էր, որ հնարավոր դարձավ ազատել «Երեւան-Կապան» գնացքի մի քանի տասնյակ գերված ուղեւորների: Կարելի է շատ բան թվարկել գնդի հերոսական տարեգրությունից, բայց բավարարվենք՝ նշելով, որ այս տղաների խիզախության շնորհիվ էր, որ անառիկ մնացին մեր լեռները: Ասենք նաեւ, որ այդ տղաների անձնուրացությունից ու հերոսությունից ծնվեց ժողովրդի հավատը, սերը գնդի նկատմամբ, սերտացավ գունդ-համայնք կապը, իսկ գունդն այսօր ամուր թելերով կապված է Ագարակի եւ Սեղրու կենսագրությամբ: Գունդ, որը բարի ճանաչում ունի Հայոց բանակում:

Էջը պատրաստեց
ՍԵՆՈՒՆ ԳՈՒՅԱՆԸ

Ավանդույթի հիմքը այս երիտասարդների օրոք է դրվում

■ Կլոր սեղան

Ազարակցի երիտասարդը սիրում է իր քաղաքը եւ ուզում է այսօրեղ ապրել, բայց դրա համար նրան գոնե մի քանի պայման է պետք՝ աշխատանք, բնակ-ֆոնդի ավելացում, գնահատանք ու առաջխաղացման ճանապարհ, մասնագիտության մեջ ինքնադրստեղծում, ժամանակի հնարավորություններ... Սրանք էին հիմնական հարցերը, որ նրանցից մի քանիսը բարձրագրին Ազարակում մեր կազմակերպած կլոր սեղանի ժամանակ: Իսկ նրանց՝ հայրենի քաղաքում իրենց լավ զգալու հանգամանքը ավելի քան կարելու է, որովհետեւ Ազարակը մարզի այլ բնակավայրերի համեմատ բնակչության միջին փարիքով երիտասարդ քաղաք է:

Մեր գրուցակիցները բոլորն էլ մայրաքաղաքում բուռն են ավարտել եւ ի տարբերություն մարզի իրենց շատ հասակակիցների՝ վերադարձել հայրենի քաղաք...



Արամ Ավակյանը

Երեսուներեք ար-փիհն Ասատրյանը մասնագիտությամբ քիմիկոս է, ավարտել է նաեւ ասպիրանտուրան, աշխատում է կոմբինատի լաբորատորիայում: «Շատ եմ սիրում Ազարակը, եւ կուզեի՝ այնպիսի փոփոխություններ լինեին այստեղ, որ յուրաքանչյուր լավ մասնագետ հետ գար, – ասում է նա: – Կոմբինատի առկայությամբ պայմանավորված սպեցիֆիկ մասնագիտություններ կան, ու քիմիկոսի մասնագիտությունն էլ ընտրեցի՝ մտածելով, որ դրա անհրաժեշտությունը կա այստեղ»: Այդուհանդերձ, Արամին ցանկանում է, որ գնահատեն երիտասարդ կադրերին, առաջխաղացման հնարավորություն լինի: «Կրթությունն այսօր այնպիսի մակարդակ ունի, որ բուհավարտներն ավելի առաջադեմ մտքերով են զալիս, բայց ավագները դժվար են ընդունում նրանց նոր մտքերը, առաջարկները: Պատրաստվում են թեկնածուական պաշտպանել, բայց ինձ համար առաջընթացի շանս չեմ տեսնում, միայն՝ լճացում...»:



Արամ Ավակյանի

Քսանյոթամյա Միեր Պետրոսյանը կոմբինատում տնտեսագետ է աշխատում, մասնագիտությամբ տնտեսագետ-իրավաբան է: Նշում է, որ բուհն ավարտելուց հետո ավելի շատ մաքսիմալիստական մոտեցում է ունեցել. «Ոնց թե, սովորեմ ու մնամ երես-

ուն... Զէ, պետք է գնամ Ազարակ: Գետո հասկացա, որ իսկապես սխալվել եմ...»: Նա նույնպես փաստում է, որ այստեղ առաջխաղացման հնարավորություն չկա: «Գիտե՞ք, այնքան արմատացած բաներ կան մարդկանց մեջ. ավագը վախճնում է, թե երիտասարդը կզրավի իր տեղը... Իսկ եթե նրանք էլ փորձեն լսել իրենցից ջանելիք, միասին ընդհանուր հայտարարի գան, ամեն ինչ հեշտ կլուծվի»:

Երիտասարդները նշում են, որ իրենց ոչ թե «աթոռ» է հետաքրքրում, այլ աշխատանքի լավ արդյունքը, իրենց գնահատելը, միջոցառումներն էլ տեսնում են, որ իրենց առաջարկն ընդունվել է, բայց չի երևում, թե դրա հեղինակն ով է... Դա հիասթափություններ է բերում, եւ մի օր բոլորն էլ դեպի դուրս են ձգտում:



Արամ Ավակյանի

Երեսուներեքամյա Լուսինե Գեորգյանը տնտեսագիտական կրթություն ունի, 14 տարի կոմբինատում է աշխատել, կրճատվել ու հիմա քաղաքապետարանում է: Նշում է, թե արդեն չի մտածում՝ ճիշտ էր հետ գալը, թե ոչ, հարմարվել է, իսկ 1994-ին, երբ ավարտեց բուհը, իրեն ավելի շատ կարող էր հայրենի քաղաք վերադարձրեց՝ չնայած ինստիտուտում մնալու առաջարկ կար:



Արամ Ավակյանի

Մասնագիտությամբ մետալուրգ քսանութամյա Գրիգորյան Արամյանը (նաեւ ավագանու անդամ է) հարկային տեսչությունում է աշխատում. «Լավ կինի՝ ամեն մարդ իր հայրենիքում ապրի, բայց դրա համար ինչ-որ չափով պայմաններ են պետք: Ավարտելուց հետո կոմբինատում էի աշխատում՝ իմ մասնագիտությամբ, նորմալ էր, ինքս ինձ իմ տեղում էի զգում, հեռանկար էի տեսնում, բայց հետո փոխվեցին պայմանները...», – իր քայլն է պատճառաբանում Գրիգորյանը:

Երիտասարդները նշում են, որ Ազարակում իրենց հասակակիցների մեջ ավելի շատ քաղաք վերադառնալու, քան հեռանալու միտումը կա, բայց իհարկե, հիմնական ձգող գործոնը կոմբինատն է... Վերջին մեկ տարվա իրավիճակը միգրացիայի տրամադրություններ ստեղծի:

Ի դեպ, ազարակցի երիտասարդները բնավորության, հոգեկերտվածքի, մտածելակերպի տարբերություն են զգում ոչ միայն իրենց եւ այլ տարածաշրջանների երիտասարդների, այլեւ իրենց եւ մերերեցիների միջև: Նշում են, որ Ազարակում երիտասարդները չնայած բավականին առաջադեմ են, այնքան էլ ազատ չեն

չփնտրում առումով: Դա բնական են համարում, ավանդական միջավայրի հետեւանք, որ բնորոշ է հատկապես փոքր բնակավայրերին: Իսկ չի՞ հաջողվում դրսույն կրթված երիտասարդներին իրենց միջավայրում որեւէ բան փոխել... «Մեր մեջ փոխում ենք, բայց շրջապատում երեւի դժվար է», – կարծում է Լուսինեն: Արամին ասելով՝ կա որոշակի փոփոխություն, թե չէ՝ դժվար կլինի այստեղ ապրելը. «Կա մի միջավայր, կան մարդիկ, որ հասկանում են քեզ, ընդունում հայացքներ, մտածում քեզ պես»: Երիտասարդների համոզմամբ ազարակցուն նաեւ բնորոշ է շիտակությունը, պարզությունը, որը դրսույն հարաբերվելիս իրենց շատ է խանգարում:

Ձրուցակիցներին համար առաջյան հիմնականում ամփոփվում է աշխատանքի վայրում ու տանը... Ցավով նշում են ժամանցի հնարավորությունների բացակայության մասին: Կան սրճարաններ, կա զբոսայգի, որտեղ երեկոները հավաքվում են, բայց նաեւ հոգեւորի, մշակութային միջոցառումների պահանջ կա... «Մենք երեսն ենք հասնում հատուկ համերգ կամ թատրոն զնալու համար, – ասում է Միերը, – միջոցառումներ են, որ իմ մանկության տարիներին Ազարակում կար այդ հնարավորությունը»:

Գրիգորյանը փաստում է սպորտով զբաղվելու պայմանների բացակայության մասին, դա եւ ժամանց է, եւ առողջ ապրելակերպ, լողավազանի, մարզադահլիճների կարիք կա: Երիտասարդները, նույնիսկ հայտնի կարգախոսը հիշելով, կատակեցին, թե «այստեղ առողջ հոգի կա, բայց առողջ մարմնում չէ...»:

Գաջորդ ամենալուրջ ու մտահոգիչ խնդիրը, որի մասին բարձրաձայնեցին մեր գրուցակիցները, բնակարանների պակասն է: Նոր ստեղծվող ընտանքիների համար դա լուրջ հարց է դարձել. կառուցելու հնարավորություն չունեն, ազատ բնակֆոնդ չկա... Երիտասարդների համար դա կամ խոչընդոտ է դառնում անուսուրբան համար, կամ ամուսնանում ու «իրար զլխի» են ապրում, կամ էլ՝ վարձով: Իսկ դրսից Ազարակ եկած աշխատուժի պատճառով վարձով բնակարանների վճարներն էլ տեղի համար շատ էին թանկացել...

Պետական նոր բնակարանաշինության հույս երիտասարդները, իհարկե, չունեն, ելքն այն են համարում, որ նորմալ վարձատրվող աշխատանք ունենան ու ի վիճակի լինեն անհատական տներ կառուցել:

Ազարակում այդպես էլ դժվար է ձեւավորվում «ազարակցի» հասկացությունը, եւ մարդիկ շարունակում են իրենց մայրենիների բնակավայրով կոչել՝ տաշտունեցի, կարծեւանցի, մեղրեցի եւ այլն... Ինչո՞ւ կա այս սահմանագատումը. քաղաքապետ Միսիթար Զաքարյանը, օրինակ, կարծում է, որ սա բոլոր երիտասարդ բնակավայրերին բնորոշ է, նաեւ փաստում, որ

վակուում կա. «Մարդ պիտի մի վայր սիրի, չէ՞, եթե Ազարակը չի սիրում, պիտի մայրենիների բնակավայրը սիրի... Իսկ եթե Ազարակը սիրի, չի մտածի, թե իր հայրը որտեղից է եկել: Կարծում եմ՝ այս տոնակատարությունն էլ ավելի կմոտեցնի ազարակցիներին միմյանց, կնպաստի «ազարակցի» բառի արմատավորմանը»:

Երիտասարդներն ավելի հետաքրքիր փաստ են նշում. «Դրսում ասում ենք՝ մեղրեցի ենք, մարզում՝ ազարակցի, Ազարակում արդեն սկսում ենք սահմանագատել՝ ով որտեղացի է...»: Նրանք տեսնում են, սակայն, որ սա էլ վերանում է, եւ իրենցից հետո եկող սերունդն արդեն սկսել է իրեն ազարակցի կոչել:

Ինչքան էլ մեր գրուցակիցները խոսեն այլընտրանքային աշխատատեղեր ստեղծելու, կոմբինատից քաղաքի կախվածությունը թուլացնելու անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, ոչ ոք դեռ չի պատկերացնում քաղաքի ապագան առանց կոմբինատի: Միեւնույն է, եթե նույնիսկ խոսում են այլ տնտեսավարող տուրքերի հիմնման, փոքր բիզնեսի մասին, դրանք նույնպես ուղղակիորեն կապվում են կոմբինատի հետ:

Չնայած պատմում են, որ այս տարվանից բնակիչներն սկսել են նորից այգեգործության ծավալներն ավելացնել, դրա հնարավորությունները սահմանափակ են համարում:

Ո՞րն է երիտասարդների երազած Ազարակը:

Նրանք մախ առաջարկ են հնչեցնում. կուզենային, որ գործառնալ հանվեր քաղաքից. բացի դրա համար բերվող մի քանի պատճառաբանություններից, կարծում են, որ քաղաքի կենտրոնում գտնվող այդ լավ շենքերը կարելի է այլ նպատակներով օգտագործել, ասենք՝ կրթական:

Լուսինեն ուզում է, որ կոմբինատը բնականոն աշխատի, նաեւ շատ է ուզում, որ ազարակցի մասնագետներ աշխատեն այստեղ...

Արամին երազում է, որ այստեղ մասնավոր բիզնեսը զարգանա, տարբեր արտադրությունների հիմք դրվի, սահմանափակ շուկան աշխատի:

Միերը ցանկանում է, որ Ազարակում կյանքը գոնե այնպիսին լինի, ինչպիսին երկու տարի առաջ էր, երբ առաջընթաց, աշխուժություն, լավատեսության հիմք կար:

Գրիգորյանը աշխատանքով ապահովված բնակչության մեջ գեղեցիկ Ազարակ է ուզում տեսնել:

Կլոր սեղանի մասնակիցները ողջունում են քաղաքի օրը նշելու գաղափարը, փաստում, որ երիտասարդ քաղաքը ավանդույթների պակաս ունի, եւ տոնը դրան մի էջ կավելացնի: Ուրախ են, որ քաղաքը ավանդույթ կունենա, իսկ իրենք կհիշեն, որ դրա հիմքն իրենցով է դրվել:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Քույր քաղաք Սուլիգորսկը

Ազարակ - Սուլիգորսկ բարեկամությունը սկիզբ է առել 2008-ին: Սուլիգորսկը Բելառուսի Մինսկի մարզի հանքարդյունաբերական քաղաքներից է:

ՄՇԱԿՈՒՅԹ

Կրթամշակութային Ագարակ

Մշակույթի պալատը

ՋՈՒԼԻԵՏԱ ՄՆԱՑԱԿՆՆԱՆ

Ագարակի մշակույթի պալատի տնօրենի պաշտոնակատար

Ագարակի մշակույթի պալատը շահագործման է հանձնվել 1965 թվականին: Առաջին տնօրենը եղել է Ռոբերտ Կամոյանը (Կապանում այժմ հայտնի գեղանկարիչ), երկրորդը՝ Ռադիկ Գրիգորյանը: Այդ ընթացքում գործել է «Ջանգեզուր» երգի-պարի համույթը, որի գեղարվեստական ղեկավարն էր Ալյոշա Աբրահամյանը, պարուսույցը՝ Նորիկ Արդանյանը: Այն համերգային շրջագայություններով հանդես է եկել Ջանգեզուրի շրջակայքում և գյուղերում:



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

կալ գործիքային համույթներ, ղեկավար՝ Անդրանիկ Սամվելյան,

■ ժողգործիքների համույթ, ղեկավարներ՝ Անուշ Ղազարյան, Գրիշա Աղաջանյան, Օնիկ Գալստյան,

■ Թատերական խումբ, ղեկավար՝ Մարտին Պետրոսյան,

■ Ռուսական թատերական խումբ, ղեկավար՝ Նատալյա Կոլեսնիկովա,

■ Տիկնիկային թատրոն, ղեկավար՝ Սերժիկ Բոլյան,

■ 70 հոգուց կազմված բառաձայն երգչախումբ, ղեկավար՝ Լորիս Ամիրխանյան,

■ Ասմունքի խումբ, ղեկավար՝ Ջուլիետա Մնացականյան,

■ Մանկական պարի խումբ, ղեկավար՝ Աշոտ Կարապետյան,

Ազգագրական երգի-պարի խումբ, ղեկավարներ՝ Անուշ Ղազարյան, Վարդիմիր Կարապետյան:

1996թ. մշակույթի պալատի տնօրեն նշանակվեց Արկադիա Վարդանյանը, 2000թ.՝ Սերժիկ Բոլյանը, 2004թ.՝ Օնիկ Գալստյանը: 2009-ից պալատը ղեկավարում է Ջուլիետա Մնացականյանը:

Մշակույթի այս օջախում ելույթ են ունեցել հանրապետական տարբեր ստեղծագործական խմբեր, արվեստագետներ, գրողներ: Մշակույթի պալատի շենքը երկու տարի է՝ վերանորոգվում է, և տնօրինությունը հույսով սպասում է դրա ավարտին, որ Ագարակում կրկին վերակենդանանա մշակութային կյանքը, իսկ երբեմնի աշխույժ կենտրոնն իր երկրորդ ծնունդը ապրի:

1972-1996թթ. մշակույթի պալատը ղեկավարել է Ջուլիետա Մնացականյանը: Այդ ժամանակահատվածում այստեղ գործել են գեղարվեստական ինքնագործ բազմաթիվ խմբեր.

■ «Ջանգեզուր» պարային համույթ, պարուսույց՝ Ռազմիկ Զարոբյանյան, հետո՝ Վլադիմիր Կարապետյան: Կատարողական բարձր արվեստի համար համույթը բազմիցս առաջնակարգ տեղեր է գրավել փառատոններում՝ արժանանալով պատվոգրերի, 1982թ.՝ «Ժողովրդական» կոչման, 1985-ին մեկնել է Ֆերմանիա:

■ «Արաքս» վոկալ-գործիքային համույթ, ղեկավար՝ Գրիշա Ավաբերդյան,

■ Մանկական և աղջիկների վո-



Ագարակի միջնակարգ դպրոցը

Դպրոցը

ՄՆԱԿՏ ՍՈՒՔԵԼՅԱՆ

Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն

Ագարակում առաջին դպրոցը բացվել է 1954թ., այն յոթնամյա էր, տնօրենն էր Արշավիր Մելքոնյանը: Դպրոցը սկզբում տեղավորված էր հրապարակի վրա գտնվող երկհարկանի շենքի (հետո՝ երաժշտական դպրոց) աջ մուտքի առաջին հարկում: Կրթօջախի առաջին ուսուցիչներն էին Երմոնյա Մարոսյանը, Օլյա Սահակյանը, Սոնյա Դավթյանը, Արամայիս Սարգսյանը: Առաջին այս դպրոցը հետագայում դարձավ ռուսական միջնակարգ, այնուհետև Ագարակի N 2 միջնակարգ դպրոց:



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Նույն տարում ծնունդ առավ նաև բանվոր երիտասարդության երեկոյան միջնակարգ դպրոցը:

1968-ին բացվեց Ագարակի մյուս՝ N 1 հայկական դպրոցը, որն էլ Ագարակի ներկայիս միջնակարգ դպրոցն է: Այն կարծ ժամանակում կահավորվեց և դարձավ հանրապետության լա-

վագույն դպրոցներից մեկը: Այստեղ աշխատել են հանրապետությունում ճանաչում ունեցող վաստակաշատ մանկավարժներ Ի.Մանուչարյանը, Մ.Զարոբյանյանը և այլք:

1957թ.՝ Եղիշե Զարենցի ծննդյան տարեկիցի առթիվ, դպրոցը կոչվեց բանաստեղծի անունով:

Ա ն կ ա խ ու թ յ ա ն ճանապարհին դպրոցը շատ փորձությունների ենթարկվեց. դուրս մնաց պետության հոգածությունից, ռազմի դաշտում կորցրեց նախկին աշակերտներից շատերին:

1997թ. քաղաքի N2 միջն. դպրոցը լուծարվեց և միացավ Ե.Զարենցի անվան միջն. դպրոցին: Կրթօջախը հզոր էր, ուներ 1000 աշակերտ: Մոտ 10 տարի դասերն ընթացան երկհերթ, որն, ինչ խոսք, խանգարում էր ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

2003-ից այն դադարեց կրել Ե.Զարենցի անունը:

Դպրոցն իր գործունեության ընթացքում տվել է բժիշկներ, ինժեներներ, գյուղատնտեսներ, տնտեսագետներ: Մանկավարժների 50 տոկոսն ավարտել է հենց

այս կրթօջախը: Ներկայումս այն ունի 651 աշակերտ, 53 ուսուցիչ, 15 այլ աշխատող:

Մասնակցել է Փրոքեքտ Զարմոնիի «Հայաստանի դպրոցների փոխկապակցման» ծրագրին:

Դպրոցը հիմնադրումից սկսած ունեցել է համայնքի կողմից հիշվող տնօրեններ. Իշխան Մանուչարյան՝ 1955-1960թթ. (հայոց լեզվի և գրակ. ուսուցիչ), Մամիկոն Զարոբյանյան՝ 1960-1977թթ., (մաթեմատիկայի ուսուցիչ), Սերժիկ Պողոսյան՝ 1977-1996թթ. (պատմության ուսուցիչ), Էմմա Դավթյան՝ 1996-2000թթ. (մաթեմատիկայի ուսուցիչ): 2000թ. դպրոցի տնօրեն է նշանակվել մաթեմատիկայի ուսուցչուհի Անահիտ Առաքելյանը:

Նշենք նաև, որ 2003-ին ավարտվեցին Հայաստանի սոց. ներդրումների հիմնադրամի և «Հայաստան» հիմնադրամի միջոցներով սկսված վերանորոգման աշխատանքները, այժմ դպրոցի շենքը հիմնովին վերանորոգված է, նորնալ վիճակում են սանհագույցները, դաշիճները: Բայց կրթօջախը ուսումնական գույքի, լաբորատոր սարքավորումների, մարզագույքի խիստ կարիք ունի:



Ագարակի մշակույթի պալատը

Արվեստի դպրոցը

ԼՈՒԻՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Ագարակի արվեստի դպրոցի տնօրեն

Ագարակի արվեստի մանկական դպրոցը հիմնադրվել է 1968թ. կոմբինատի տնօրեն Սաբիր Ստեփանյանի նախաձեռնությամբ, կուլտուրայի մինիստր Կամո Ուղունյանի հրամանով: Դպրոցին տրամադրեցին հրապարակի վրա գտնվող շինվարչության շենքը, վերանորոգեցին, ապահովեցին գույքով և երաժշտական գործիքներով: Հիմնադրման առաջին տարում դպրոցն ուներ 25 աշակերտ, ընդամենը 2



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

ուսուցիչ և միայն 1 դաշնամուրային բաժին: Երեւանից Ագարակ գործուղվեցին կրթօջախի անդրանիկ տնօրենը՝ Հասմիկ Թովիկյանը և Վիոլետա Գյուրջեյանը՝ դաշնամուրի միակ ուսուցչուհին: Ագարակցի 20 աշակերտներին, որոնք սովորում էին Մեղրու երաժշտական դպրոցի 2-6-րդ դասարաններում, տեղափոխեցին Ագարակի երաժշտական դպրոց: Հ.Թովիկյանը դպրոցը ղեկավարեց մինչև

1970թ., այնուհետև դպրոցի տնօրեն նշանակվեց եղուարդ Մարգարյանը: Նա աշխատեց 29 տարի, իսկ 1999թ. տնօրեն նշանակվեց դպրոցի առաջին շրջանավարտ Լուսիս Պողոսյանը: Իր գործունեության 40 տարվա ընթացքում դպրոցը տվել է 611 շրջանավարտ, որից 60ը ստացել են միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն: Աշակերտների մասին գովեստով ու հարգանքով են խոսում Կապանի, Երեւանի, Վանաձորի, Արարատի, Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանների տնօրեններն ու Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոսները: Կոնսերվատորիան ավարտած աշակերտներից են Անահիտ Մախմուրյանը, Գրիգոր Գրիգորյանը, Նաիրա Համբարձումյանը: Դպրոցի ուսուցիչների 90%-ը դպրոցի նախկին սաներն են: Այսօր կրթօջախն ունի 167 աշակերտ, որոնց դասավանդում են 26 ուսուցիչ՝ 15 դաշնակահար,

5 խմբավար, 1 տեսաբան, 1 ջութակահար, 1 կլարնետիստ, 1 շվիհար, 1 քանոնահար, 1 պարուսույց: Գործում են դաշնամուրային, լարային, փողային, ժողգործիքների (շվի, քանոն, ակորդեոն), պարային բաժիններ, կա նաև երգչախումբ: Դպրոցի շնորհիվ երեխաները մասնակցել են փառատոների և մրցույթների: Ամեն տարի դպրոցում ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ կազմակերպվում են գրական-երաժշտական երեկոներ և հաշվետու համերգներ: Կրթօջախում ուսուցանվող մասնագիտությունների թիվը կարելի է ավելացնել, բայց համապատասխան մասնագետների և դասարանների կարիք կա: Դասերը անցկացվում են հին ծրագրերով, ուսուցիչներին մեթոդական

օգնություն և գրականություն են անհրաժեշտ, իսկ աշակերտներին երաժշտական գրականության, սովեթյոյի, մասնագիտական դասագրքեր: 2001թ. դպրոցը վերանորոգվել է, սակայն նոր գույքի և երաժշտական գործիքների անհրաժեշտություն կա: Այս տարի դպրոցը մեծ շուքով նշեց Մեծ Կոմիտասի 140-ամյակը, իսկ մայիսին Կապանում Կոմիտասի 140-ամյակին նվիրված փառատոնին ներկայացրեց Մարտին Մազմանյանի «Ճուտիկ» մանկական օպերան՝ արժանանալով ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրի:


Ավելացնենք, որ 2009-ից արվեստի դպրոցին են միացել քաղաքում գործող երեք գրադարանները:

ՄԵԿԸ՝ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԻՑ

Մեղրիի կայարանապետ Գեորգի Չայրապետյանը, ով իր երկաթուղային գործընկերների, մտերիմ-հարազատների հետ անցյալ տարի նշեց 80-ամյակը, Ազարակ քաղաքի տարեգիրներից է: Այս է բացել 1928-ին շինարարի ընտանիքում, Կիրովական քաղաքում, 1933-ին ընտանիքով տեղափոխվել են նավթագործների քաղաք՝ Բաքու, որտեղ նախնական կրթություն է ստացել, այնուհետև՝ միջնակարգ-մասնագիտական կրթություն, որպես երկաթուղային՝ 1946-ից սկսել է աշխատանքային կենսագրությունը հյուսիս: Ադրբեջանի այն ժամանակվա երկաթուղային տրանսպորտի նախարար Աբաս Բադիրովի հրամանով տեղափոխվեց Մեղրիի կայարան, որն ամենավթարայինն էր համարվում: Դա 1956 թվականի հունվարի 15-ն էր, Մեղրիի կայարանի եղած-չեղածը մի վազոն-տնակ էր: Այդ մասին է նաև վկայում ընտանեկան ալբոմում պահպանվող արդեն խուճացած լուսանկարը: «Կզնաս, կայարանը ոտքի կկանգնեցնես, կտեղափոխենք Բաքու՝ վարչական աշխատանքի», - վերադասի խոստումն էր: Բայց նախնիների հողի կանչն ավելի զորեղ էր. մնաց ու ընդմիջտ կապվեց Մեղրիի հող ու ջրին, նրա աշխատասեր ժողովրդին: Եվ հիմա՝ տարիների հեռավոր, խոստովանում է, որ չի զղջացել: Աշխատանքին զուգընթաց 1962-ին ավարտել է Մոսկվայի երկաթուղային տրանսպորտի ինստիտուտը: Գ.Չայրապետյանի՝ Մեղրիի կայարանապետի աշխատանքային գործունեությունը համընկավ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական հզորությունների ընդլայնման և Ազարակ բնակավայրի կառուցապատման հետ: Հիշեմք, որ հանրապետության Գերագույն խորհրդի հրամանով 1954-ին Ազարակը ստացավ քաղաքատիպ ավանի կարգավիճակ, ինչը Ազարակը կառուցապատելու, շեն ու բարեկարգ բնակավայր դարձնելու հեռանկարներ էր բացում: Միանություն է մտածել, որ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով հնարավոր կլիներ լեռնագործների քաղաք եւ պղնձամոլիբդենային կոմբինատ կառուցել: Ազարակի եւ պղնձամոլիբդենային կոմբինատի համար օրական երկաթուղով ստացվում էին 15-20 վազոն ժողովրդատնտեսական բեռներ՝ շինանյութեր, մեքենասարքավորումներ, առաջին անհրաժեշտության ապրանքներ, որոնք հիմնականում բեռնաթափում էին Մեղրիի կայարանում, քանի որ Կարծեւան-Ազարակի կայարանն ավելի սուղ հնարավորություններ ուներ:

«Պարապուղուներ լինում էին», - փորձում են դավադիր հարց տալ: «Ամեն ինչ պատահում էր, երբ, ասեմք, օրվա ընթացքում 20 վազոն շինաքար էր ստացվում, բնականաբար, բեռնաթափման գործում դժվարություններ էին ծագում», - հետևում է անկեղծ պատասխանը:

Լրագրողիս խնդրանքը՝ «մի հիշարժան դեպք պատմեք Ձեր աշխատանքային գործունեությունից», անպատասխան չի մնում. 1970 թվականին, վերհիշում է, Ադրբեջանի երկաթուղային տրանսպորտի նախարար Բադիրովից (խորհրդային տարիներին այժմյան Սյունիքի մարզով անցնող երկաթգիծը՝ Կապանից Մեղրի, գտնվում էր Ադրբեջանի երկաթուղային տրանսպորտի նախարարության ենթակայության տակ) մի հեռագիր է ստանում, ըստ



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Վերջին կայարանապետը

որի՝ նախարարը պահանջում էր Մեղրիի կայարանում Բաքվի 26 կոմիսարներից մեկի՝ Մեշտաղի Ազիզբեկովի կիսանդրիի տեղադրման համար տարածք հատկացնել: Գեորգի Միխայիլիչն անմիջապես զանգահարում է Մեղրիի այն ժամանակվա շրջագործկոմի նախագահ Սերգեյ Թեւանյանին, հայտնում հեռագրի բովանդակությունն և մասին, որի էությունը հանգում էր կայարանը «թուրքացնելուն» (իր բնորոշումն է): Թեւանյանը հարցնում է՝ ի՞նչ կարող ենք անել, կայարանապետը հուշում է՝ Ստեփան Շահումյանի արձանը Ազարակի կոմբինատում կա, այս գիշեր պիտի տեղափոխենք եւ տեղադրենք: Խոսքը գործի է վերածվում. առավոտ օձգին, գործն ավարտվում է, իսկ կեսօրին հեռագրում են նախարարին, թե օրեր տեղի պիտի ունենա Ստ.Շահումյանի կիսանդրու բացումը, եւ նախարարությանը հրավիրում են մասնակցելու կոմբինատի բացման արարողությանը: Այն տեղի է ունենում մի քանի օր հետո, իսկ մինչ այսօր էլ կիսանդրին պահպանվել է իր սկզբնական տեսքով:

Վերջերս զանգվածային լրատվամիջոցները հայտնեցին, որ Բաքվում պղծել են Բաքվի 26 կոմունարների գերեզմանները: Ի հեճուկս այդ բառերի արարքի՝ Գ.Չայրապետյանը թարմացրել է Ստ.Շահումյանի կիսանդրիի տեսքը:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը սրբագրումներ արեց Մեղրիի երկաթուղայինների կյանքում. ներքին կարգադրություն կար՝ երկաթուղայիններին չներքաշել հակամարտությունների մեջ: 1988-ից հետո երկու հանրապետությունների միջև հարաբերությունները սրվեցին, եւ հարեւան հանրապետությունում բնակվող մեր հայրենակիցները, թողած տարիների չարչարանքով ձեռք բերած կայքն ու գույքը, մագապուծ բռնեցին բռնազաղթի ճամփան: Նույն ճակատագիրն էր կանխորոշված Մեղրիում բնակվող ադրբեջանցիներին: Բայց, ի տարբերություն մեր հայրենակիցների, ինչպես Գ.Չայրապետյանն է հավատում, այստեղի ադրբեջանցիներն իրենց ունեցվածքով, աման-չամանով (նույնիսկ մարդ կար՝ իր տան տանիքի ազբոշիֆերն է քանդել եւ բարձել վազոնը) հեռացան: Ոչ մեկի քիթը չի արնոտվել, իսկ շաբաթներ անց Բաքվում կայացած հանրահավաքներում լալահառաչ էլույթներ են ունեցել, թե իբր Հայաստանից իրենք մի կերպ են

ճողոպրել՝ այնտեղ թողնելով ամեն ինչ: Հետագայում հակամարտությունը վերածեց պատերազմի, եւ երկաթուղային շրջափակումը դարձավ իրողություն: Վերջին գնացքը Մեղրիի կայարանով երթելու է 1992-ի ապրիլի 23-ի գիշերը...

Վաստակաշատ երկաթուղայինը սրտի ցավով է պատմում, որ Ազարակի կայարանն այժմ թալանված է, շենքը՝ վաճառված, իսկ մոտ 70 վազոնները եւ ռելսերը դարձան մետաղի ջարդոն՝ հարստացնելով ինչ-որ մեկի գրպանը: Մինչդեռ կար ժամանակ, երբ օրական Մեղրիից, Ազարակից 100-120 ուղևոր էր մեկնում մայրաքաղաք: Իսկ այսօր Մեղրիի կայարանի «զինանոցում» մի երկաթուղային սայլակ (дрезина) կա, որ Մեղրիի սահմանապահ ջրկատին է ծառայում. Կարծեւան-Նյուվադի երկուղով բեռներ է տեղափոխում:

Հայաստան աշխարհի գարգացման հեռանկարը վաստակաշատ երկաթուղայինը կապում է երկաթուղային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հետ՝ հավելելով, որ հանրապետությունում առանձին երկաթգիծ պիտի ունենա: Ի դեպ, ասեմք, որ այս օրերին լայնորեն քննարկվում են Իրան-Հայաստան երկաթուղու նախագծերը, որոնցից լավագույն տարբերակ է համարվել Սեւանա լճի արեւմտյան ափով անցնողը՝ Սեւան քաղաքից դեպի Սիսիան, Կապան եւ Մեղրի: Ութսունն անց երկաթուղայինը միջևե այսօր աշխատում է, եւ վերջերս փորձում էր անցնել կենսաթոշակի, բայց վերադասից կեսուրջ, կես-կատակ փոխանցել է, որ այնքան պիտի աշխատի, որ ավարտվի Իրան-Հայաստան երկաթուղու շինարարությունը, որպեսզի կտրի երկաթուղու բացումը խորհրդանշող ժապավենը:

Իսկ ընդհանրապես Գեորգի Չայրապետյանի՝ գործին, ծառայողական պարտականություններին նվիրվածությունն աննկատ չի անցել: Պարգևատրվել է (թող այս թվարկումները ժամանակավիճակի չհնչեն) «Աշխատանքային կարմիր դրոշի» եւ «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով: Բայց ամենամեծ զնահատանքն այն սերն ու հարգանքն է, որ նրա հանդեպ ստանում են իր երբեմնի երկաթուղային գործընկերները, Մեղրիի եւ Ազարակի բնակիչները:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Իմ քաղաքը

■ Ծարադությունների մրցույթ

«Սյունյաց երկիր» թերթն Ազարակ քաղաքի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ աշակերտների շրջանում դեռեւս գարնանը հայտարարել էր մրցույթ՝ «Իմ քաղաքը» թեմայով: Մրցույթի վերջնական փուլին ներկայացված աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո լավագույնն է ճանաչվել Ազարակի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Հայկ Հովհաննիսյանի շարդությունը, որը ներկայացնում էր ստորև:



Լուսանկարը՝ Ա.Օհանջյանի

Կենդիվեր է: Կարծես լռել է ամեն ինչ: Չյուն է գալիս: Չյունը փախցրել է իմ քունը... Մոտեցել եմ լուսամուտին: Փակ լուսամուտից մանկությունս թռչում է, եւ անսահման սիրուն ու երջանկությունից սիրտս լցվում է: Իմ ապրած մեկուկես տասնամյակը, որն անցել է այս քաղաքում, անհոգ չի եղել... Բայց ես այնքան եմ սիրում իմ քաղաքը...

Մի փոքրիկ քաղաք, որը գտնվում է Մեղրու շրջանում եւ հանդիսանում է Հայաստանի հարավային դարպասը: Մեր շրջակենտրոնը՝ Մեղրին, եղել է Հայաստանի հին գյուղերից, որի պատմությունը թաղված է անհայտության մեջ, իսկ Ազարակը՝ մեր փոքրիկ քաղաքը, հիմնադրվել է 1949թ. հանքահարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման հետ: Այն դրախտային քաղաք է, մի փոքրիկ քաղաք՝ ընկած լեռնային կղզու մեջ, ուր երեք կողմից շրջապատված է երկնահաս լեռներով, իսկ չորրորդ կողմում հոսում է Արաքս գետը: Մի գետ, որն իր փրփրած, պղտոր ալիքների մեջ, ասես, ամփոփում է մեր անցած պատմությունը, մեր ժողովրդի թափած արյունը: Եվ այն ազարակցուն է հասնում միայն սահմանի սուր փշերից այն կողմ. ազարակցին Արաքսից օգտվում է միայն թույլատրելի պայմաններում: Այնուհանդերձ ազարակցին հպարտ է իր քաղաքով, ուր աճում են աշխարհի ամենաքաղցրահամ ու մեղրածո մրգերը՝ թուզը, թավշե դեղձն ու ոսկեհատիկ խաղողը, մեղրածո արքայախնձորն ու հայկական ծիրանը: Ազարակցին չարչարվում է արեւի տապին, նա ճաքճած ու չորա-

ցած հողը դարձնում է դրախտ՝ պարծանքի իր աղբյուրը: Նա իր դռները լայն բացում է ամեն օտարի, ճանփորդի, հյուրի ու անցորդի առաջ: Հյուրասեր է ազարակցին:

Իմ քաղաքն Ազարակն է, որը չսիրել պարզապես անհնար է... Մեծ մի հրապարակ ունի, անկուններում՝ շենքեր, ճանապարհներ, մարդիկ՝ կրթված, նորածե, գեղեցիկ: Ավտոմեքենաների ճռոցներ, մարդկային աղմուկ, ծխի բույր, բարձրածայն գրույցներ՝ ամեն տեղից լսելի, որոնցից օդն ալիքվում է: Ավտոմեքենաներ, որոնք կարծես կոչված են աղբատությունը ծաղրելու համար: Միող տղաներ ու աղջիկներ կան, որ քայլում են առանձին՝ հեռավոր հեռու իրար վառելով: Թնդում հարսանիքներ են լինում իմ քաղաքում, լուռ ծնունդներ, թաղումներ, սեր են ատելություն... Սա իմ օրրան է՝ Ազարակը, որը չսիրել պարզապես անհնար է: Առաջին որոտից մեզ մոտ ամպը փլվում է: Փլված ամպի տեղում մի կտոր իրիկնացող երկինքը կապույտ լույս է մաղում թրջված լեռների վրա, ուր սիրո ավանդական երգով իրար սրտեր են գրավում հավերժ: Թռչնային շնչի բույր ունի գեփուրը: Լուռը ճաքում է... Երբեմն հեռանում եմ իմ քաղաքից, որ ավելի շատ կարոտեմ, հեռավոր տեսնեմ եւ ամբողջությամբ տեսնեմ, որ տարածություն լինի մեր մեջ, վերադարձի ճանապարհի եւ մտորելու ժամանակ: Հեռանում եմ, որ միշտ նյութեղեն չլինի քաղաքս, երազ դառնա ու տենչ, դառնա ծգտում եւ իրձ... Հեռանում եմ, որ ավելի մոտենամ...

Հավելեմ եւ աստղերը եւ լուծվել ծյունե ճերմակ հալոցքում: Չյունը տարել է իմ քունը... Կանցնեն ցուրտ ձմեռներ, կզան գարուններ, եւ իմ քաղաքը կգտնի այն ամենը, ինչ տարել են իրենից ձմեռները: Ես արդեն լսում եմ հալչումների տաք աղմուկները, զգում կյանքի հմայքը, սիրո մաքրությունը, բարության գրույթությունն ու գեղեցիկի վեհությունը:

Լուսացել է...

Քայլում եմ դեպի դպրոց տանող ճանապարհով՝ ոտքերս դնելով դեռ չկոխկրտված ծյան վրա...

Տրտաշունչ քամին սառը հարվածներ է խփում մարմնիս՝ փորձելով ցույց տալ, թե ով է այս ցածրադիր վայրի իսկական տիրակալը, ամռան տապ օդը փորձում է անձնատուր անել, զարնան ուժեղ անձրեւները եւ աշնան վատ եղանակները փորձում են հուսահատեցնել, բայց նույնիսկ դա էլ չի կարող աշխատասեր, հպարտ, ուժեղ, դիմացկուն ազարակցուն ստիպել գարնանը չցանել, ամռանը չջրել, աշնանը չհավաքել եւ ձմռանը չկալել:

Գեղեցիկ է իմ քաղաքը... Արդյոք ես սիրում եմ, որովհետեւ այն գեղեցիկ է, թե՞ այն գեղեցիկ է, որովհետեւ ես սիրում եմ... Մի բան հաստատ մեղրածո արքայախնձորն ու հայկական ծիրանը: Ազարակցին չարչարվում է արեւի տապին, նա ճաքճած ու չորա-



ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈՒԻՐՔԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԸ



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Հանքավայրը

ԱՇՈՏ ՀՈՎԿԱՆԻՍՅԱՆ
Երկրաբան, «ԱՊՄԿ» ՓԲԸ նախկին գլխավոր ճարտարագետ



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքավայրը գտնվում է Ձանգեզուրի հանքային շրջանի ծայր հարավում՝ Մեղրիի ենթաշրջանում: Տարածքի մյուս հանքավայրերի նման նրա ծագումը նույնպես կապված է Դեբեքլինյան հզոր խախտման հետ:

Ագարակի հանքավայրը հայտնի է 1845 թվականից: Հանքավայրի երկրաբանական առաջին նկարագրությունը կատարել է երկրաբան Աբիխը:

Մինչև 30-ական թվականները խորհրդային կարգեր հաստատվելը հանքավայրը շահագործել են տնայնագործական պարզունակ եղանակներով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո սկսել են հանքավայրի սխտեմատիկ ուսումնասիրությունները: 1924-25թթ. երկրաբաններ Գրուշչևսկի և Սոկոլովը հանքավայրի տարածքում կատարել են որոնողական աշխատանքներ, որից հետո հանձնարարել կատարելու հետախուզական աշխատանքներ: Հետախուզական աշխատանքները հանքավայրի տարածքում սկսվել են 1929 թվականից եւ ընդմիջումներով շարունակվել մինչև 1952թ.: 1924-34թթ. աշխատանքները ղեկավարել է Բարկանովը, որը եւ առաջին անգամ կատարել է հանքավայրի պաշարների հաշվարկը:

1941-52 թվականներին կատարված հետախուզական աշխատանքների հիման վրա Ֆոկինի կողմից կատարված պաշարների հաշվարկը ստուգվել է վերահաստատվել է 1953 թվականին: Այդ թվականին էլ սկսվել է արդյունաբերական օբյեկտների շինարարությունը: Հանքավայրի տարածքում մակաբացման աշխատանքները սկսվել են 1954 թվականից: 1956 թվականին սկսվել է հարստացուցիչ ֆաբրիկայի մասնաշենքերի շինարարությունը: Հարստացուցիչ ֆաբրիկան գործարկվել է 1963 թվականի մայիս ամսին:

Հանքաքարի վերամշակման տարեկան ծավալները, կապված աղացների քանակի ավելացման հետ, 1.0 մլն տոննայից հասցվել է մինչև 3.2 մլն տոննայի:

Հանքավայրի բացումից հետո սկսվել է հետախուզական աշխատանքների նոր փուլ, որը շարունակվել է մինչև 1995 թվա-

կանը:

Ագարակի հանքավայրի հիմնական պաշարների հաշվարկը կատարել է Հենրիկ Սկրտչյանը 1954-74 թվականներին կատարված հետախուզական աշխատանքների հիման վրա: 1975 թվականին Պ.Պ.Կոմիտեն հաստատել է հանքավայրի հետեյալ պաշարները:

ա) հաշվեկշռային հանքաքարի պաշարներ 77.6 մլն տոննա՝ պղնձի 0.478 % եւ մոլիբդենի 0.0264 % պարունակությամբ,
բ) արտահաշվեկշռային հանքաքարի պաշարներ 78.1 մլն տոննա, պղնձի 0.395 % եւ մոլիբդենի 0.020 % պարունակությամբ:

1975 թվականից մինչև 1995 թվականը կատարված հետախուզական աշխատանքների հիման վրա հանքավայրի եզրագծում հաշվարկված եւ հաստատված են հանքաքարի պաշարների գերաճ 14.6 մլն տ պղնձի 0.33 % եւ մոլիբդենի 0.028 % պարունակությամբ:

Հանքավայրի տարածքում կատարված հետախուզական աշխատանքներին, սկսած 1963 թվականից, օժանդակել եւ ակտիվորեն մասնակցել է կոմբինատի նախկին գլխավոր երկրաբան Արտուր Գրուշչևսկին: Նա շուրջ 42 տարի ղեկավարել է կոմբինատի երկրաբանամարկչային բաժնի:

Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ենթակա պաշարները հաշվարկման համար կոմբինատի պարամետրերի որոշումից հետո կատարվել է պաշարների վերահաշվարկը:

Արդի պայմաններին բավարարող պաշարները հանքավայրի եզրագծում կազմում են մոտ 55 մլն տոննա, որը կապահովի կոմբինատի աշխատանքները եւս 25 տարի:

Հանքավայրի արտահաշվեկշռային քափուկավայրերում պահեստավորված է 26.5 մլն տ հանքաքար, պղնձի 0.26 % եւ մոլիբդենի 0.011 % պարունակությամբ, որը հետագայում նույնպես կշահագործվի: Բացի Ագարակի հանքավայրից, տարածաշրջանում հետախուզված են մի շարք արդյունաբերական այլ հանքավայրեր, դրանցից են.

ա) Լիճքի պղնձի հանքավայրը
բ) Այգեձորի պղնձամոլիբդենային հանքավայրը
գ) Արծվաբերդի պղնձի հանքավայրը
դ) Թեյի եւ Լիճքի ոսկու հանքավայրերը:

Վերը թվարկված հանքավայրերը նպատակահարմար է վերամշակել Ագարակում, նման առաջարկություն նախկինում կատարվել է:

«Սյունյաց երկիր», 2004թ., N 40-41

Համառոտ ակնարկ

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարությունը իրականացվել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման հիման վրա՝ ԽՍՀՄ մետալուրգիական արդյունաբերության մինիստրության 1949թ. մարտի 4-ի հրամանով: Կոմբինատը նախատեսված էր պղնձի եւ մոլիբդենի հանքավայրում պղնձի եւ մոլիբդենի հանքաքար արդյունահանելու, դրանցից խտանյութ ստանալու համար:

Հանքավայրը պարբերաբար շահագործվել է 1857-1913 թվականներին: Արդյունահանում էին միայն չնչին քանակությամբ պղնձ՝ պարզագույն եղանակով:

Հանքավայրի հետագա հետախուզումը շարունակվել է 1930-1951 թվականներին: Հանքավայրի պաշարները առաջին անգամ հաստատվել են 1956թ.:

1949թ. գարնանը Արաբս գետի ձախ ափին կառուցվեց առաջին փայտյա տնակը, եւ այդ ժամանակվանից սկսվեց կոմբինատին կից ավանի կառուցումը, որը ՀԽՍՀ Գերագույն սովետի նախագահության 1954թ. մայիսի 18-ի հրամանագրով դասվեց ՀԽՍՀ քաղաքատիպ ավանների շարքը:

Հանքը սկսել է շահագործվել 1954թ., իսկ հարստացուցիչ ֆաբրիկան՝ 1958թ.: Կոմբինատի գլխավոր նախագծողներն էին Գունավոր մետաղների նախագծման պետական ինստիտուտը, ապա՝ Գունավոր մետաղների հայկական գիտահետազոտական ինստիտուտը: Հարստացուցիչ ֆաբրիկայի նախագծերի տեխնոլոգիական մասը կազմվել է օգտակար հանածոների մեխանիկական մշակման համամիութենական գիտահետազոտական եւ նախագծային ինստիտուտի («Մեխանոր») կողմից:

Կոմբինատի շինարարությանը մասնակցել են Խորհրդային Միության 30 ազգերի ներկայացուցիչներ:

ՀԽՍՀ ժողովրդական գունավոր մետալուրգիայի եւ լեռնահանքային արդյունաբերության վարչության 1963թ. հունվարի 30-ի հրամանով կազմակերպվեց (ստեղծվեց) Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Կոմբինատի շինարարության շահագործման պետական ընդունումը կատարվել է 1963թ. ապրիլի 19-30-ը, իսկ առաջին արտադրանքը թողարկվել է 1963թ. մայիսի 28-ին, որն էլ համարվում է կոմբինատի ծննդյան օր:

Կոմբինատի կոլեկտիվը բազմիցս արժանացել է կառավարական պարգևների: 1971թ. հունվարի 11-ին կոմբինատը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ստեղծագործում եւ ազարակցիներ

Արաբսյա Հակոբյան



Լուսանկարը՝ Ա. Գեորգյանի

Մի անձրեւ օր

Անձրեւ է, մեղմ, միալար, թախիծ է, տրտմություն... իմ հոգին երգ է մտնում անձրեւի ու թախծի մասին... հուզախառն մտքեր են պարուրել անձրեւով զնայված հոգուս... ասես Տերյանը արթնացել՝ երգ է շջջում ականջիս... ուզում եմ գտնել ես մեկին որ մեկնի խորհուրդն անձրեւի... բայց մշուշ է տիրում ամենուր, ուր չկա ուրվագիծն ցանկալի... անձրեւի ու թախծի մասին իմ երգը հղում եմ տիեզերք... միզուցե կապույտ անձրեւում դու էլ թո երգն ես երգում... թող գտնեն այդպես մեկնեկու մեր հույզերն անձրեւով տարված... Ո՞վ գիտե, գուցե ես մի օր հոգիները մեր գտնեն իրար... ու բերեն մի ուրիշ անձրեւ օր հանդիպում սրտերին մեր մոլոր... որ թախծին գույն կտան գարունի, հույսերին՝ հավատ ու անդորր...

Սամվել Խաչատրյան



Լուսանկարը՝ Ա. Գեորգյանի

Ո՞վ ես դու, սեր իմ

Երագում միշտ կաս, իրականում՝ ո՛չ, Զյուր ես դու դարձել ինձ համար անկոչ: Ո՞վ ես դու արդյոք այս լույս աշխարհում, Չեմ կարող ասել, քեզ չեմ ճանաչում: Եթե կաթիլ ես սիրո արցունքի, Ուրեմն կաթիլ ցամաքած շուրթիս... Եթե աղբյուր ես գուլալ ակունքի, Ուրեմն ջուր տուր ծարաված սրտիս... Եթե առվակ ես սրտի խորքերի, Ուրեմն ջրի մարմինս բուր... Եթե գետակ ես առատ համբույրի, Ուրեմն թափվիր աչքերիս մոլոր... Եթե լճակ ես հոգուս բարձունքի, Ուրեմն բացիր դարպասդ լույսի... Եվ եթե ծով ես հեռու աշխարհի, Ուրեմն թող մի ճանապարհ հույսի... Բայց եթե ամպ ես դու անձրեւաբեր Ու բարձրացել ես, երկինքը պատել, Ուրեմն իջիր անձրեւի տեսքով, Որ ճանաչեմ քեզ ու գրկեմ սիրով:

Հավատ

Եթե չխաբվեմ աչքերիդ արդեն - Ինչքա՞ն քնքշանք կա քո սեւ աչքերում: Եթե չխաբվեմ խոսքերիդ արդեն - Ինչքա՞ն հեզություն՝ քո ամեն խոսքում: Եթե չխաբվեմ քո հոգուս արդեն, Ինչքա՞ն մաքրություն՝ հոգուդ խորքերում: Եթե չխաբվեմ շուրթերիդ արդեն, Ինչքա՞ն փափկություն՝ քո նուրբ շուրթերին: Եթե չխաբվեմ հայացքիդ արդեն, Ինչքա՞ն ջերմություն՝ քո մի հայացքում: Եթե չխաբվեմ ու սիրեմ արդեն, Ինչքա՞ն երջանիկ կլինեմ կյանքում:

1968-ից մինչև այժմ



րը, ապա կատարվեցին, որ Ազարակը նման էր մի մեծ շինարարական հրապարակի, որտեղ մեծ թափով կառուցվում էր Ազարակի պլանային-լիբրենային կոմբինատը: Խորհրդային Միության տարբեր ծայրերից կոմբինատի ինժեներատեխնիկական անձնակազմը համալրվում էր բազմազգ՝ ռուս, բելուս, ուկրաինացի մասնագետներով, որոնք գործուղվել էին կոմբինատ՝ աշխատելու: Բանվորական այս ավանի կայացման ու գոյատևման համար շատ կարևոր էր սոցիալ-մշակութային համակարգը՝ դպրոցը, մանկապարտեզը, ակումբը, բացօթյա թատրոնը, հիվանդանոցը: Այդ տարիներին կոմբինատը ղեկավարում էր հայրենասեր, արժանապատիվ մի անձնավորություն, հետագայում՝ Ազարակի պատվավոր քաղաքացի Սաբիր Ստեփանյանը: Որոշում էր կայացվել Ազարակ քաղաքում 15 մահճակալանոց փոքրիկ հիվանդանոց կառուցել, բայց շնորհիվ Ա.Ստեփանյանի ջանքերի՝ առավել ընդարձակ առողջապահական համալիր կառուցվեց: Իր պահանջը նա ներկայացրեց որպես արտադրական անհրաժեշտություն, եւ 15-ի փոխարեն կառուցվեց 60 մահճակալանոց հիվանդանոցային համալիր՝ բաղկացած 3 մեծ եւ առանձին հարակից փոքր մասնաշենքերից: Նույն անձնավորության նախաձեռնությամբ սկսվեց հիվանդանոցի կահավորումը, զինումը բուժարքավորումներով, համալրումը կարգերով: Առողջության կազմակերպման գործում առավել ունեն Ամիրբար Սարգսյանը, Ավորա Նազուկյանյանը, Լյուդմիլա Տախախովան, Սուսաննա Ջաքարյանը, Բենիկ Անտոնյանը, Սամվել Մանուկյանը եւ այլք: Այս մարդիկ իրենց երիտասարդությունը, առողջությունը, մասնագիտական հմտությունները ներդրել են, որ կայանա Ազարակի առողջապահական համակարգը:

Լուսանկարը՝ Ա.Ստեփանյանի

Առողջապահություն

Այունիքի մարզի Ազարակ քաղաքի բնակչությանը սպասարկում է «Ազարակի հիվանդանոց» ՓԲ ընկերությունը: Տարածքն ունի ուրույն առանձնահատկություններ: Իրանի Իսլամական Հանրապետության կամ այլ պետության քաղաքացին, ով հաղում է Իրան-Հայաստան սահմանը, անհրաժեշտության դեպքում օգտվում է Ազարակի հիվանդանոցից: Չի բացառվում, որ դա կարող է լինել օտարերկրացու միակ շփումը մեր առողջապահության հետ: Սա յուրօրինակ այցեքարտ է, նաեւ՝ ՀՀ առողջապահությունը պարզաձև մակարդակով ներկայացնելու առիթ: Մի թուզցիկ հայացք գցենք Ազարակի հիվանդանոցի անցած պարմությունը:



Լուսանկարը՝ Ա.Ստեփանյանի

ՇԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Ազարակի հիվանդանոց» ՓԲ ընկերության տնօրեն

Մեղրու շրջափակի գործադիր կոմիտեի 1965 թվականի ապրիլի 14-ի թիվ 8 արձանագրությունից. «Ազարակ ավանի հիվանդանոցի շենք կառուցելու համար հողամաս հարկացնելու մասին. Ազարակի ավանի Թունանյանի փողոցի սկզբնամասում հիվանդանոց կառուցելու համար հատկացնել 24 400 քմ տարածք» (քաղվածք արխիվային գործից): Այս որոշումից հետո 1968 թվականին Ազարակի հիվանդանոցի համալիրը շահագործվեց: Հիշենք մարդկանց, ովքեր անձնվիրաբար լուրջ ներդրում են ունեցել այս որոշման կատարման մեջ: Եթե մի պահ մտովի տեղափոխվենք 60-ական թվականները,

Ժամանակն է, որ Ազարակն ունենա իր ավանդական տունը

Համայնք

Սկիզբը էջ 3

Եկող տարվանից գործարանը պետք է արդեն բերք մթերի: – Ի՞նչ փոխարարություններ են «Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ եւ քաղաքի միջև, կա՞ համայնքային խնդիրներ ընթացում նրանց կողմից, գիտակցո՞ւմ են այն իրողությունը, որ կոմբինատի հիման վրա է կառուցվել քաղաքը, որ այստեղ բնակվում են իրենց աշխատողները, եւ նրանց սոցիալական, կրթամշակութային հարցերը նաեւ իրենց են վերաբերում: – Փոխըմբռնումը կա, բայց առայժմ ղեկավարտիվ բնույթ է կրում... Ի՞նչ-որ տեղ օբյեկտիվ է իրենց պատճառաբանությունը՝ հաշվի առնելով ներկա տնտեսական վիճակը: Տեսանելի օգնությունը փոխարար ծառայության շենքի շինարարություն է, որ իրենց համար սուղ պայմաններում կատարեցին: Ընթացիկում դրա կարեւորությունը կատարելի մոտ 20 աշխատատեղ, ընդ որում, հիմնականում կոմբինատից կրճատված երիտասարդներն են այնտեղ աշխատում: Կոմբինատի ղեկավարության հետ պարբերաբար հանդիպում ենք, հարցեր քննարկում: Տեղյակ են քաղաքի խնդիրներին, համեմայնդեպս, իրենց մեջ

զգում են օգնելու ցանկություն: Ժամանակ են խնդրել՝ մինչեւ կունենան արտադրանքի վաճառքից գոյացած սեփական միջոցները: – Կոմբինատը կատարո՞ւմ է համայնքային բյուջեի հանդեպ պարտավորությունները: – Ներկա դրությամբ՝ ոչ... Տարեկան 6 մլն դրամ գույքահարկն է կազմում, որն այս տարվա առաջին եռամսյակից սկսած՝ կուտակվել է՝ դժվարություններ ստեղծելով նաեւ համայնքային բյուջեի կատարման հարցում: Բացի դրանից, նախկին տարիներին կոմբինատը դրամական օգնություն էր տրամադրում քաղաքային բյուջեին, որը նույնպես բացակայում է: – Ազարակը նաեւ հաղորդակցության ուղիների համադրյալ է մաքսակետ, միջազգային ճանապարհ, Իրան-Հայաստան զբառատար, ԲԷՑ, սահմանապահ զորքեր եւ այլն: Ի՞նչ ազդեցություն ունեն այդ կառույցներն Ազարակի վրա, իրականում ի՞նչ է շահում դրանից քաղաքը... – Դե, բոլորն էլ ինչ-որ չափով աշխատուժ են ներգրավում: Ազարակի գոյության հիմքը կոմբինատն է, բայց քաղաքն այլեւս մի կարելի պատկերացնել առանց նախկին կամ գործառնի: Գազատարից օգուտը կլինի այն, որ 2010-ին քաղաքը կզազի ֆիկացվի, եւ կունենանք նաեւ

զագի ծառայություն. բացի բնակչության կենցաղի բարելավումից, դա նաեւ մի քանի աշխատատեղի հարց կլուծի: Աշխատատեղեր կբացվեն նոր ՀԷԿ-ի շինարարության ժամանակ... – Պարոն Ջաքարյան, տոմսաբուրությունը գրեթե զուգահեյտում է Ձեր պաշտոնավարման տարեդարձին: Ի՞նչ հաջողվեց անել անցած մեկ տարում: – Ֆինանսական ճգնաժամը խանգարեց մեր ծրագրերին, եւ պաշտոնավարումից հետո անհրաժեշտություն առաջացավ լրիվ փոխել մարտավարությունը: Ունենք զարգացման, առաջընթացի ծրագիր, բայց ինչպես եւ ողջ աշխարհում, առաջացավ գոյատևման եւ եղածի պահպանման խնդիր: 2008թ. նոյեմբերին քաղաքապետարանը 18 մլն դրամ աշխատավարձի պարտք ուներ, որն առաջացել էր օգոստոս ամսից Ազարակի կոմբինատի դրամական օգնության դադարեցումից հետո: Ազարակի քաղաքային բյուջեում ամսական 1,8 մլն դրամ կոմբինատն էր տրամադրում, այդ 21 մլն-ը տարեկան բյուջեի 20 տոկոսն է կազմում: Ինչպես նաեւ 2002-ից սկսած՝ ամեն տարեվերջի Քաղաքային կոմբինատն է տարեկան 10-11 մլն դրամ հատկացրել: Չկան այլեւս այս դրամական օգնությունները, եւ նման պայմաններում իմ ձեռքբերումն են համարում այն, որ այս մի տարվա ընթացքում պարտքը կրճատել ենք 2 մլն-ով եւ նոր պարտքեր չենք ավելացրել: Իսկ եթե կոմբինատը վճարի գույքահարկը, այն եւս 3 մլն-ով կկրճատվի: Նշեն, որ նույնիսկ այս պայմաններում բյուջեի եկամտային մասն ավելացել է, վերանայվել՝ վարակալությունների պայմանները: Արդաբանությունը նախկին շաբաթական մեկ անգամից դարձրել ենք շաբաթվա մեջ հինգ օր: Ձեռքբերումն են մարտում մանկապարտեզի լավ վիճակը, որտեղ 220 երեխա է համախուս, նույնիսկ չորսը՝ Մեղրուց: Ինքնագովություն չհամարվի, կարծում են՝ քաղաքում նաեւ բարոյախոգեբանական մթնոլորտ է բարելավվել, անխտիր համագործակցում ենք բոլոր ուժերի հետ, եւ այսօր բոլորի մեջ քաղաքի համար ինչ-որ բան անելու ցանկություն են տեսնում. դա պարտավորեցնող է: – Ի՞նչ խնդիրներ ունի այսօր ազարակի երիտասարդը: – Դե, ժամանակի համալիրություններ չկան... Նախատեսել ենք զբոսայգիների վերակառուցում, սպորտը պիտի ակտիվանա, մշակույթի պիտի վերանորոգումից հետո միջոցառումները կակտիվանան... Ներուժը, կարգերը, պահանջը կան, հույս ունենք՝ կշտկվի: Իսկ բիզ-

վանդանոցի ճակատագիրը՝ լինելու հարցը: 2000 թվականից Ազարակի հիվանդանոցի ղեկավարությունը կարողացավ պաշտպանության նախարարության կողմից ստանալ համաձայնություն Ազարակում տեղակայված գործառնի բժշկների՝ հիվանդանոցում համատեղությամբ աշխատելու վերաբերյալ, որը նոր էլ է հիվանդանոցի գործունեության մեջ: Աստիճանաբար ձեւավորվեցին եւ զարգացան վիրաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական, թերապեւտիկ ծառայությունները: 2003թ. Ազգային ժողովի պատգամավոր Սկրտիչ Սկրտչյանի միջամտությամբ հիվանդանոցում ինֆեկցիոն բաժանմունք բացվելու թույլտվություն ստացվեց: Կարողային համալրմանը զուգընթաց իրանայական պահանջ դարձան նաեւ տարածքների վերանորոգման, սարքավորումներով հագեցնելու խնդիրները, ինչը վերջին 15 տարում պատերազմական իրադրության եւ շրջափակման հետ կապված բավական տուժել էր: Ազարակի հիվանդանոցին սատար կազմեցին մի շարք մարդասիրական կազմակերպություններ, մասնավորապես «Առաքելություն արեւելք»-ը, որը լուրջ ներդրում ունեցավ պոլիկլինիկայի գործունեության բարելավման մեջ, ՄԱԿ-ի մի շարք ծրագրեր, ամերիկյան, բրիտանական դեսպանատները: Բոլորին՝ խորին շնորհակալություն: Ազարակի պղծման լիբրենային կոմբինատի եւ մարդասիրական մի քանի ծրագրերի շնորհիվ հաջողվեց բարելավել, վերանորոգել հիվանդանոցի տարածքները, ինչը հնարավոր չէր պետությունից միջոցներով: Այսօր օպտիմալացման երկրորդ փուլից հետո, Ազարակի հիվանդանոցում 60 մահճակալի փոխարեն 25 մահճակալ է գործում: Այժմ հիվանդանոցում տարեկան կատարվում է 140-160 որովայնային վիրահատություն, բուժվում է մոտ 400 հիվանդ: Ամենեւից մտադիր չենք գովերգել այն մարդկանց, ովքեր աշխատում են հիվանդանոցում: Նրանք կատարում են իրենց մասնագիտական պարտքը, բայց չենք կարող չնշել այն առանձնահատկությունը, որ կա: Բժիշկը իրավունք չունի սխալ որոշում կայացնելու, քանզի ամենամոտ օգնությունը կարող է լինել Կապանի բժշկական կենտրոնից, որը լավագույն դեպքում կլինի երեք ժամ հետո: Իսկ առավել լուրջ մասնագիտական օգնություն ակնկալ-

վում է միայն Երեւանից, որի համար առնվազն պետք է 10 ժամ: Այնպես որ այստեղ վիրահատող բժիշկը յուրօրինակ քաջություն է ցուցաբերում: Այսօրվա «Ազարակի հիվանդանոց» ՓԲ ընկերության բուժանձնակազմը բավականին երիտասարդ է, պատրաստ՝ աշխատելու, գործելու, ծառայելու տարածաշրջանի բնակչությանը: ՀՀ առողջապահության նախարար Հ.Քուչկյանը, հիվանդանոց այցելելու ժամանակ ծանոթանալով բուժանձնակազմի հետ, ցանկություն հայտնեց սատար կազմել մեր առաջարկած խնդիրը, այն է՝ հիվանդանոցում ստեղծել հետվիրահատական վերակենդանացման սենյակ: Շնորհիվ ՀՀ առողջապահության նախարարի՝ այդ խնդիրը լուծվեց. վերանորոգվեց, անհրաժեշտ սարքավորումներով կահավորվեց վերակենդանացման սենյակ: Եվ այսօր շնորհակալ ենք մեր խնդրաբեկ ընդառաջելու համար: Ասել, որ Ազարակի հիվանդանոցը չունի խնդիրներ, սխալ կլինի: Մենք լուրջ վերափոխումներ պետք է կատարենք լարբորատորիայում, ունենք կարդային խնդիրներ, եւ ինչպես բոլոր գործող ձեռնարկությունների, այնպես էլ Ազարակի հիվանդանոցի վրա անդրադարձել է միայնաշխարհային ճգնաժամը: Մենք գիտակցում ենք, որ դրանք ժամանակավոր երեւույթներ են եւ ունեն լուծում: Մենք լավատես ենք եւ ապագայի համար կազմում ենք առողջապահությունը կարգավորող, հեռագնա ծրագրեր:

Հ.Գ.

2009թ. սեպտեմբերի 17-ի նիստում ՀՀ կառավարությունը որոշել է միաձուլել Այունիքի մարզի «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն եւ «Ազարակի հիվանդանոց» ՓԲԸ-ն՝ միավորելով թերեզմանված բժշկական ծառայությունները եւ ստեղծելով նոր՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ: Ընդ որում, հաշվի առնելով Ազարակի հիվանդանոցի վիրաբուժական եւ մանկաբարձագինեկոլոգիական եւ ինֆեկցիոն ծառայությունների օգտագործման համապատասխան բարձր ցուցանիշները որոշվել է վերոհիշյալ ծառայությունները կենտրոնացնել Ազարակում, իսկ թերապեւտիկ ծառայությունները թողնել Մեղրուում՝ տեղափոխելով Մեղրու ԲԿ պոլիկլինիկական շենք:

ՊԱՏՄՈՒԲ ԵՆ ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Ազարակի պատմամշակութային հուշարձանները



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան գոյամարտում զոհված ազարակցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրը



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Սպրեհան Ճահումյանի կիսանդրին մշակույթի տան բակում



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Եղիշե Չարենցի կիսանդրին դպրոցի բակում (հեղինակ՝ ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Սարգսյան)

– Իսկ այսօր Ազարակում տուն կառուցող կա՞:

– Տարիներով չի եղել, ինչքան հիշում եմ, առաջինն ու վերջինը ես եմ եղել երկու տարի առաջ: Ընդ որում, կառուցելու ժամանակ մեկը չի ասել «ապրեք»: Բոլորն ասում էին ի՞նչ իմաստ ունի այստեղ տուն սարքելը: Բայց ինչպես ասացի, արդեն միտում կա: Դե, նաև օրինակ պիտի ցույց տաս: Տարիներ շարունակ այնպես է եղել, որ մարդիկ Ազարակում կայացել, ինչ-որ բանի են հասել եւ հետո որոշել, որ չպիտի այդտեղ ապրեն, ապագան չեն կապել այս քաղաքի հետ, իսկ բնակչությունը դա տեսնում է: Իսկ ես հո միշտ քաղաքապետ չեմ լինելու, բայց միշտ այստեղ եմ ապրելու եւ ուզում եմ՝ մի խավ ձեռավորվի, որն ապրում է այստեղ ոչ թե նրա համար, որ այլ հնար չունի, այլ որովհետեւ իր ապագան Ազարակի հետ է կապում...

– Թե՛ խմելու, թե՛ ոռոգման ջրի մատակարարում Ազարակում միշտ մտահոգիչ խնդիրներից է եղել. ի՞նչ վիճակ է հիմա տիրում այդ ոլորտներում:

– Ոռոգման ջրի առումով այս տարի ՋՕԸ-ից դժգոհություն չկա: Իսկ խմելու ջրագիծն այս պահին փոխվում է, շուտով կանցնենք միայն աղբյուրի ջրի մատակարարման, արտեզյան ջրերը, երեւի, ամռանը մեկ-երկու ամիս պետք կգան: Ասիական բանկի 750 հազար եվրո

ներդրմամբ վերանորոգվում են Ազարակի մաքրման կայանը, Ցուրտ աղբյուրից Կարճեան եւ Ազարակի հասնող ջրագծերը, Կարճեանի ներքին ցանցը: «Ճամբորդություն» մոտ 109 մլն դրամ ներդրմամբ էլ փոխվում է Ազարակի ներքին ցանցը: Այսպիսով, դեկտեմբերից ողջ Ազարակը 24-ժամյա ջրամատակարարում կունենա:

Քաղաքում այսօր լուծվող խնդիրների շարքում նշեմ նաեւ, որ ՀԲ-ի միջոցներով ասֆալտապատվում է մայրուղուց քաղաքապետարան հասնող ճանապարհահատվածը: Բացի դրանից, բեռնատար մեքենաների համար Ազարակը շրջանցող ճանապարհ է վերակառուցվում: Եվ իբրեւ դրա շարունակություն՝ «Մեղրի-Ազարակ» հիմնադրամի միջոցներով ճանապարհին կից ավտոկանգառ է կառուցվում, որ բեռնատարները քաղաք չմտնեն: Գերբափոխով աշխատող շատ մարդիկ կան, եւ Ազարակում 120 «Կամազ» կա: Բացի էլոլոգիական խնդրից, քաղաքի տուժող տեսքից, խանգարվում է նաև բնակիչների հանգիստը, երբ գիշերը վարորդներն աշխատանքի են գնում:

Նշեմ, որ եկող տարի էլ քաղաքի փողոցների ասֆալտապատում է նախատեսված՝ 2575մ:

– Ի՞նչ հարաբերություններ են հաստատվել քույր քաղաքի հետ:

– Առայժմ դա միայն փոխադարձ այցելությունների տեսքով է,

այլ տեսանելի բան չկա: Քույր քաղաքը Բելառուսի Մինսկի մարզի Սոլիգորսկ քաղաքն է: Բարեկամությունը 2008-ի դեկտեմբերից է, երբ Սյունիքի մարզպետի նախաձեռնությամբ, քանի որ մեր մարզը Մինսկի մարզի հետ համագործակցության պայմանագիր ունի, Սյունիքի բոլոր քաղաքները Մինսկի մարզի 6 քաղաքների հետ բարեկամացան, եւ Ազարակին «բաժին ընկավ» Սոլիգորսկը: Մի քիչ նմանություն կա Ազարակին այն առումով, որ հանքագործների աղաք է, նրա մաշտաբները, իհարկե, շատ մեծ են: Վերջերս մասնակցել ենք Սոլիգորսկի հոբելյանի տոնին, մեր տոնին էլ նրանք ներկա կլինեն:


– Պարոն Ջաքարյան, ենթադրե՞ք մի օր արդեն չկա կոմբինատը, կգոյատևի՞ Ազարակը...

– Իհարկե, դեռ պատրաստ չենք դրան, բաց քանի որ այստեղի հանքի պաշարներն այդքան էլ շատ չեն ու մի օր սպառվելու են, պիտի պատրաստվել... Օրինակ՝ Ջվարի ջրամբարն ու ինքնահոս ոռոգման ջուր լինի, դա արդեն բնակավայրի գոյատևման, այգեգործության գարգացման գրավական է: Սրան գումարվում են կոմունիկացիոն տարբեր հանգույցները, մեծ նախագծերի մասին է խոսքը, հուսանք՝ իրականություն կդառնան ու կնպաստեն կոմբինատից Ազարակի կախվածության նվազմանը:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Ժամանակների խաչմերուկում

Լյուդվիգ Գամբարձումյանն Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի այն տնօրենն է, ով ձեռնարկությունը ղեկավարել է մեր նորագույն պատմության համար դժվարին մի ժամանակաշրջանում (1988-1995 թվականներ)՝ Արցախյան շարժում, հաղորդակցության ուղիների շրջափակում, հայ-ադրբեջանական հակամարտություն, որը վերաճեց մեր երկրին պարտադրված պատերազմի: Նրա պաշտոնավարության օրոք տեղի ունեցած իրադարձությունները կբավականացնեին մեկ-երկու տասնամյակի:



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

«Տնօրեն նշանակվեցի 1988 թվականի նոյեմբերին, 1989 թվականին գործերը հարթ էին ընթանում, էներգամատակարարումն անխափան էր, երկաթուղին գործում էր, տարվա վերջին արդեն բախվեցինք դաժան իրողությանը՝ երկաթուղային շրջափակմանը, չկարողացանք պղնձի խտանյութն առաքել, նաև դադարեց գործել Ալավերդու պղնձածուլական գործարանը: Ռուսաստանի Դաշնություն ես չկարողացանք խտանյութ առաքել: Բացի դրանից հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններն անդրադարձ էին ունենում արտադրության ոլորտում: Սկսվել էր Դարաբաղյան շարժումը, գործադուլ անելու կոչեր էին հնչում: Խառը ժամանակներ էին, մեկը մի բան էր ասում, մյուսը՝ մի բան, բայց ես միշտ կրկնում էի իմ տեսակետը. կոմբինատը պիտի աշխատի, որ կարողանանք ժողովրդին պահել: Իրանից ստացվող սննդամթերքի ու էներգակիրների մի մասը բաժին էինք հանում Դարաբաղում մարտնչող մեր հայրենակիցներին, որի վկայությունն են դաշտային հրամանատարների շնորհակալագրերն ու նվիրատվությունների մասին հավաստագրերը: Բացի դրանից՝ փլուզվեցին խորհրդային տարիներին հաստատված տնտեսական կապերը, մի խոսքով՝ հինը կործանվեց, իսկ նորը չէր ստեղծվել:»

Նեղ վիճակից դուրս գալու համար ձեռնարկության ղեկավարությունը սկսեց գործընկերներ փնտրել: Խտանյութը սկսեցին վաճառել «Մարկ Ռիչ» անգլիական ընկերությանը, հետո համագործակցության եզրեր փնտրեցին Իրանի հետ: Պղնձի խտանյութը պոնտոնային կամրջով անցվեց Իրան, փոխադրում էին իրանական Ջուլֆա, այնտեղից մեքենաներով հասցնում հասցեատիրոջը: Իրանից ներկրում էին դիզելային շարժիչներ: 1990-ից սկսած՝ էներգամատակարարման մեջ սահմանափակում մտցվեց, երկրորդ գործոնը, որ խեղճացնում էր, վատ նյութամատակարարումն էր: Խորհրդային արտադրության էքսկավատորի, բուլդոզերի, մյուս մեքենասարքավորումների պահեստամասերը Ռուսաստանից պիտի ստացվեին, բայց երկաթուղու շրջափակման պատճառով տեղ չէր հասնում: Այս ամենի պատճառով ձեռնարկությունը գործում էր իր կարողությունների 30-40 տոկոսի չափով: Քանի որ հոսանք չկար, ութ աղացից երկուսը-երեքն էին գործում, չորս «Բելազ» հարկադիր պարապմունքի էր մատնվել: Դեռ կարողացան Իրանի վրայով Ռուսաստանից պահեստամասեր ներկրել:

Լյուդվիգ Գամբարձումյանի ղեկավարության օրոք կոմբինատում 700-1000 մարդ էր աշխատում: Տարեկան երեք միլիոն հաքաքար էին մշակում, չորս միլիոն խորանարդ մետր մակաբացման աշխատանքներ իրականացնում: Արտադրական պլանները անսեսանիս կատարում էին, եւ մարդկանց ժամանակին աշխատավարձ վճարում: Իր կարծիքով վերջին տարիներին անհրաժեշտություն չկար 1500 մարդու ընդունել աշխատանքի եւ սկսել կրճատել՝

հարուցելով մարդկանց դժգոհությունը: Եվ փորձառու լեռնագործի տարակուսանքն է առաջացնում այն հանգամանքը, որ հիմա այդքան անվտանգության ծառայության աշխատակիցներ են պահում, երբ իր ղեկավարության օրոք ձեռնարկությունում մի քանի պահակ էին աշխատում:

«1990-ականների սկզբին տեղի ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհում, ինչպես՝ ես քանակաբան գործընթացը» հարցիս պատասխանում է, որ սեփականաշնորհումը ճիշտ ուղիով չընթացավ, ազգային ունեցվածքը փոշիացավ, ամեն ինչ յուրացվեց մետաղի քարոզի մեկական տակ: Եվ հիմա էլ ամեն ինչ վատնում են՝ չնտածելով օգտագործածի տեղը նորը դնելու մասին: Ինչպես մեզ հանդիպած ազարակցիները, Լյուդվիգ Գամբարձումյանը եւս Ազարակի հեռանկարը կապում է կոմբինատի անխափան գործունեության հետ. «Ազարակի բնակչության 90 տոկոսը զբաղված է հող մշակելով, բայց ինչքան՝ բերք պիտի ստանաս այգուց եւ բանջարանոցից, որ կարողանաս ընտանիքից հանապազօրյա հոգսը հոգալ»:

Լյուդվիգ Գամբարձումյանը լեռնագործի ուղին սկսել է 1958-ին՝ լեռնամետալուրգիական տեխնիկումում ավարտելուց հետո, նախ՝ որպես աշխույժ, հետո՝ կոմբինատի բաց հանքի հերթափոխի պետ: Լյուդվիգը տեղի ձեռնարկության ղեկավարությունը գործուղել է ուսումը շարունակելու Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական ֆակուլտետում: Ռուսումնառությունն անցել է 1962-68 թվականներին: Բուհն ավարտելուց հետո եղել է բաց հանքի գլխավոր ինժեներ, պետ, 13 տարի ձեռնարկության գլխավոր ինժեներ էր: Ինչպես նշեցիք, 1988-ին ընտրվել է (եւ ոչ նշանակվել) կոմբինատի տնօրեն: Լ.Գամբարձումյանը մեզ պատմեց ձեռնարկության նախագահների եւ բոլոր ղեկավարների մասին, ովքեր Ազարակի պղնձածուլիբդենային կայանում յուրովսանն ավանդ են ներդրել: Սկզբնական շրջանում կոմբինատն արտադրանք էր տալիս եւ միաժամանակ ընդլայնվում էին նրա արտադրական կարողությունները: Առաջին տնօրենը Լեւոն Զովհաննիսյանն էր, կոմբինատի նոր հզորությունների շինարարություններն իրականացնում էր Մակիչ Մախաթյանը:

Ողջ կյանքը լեռնային գործին նվիրած մարդուց փորձեցինք իմանալ, թե որն է ձեռնարկության ապագան: «Սյունիքի հանքարդյունաբերության ապագան կապում են լեռնահանքային երեք ձեռնարկությունների՝ «Ջանգեղուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», Կապանի «Դիմո գոլդ մայինգ քամփինի» եւ «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունների միավորման եւ բաժնետիրական ընկերության ստեղծման հետ, որտեղ յուրաքանչյուր լեռնագործ կունենա իր բաժնեմասը», – եղավ պատասխանը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԵՆԵՆՍ

ԱՐՅԱՆՅԱՆ ԱՋԱՏԱՄԱՐՏԻ ԱԳԱՐԱԿՑԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ




ԽԱՉԻԿ ԽԱՔԱՐՅԱՆ
1962-1994թթ.



ՍՈՒՐԻԿ ԶՈՎՐԱՆՆԻՅԱՆ
1955-1990թթ.




ԵԳՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ
1973-1993թթ.




ԱՎԵՏԻՍ ՕՅԱՆՅԱՆ
1963-1990թթ.



ՐԱՉԻԿ ՄԿՐՏՅԱՆ
1968-1992թթ.



ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
1959-1992թթ.



ԱՐՏԱԿ ԱՍԼԱՆՅԱՆ
1964-1994թթ.

Ագարակցի աննկուն գնդապետը



Լինում են պահեր, երբ կարծես ասելիքը դառնում է ավելորդ, ավստասանքով՝ անբացատրելի:
Չիմա քո դեպքում է, Ղեւոնդ: Կարծես երեկ էր, երբ զինվորականին վայել ձգվածությամբ, ներքին հպարտությունից ոգեւորված, պատվի առնելով ծնկի եկար, համբուրեցիր զոհի մարտական դրոշմը եւ զինվորական ձիգ շարքերի առջեւով էլ փողփողացող եռագույնը տարար ու ամրացրիր պատվանդանին: Հասկանալի էր հպարտությունը, քո երազած անկախ հանրապետության մարտական դրոշ ստանալու առաջին պատիվը քո ղեկավարած նորաստեղծ զոհին է շնորհվել: Հետո նույն աննկարագրելի հպարտությամբ զոհի ծննդյան տարեդարձի առթիվ ժամանած հյուրերին ցույց տվեցիր քո նախածեռնությամբ վերակառուցված զորանոցը, հանգստի, ժամանցի համար ստեղծված բոլոր պայմանները, զինվորների նման «զգաստ» աճած զորամասի վարդանանց փորձիկ կենսաբանական այգին: Յուրերի հիացմունքից ու հրճվածքից ժպտում էիր ու շուտասելուկի նման պատմում բազում ծրագրերի մասին: Կարգապահության, կարգ ու կանոնի

մասին քո պահանջը սահմաններ չուներ: Գունդը քո հայրենի տունն էր համարում, որովհետեւ չափից ավելի սրտացավ էիր: Թեւեւ շատ խստապահանջ էիր ենթականերիդ ու զոհի զինվորներիդ նկատմամբ, բայց եւ շատ հոգատար ու նվիրյալ: Ինչ-որ բանից շտապում էիր: Գիշերը ցերեկ դարձրած՝ զոհի կենտրոնում վեր խոյացրիր քո պաշտելի Նժդեհի բազալտե արձանը, վարդաստան դարձրիր երբեմնի չոր ու տատասկոտ տարածքը, լողավազան ու սպորտային բազա կառուցեցիր, մարտական ընկերներիդ զոհվելու վայրերն այցելեցիր, նրանց մայրերին սփոփանքի խոսքեր ասացիր: Էլի թվարկեմ... Որոշեցիր անձամբ կատարել 1915-ին եղեռնագարկ դարձած հնչակ հայրենակցիդ՝ Փարամազի երազանքը՝ հայրենիքում ունենալու քարե ներկայություն: Ընտրել էիր անգամ վայրը, ձեւը... Բազում էին ծրագրեր, մտահոգումներ, պարտավորություններ, երկրիդ, ընկերներիդ, ընտանիքիդ առջեւ: Խստապահանջ էիր նաեւ նրանց նկատմամբ: Ի՞նչ իմանայիր, որ ամենագորի ծրագրերը խափանելու էին քո որոշումները: Ժամանակ չէիր տրամադրում առողջու-

թյանդ, թեւեւ դրա կարիքը շատ-շատ էիր զգում, հանգստանալու կամ բուժվելու մասին խոսելը համարում էիր ավելորդ: Ու մի օր էլ կյանքիդ հուժկու թափանցիկ անսպասելիորեն կանգ առավ, բոլորը անկարող եղան ինչ-որ բան փոխելու: Կանգ առավ սիրտդ, երբ ընդամենը 38-դ էր բոլորում: Բոթին չհավատացին շատերը, որովհետեւ մահը քեզ բազմիցս էր շրջանցել մարտադաշտում, թուրքին դեմ հանդիման, բազում առիթներով, բայց խաղաղ մի օր անպատեհ ձեւով գրկեց ու տարավ հավիտենություն:

Քեզ կորցնելու ավստասանքը մեծ էր: Դեռ մարտական ընկերներդ չէին հաշտվել կորստիդ հետ, երբ կարճ ժամանակ անց քեզ միացավ քո շատ սիրելի Վազգեն սպարաբեռը: Պատկերացնում եմ, թե ինչպիսին կլինեիր ցատունդ ոճրագործների նկատմամբ, գիտեի, որ անսահման էիր սիրում նրան, համարում Մեղրու նվիրյալ: Հաճախ սրտի ցավով ասում էիր, թե սպարապետը ապրում է անանձնական կյանքով, այս երկրին է տվել ոչ միայն երիտասարդությունը, այլեւ սերը, ուրախությունը, բայց մենք չէինք հասկանում: Դու միշտ էիր, Ղեւոնդ, ոչ միայն արժանավայն չզնահատեցիք, այլեւ չկարողացանք պահպանել նրան ու նրա մտանքներին: Հիմա հարկադրված նրանց մասին խոսում ենք անցյալ ժամանակով: Դու էլ, Ղեւոնդ զնդապետ, արդեն 10 տարուց ավելի է, ինչ պատմություն ես դարձել: Փառք սիրելի կողակցիդ՝ Անուշին, որ նաեւ քո մարտական ընկերն էր, որ այդպես հավատարմորեն ամեն ինչ ամուսն է հիշատակող անմար պահելու համար, որ բացակայությունդ չզգացվի: Քո սիրելի Ագարակում տեղադրված խաչքար-մահարձանիդ պարբերաբար այցի են գալիս ընկերներդ, մտերիմներդ, քո ստեղծած զոհի անգամ նորաթուխ զինվորները, որոնք քո մասին գիտեն միայն քեզ ճանաչողների պատմածներից, քո հուշասենյակի նյութերից:

Ագարակը քո անխորտակ ամրոցն էր, իսկ դու՝ նրա աննկուն ու նվիրյալ պաշտպանը: Հիմա մեր բոլորի խոնարհումը՝ քեզ, ագարակցի վաղամեռիկ զնդապետ, դու հայրենապաշտպան դարձար ժամանակի պահանջով, դու, որ մտղեհապաշտ զինվոր էիր հոգով եւ զնդապետ դարձար վաստակով, անունդ անգամ ահ ու սարսափ էր թշնամու համար, նվիրյալն էիր քո ժողովրդի ու քո երկրի, քո սիրասուն լեռների, որոնք միշտ եղել են քո տագնապների լուռ վկան, հաղթանակներիդ բերկրանքի առաջին ունկնդիրը:

Հիմա տանամյակի հեռվից շշջում ենք, հանգիստ եղիր, հրամանատար, քո քարե ներկայությունից անգամ սարսափում է թշնամին: Վստահ եղիր, քո մարտական ընկերներն ամեն ինչ անում են, որ նորից խաղաղ բացվեն արշալույսներն արդեն 60-ամյա դարձած քաղաքի վրա, որ «Ղեւոնդի տղերքի» երգի արձագանքները միշտ զիլ լսվեն մեր անառիկ լեռներում:

ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՅԱՆ



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Խաչքար՝ Արցախյան ազատամարտի ագարակցի նահապետի զինվորների հիշատակը հավերժացնող /1994թ./

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Ազարակը երիտասարդ քաղաք է, եւ նրա առաջին շինարարները քայլում են բնակավայրի փողոցներով, վառ պահում քաղաքի կառուցման մասին հիշողությունները: Ազարակն ուրույն քաղաք է նաեւ նրանով, որ այն կառուցողները հավաքվել են Հայաստանի ու ԽՍՀՄ փարբեր վայրերից, դարձել նրա առաջին բնակիչները:

Ութսունամյա Գառնիկ Վարդանյանը ծնունդով եղեգնածորի էլփին գյուղից է: 1949թ. տարել են Երեւան՝ զինվորական հավաքակալան, սակայն հետո բանակ չեն տարել: Նոր արհեստագործական ուսումնարան էր բացվել, եւ իրենց ուղարկել են այնտեղ սովորելու: Յոթ ամիս հետո նոս 30 հոգու բերել են Ազարակ՝ աշխատելու: Եկել են որպես շինարարներ, ինքը քարտաշ-պատշար է եղել, այնուհետեւ՝ բրիգադավար, կոմբինատի աշխատելուց հետո՝ բուլդոզերավար: «Երբ եկանք, այստեղ ոչինչ չկար, միայն քարեր էին... Մի երկու հատ գոմ կար, օձ ու կարիճ, դատարկ տարածություն, - հիշում է նա: - Դեռ այս տարածքի քարերը պայթեցնում էինք, տեղի հումքով շենք սարքում»:

Յետո սկսել են տուֆ բերել դրսից: Կառուցված առաջին շենքերից էին կոմբինատի հանրակացարանի, երաժշտական դպրոցի շենքերը: Իսկ մինչ հիմնական բնակելիները կառուցելը փոքրիկ քոթեջներ են շինել, որտեղ բնակվում էին բանվորները, շինարարները:

Շինարարություն իրականացնող «Ազարակշին» էր, որի ղեկավար Մ.Մալխասյանին ջերմությամբ ու զովասանքով են հիշում տարեց շինարարները: Կոմբինատի շինարարությունն այլ կազմակերպություն էր իրականացնում:

Բացի Հայաստանի տարբեր վայրերից հավաքված բանվորներից, մոտ 300 աղջիկ էր գործուղվել Ռուսաստանից, որ օգնեն շինարարներին: Նրանցից ոմանք հետագայում ամուսնացան ու հաստատվեցին Ազարակում:

Յոթանասունինամյա Գագիկ Անդրեասյանը Կարճեւանից է: Երբ Ազարակում սկսվեց շինարարությունը, ինքը դեռ կոլտնտեսությունում էր աշխատում: «Եկա 1949 թվին. մեզ՝ 10 հոգուս, հավաքագրեցին եւ ուղարկեցին Քաջարանում վարորդություն սովորելու»:

Սկզբում՝ մինչ ժամանակավոր կացարաններ կառուցելը, Ազարակում դրսից աշխատելու եկած բանվորները՝ մոտ 600 հոգի, բնակվում էին Կարճեւանում: Ուրքով էին գնում-գալիս: «Երբ վարորդություն սովորեցինք, թափափոր ավտոմեքենաներ տվեցին, ու բանվորներին դրանցով էինք տանում-բերում: Այդ մեքենաներով նաեւ քար էինք տեղափոխում»: Գնման կամ բնակելի շենքերը սկսեցին կառուցել 1956-57 թվականներից: Երբ պետական շինարարությունն ավարտեցին, ցանկացողներին թույլատրեցին քաղաքի տարածքում նաեւ սեփական բնակելիների շինարարություն սկսել: Ու Գ.Անդրեասյանն էլ տեղափոխվեց Ազարակ եւ սեփական տուն կառուցեց: Իսկ շինարարությունն այստեղ շարունակվում էր մինչեւ 73 անկախացումը, եւ դեռ ծրագրեր կային՝ ընդլայնելու, մեծացնելու բնակավայրը, միգուցե եւ այն շրջկենտրոն դառնար Մեղրու փոխարեն:


Առաջին բնակիչները հիշում են, որ երբ եկան, այստեղ խմելու ջուր չկար, անապատի էր նման, այնուհետեւ Կարճեւանից է ջուր հասցվել Ազարակ: Յետո պոմպեր են դրվել, ջրամբար է կառուցվել:

Իսկ մինչ քաղաքի ներկա տարածքում շինարարություն սկսելը Քաջարանի արհեստագործական ուսումնարանի շրջանավարտների ուժերով առաջինը կառուցված են եղել կայարանի տարածքի շենքերը: Գ.Անդրեասյանը հետո բուլդոզերավար, եռակցող է աշխատել: Իսկ առիասարակ, ավանի առաջին երիտասարդ շինարարները, վարորդները իրենք վարպետ ու ուսուցիչ են դարձել շինարարների հետագա սերունդների համար:

Ինչո՞ւ հենց այստեղ կառուցվեց Ազարակը. Գագիկ Անդրեասյանը պատմում է, որ նախապես Ազարակը պիտի կառուցվեր Կարճեւանի հետեւի մասում, որն իրենք Ըրթածոր ենք անվանում, որտեղ գյուղի այգիներն են: Մալխասյանը եկել էր Կարճեւան, հավաքել մեծերին, զրուցել տարածքների, կլիմայի մասին, խորհուրդ հարցրել: Ու հուշել էին վերոնշյալ տարածքը՝ խորհուրդ չտալով ներկայիս բամբոս տարածքում կառուցել: «Բայց հետո, ինչ-ինչ հարմարություններից ելնելով, երեւի հաշվի առնելով նաեւ, որ երկաթգծի կայարանը մոտ է, մյուս տարածքում էլ շատ այգիներ պիտի փչանային, այստեղ կառուցեցին...»:



Ելփինցի Գառնիկ Վարդանյանը (ձախից) եւ Կարճեւանցի Գագիկ Անդրեասյանը (աջից) ոչ միայն Ազարակի առաջին շինարարներից են, այլեւ հեղու բարեկամներ են դարձել: «Կարճեւանի փեսա է, լավ ենք պահել, դրա համար փարիքը չի երեւում», - Գ.Վարդանյանի մասին կարկավոր ասում է Գ.Անդրեասյանը:



Ազարակում տարբեր վայրերից են բնակիչներ հավաքվել, իսկ ամեն բնակավայր ունի իր սովորույթներն ու «բնավորությունը»: Նշում են, որ խաղաղ համակեցությունը ստացվել է... Գառնիկ Վարդանյանը չի փոշմանել, որ հաստատվել ու իր կյանքի հետագա ուղին անցել է Ազարակում: «Այնքան սիրով էինք ապրում ու միասին աշխատում, 19 տարեկանում եկա այստեղ, երբ դեռ չգիտեի էլ աշխատանքն ինչ է, այստեղ կայացա...»:

Իսկ այլազգիներից այստեղ հիմնականում ռուսներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ էին ապրում, ի դեպ, ադրբեջանցիները հիմնականում երկաթգծի կայարանի շրջակայքում էին հաստատվել: 1990-ականներից հետո այլազգիների հիմնական մասը հեռացավ Ազարակից...

Ավանում հաստատված առաջին ընտանիքների զավակները Կարճեւանի դպրոց էին հաճախում, հետո բնակավայրն ունեցավ իր դպրոցը, կային նաեւ ռուսական եւ գիշերային

դպրոցներ: Երեկոները ֆուտբոլ էին խաղում, մշակույթի պալատ հաճախում:

Գագիկ Անդրեասյանը բացի նրանից, որ 26 տարի աշխատել է այստեղ բացված պրոֆտեխնուսումնարանում, վարորդներ պատրաստել, նաեւ ինքնուս երաժիշտ լինելով՝ մասնակցություն է բերել նորաստեղծ ավանի մշակութային կյանքի աշխուժացմանը: Փոքր տարիքում դափ է խփել, հետո թառ նվագել ու երգել, նաեւ ուսումնարանում ինքնագործ խումբ ղեկավարել, ժողգործիքների անսամբլ կազմակերպել, խմբեր ունեցել թե՛ ավանի, թե՛ գյուղի մշակույթի պալատներում, հյուրախաղերի մեկնել: Ութսունամյա ազարակցին մինչ այժմ էլ նվագում է...

Տարեցներն ու առաջին շինարարները միաբերան նշում են Զովհաննես Ներսիսյանի անունը, որն այն տարիներին ամենաբարձր պարգև է արժանացել: Իրենք պատվոգրեր են ստացել, իսկ հայտնի պատշարը՝ 1966-ին Լենինի շքանշան, եղել է սոցցոման գերազանցիկ:

Զովհաննես Ներսիսյանը ծնվել է Մարտունու Ներքին Գետաշեն գյուղում, Ազարակ է եկել 1949-ին, առաջին շինարարներից է: Նրան էլ այստեղ են բերել Երեւանում ուսումնարանն ավարտելուց հետո: Ապրել է Կարճեւանում, հետո ավանում ստան սարքել: Ընթացքում փորձել է վերադառնալ ու նորից ապրել հայրենի Մարտունու, բայց չի հարմարվել ու կրկին եկել է Ազարակ: «Տեսա՝ այստեղ ընտանիք պահել չեմ կարող, ուշքս ու միտքս այստեղ էր, 10 ամիս մնացինք ու հետ եկանք: Վերջնական դարձա տեղացի»: Գոհ է բնիկների ընդունելությունից, չի թաքցնում եւ նշում է, որ իրենք «բռի» եկել, իրենց դաստիարակությունը Կարճեւանում են ստացել...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



Հայրենի պառչար Զովհաննես Ներսիսյանը փորձել է կրկին հաստատվել հայրենի Մարտունուում, բայց ի վերջո, վերադարձել ու շարունակում է ապրել Ազարակում:

Վայրն այս, որ Ագարակ է կոչվում հիմա

■ Պատմական ակնարկ



Լուսավորում: Ա. Ավագյան

ՈՒՐԵՐՆ ԷԿՆԱՆՏԻ

Դեպի Արեւիք ճամփորդելիս Արաքսին ու մեղրեցիներին տեսնողը Տաշտունի լեռնանցքում արտնդաբար անվախորդորեն կեսամյա գլորքից հետո մոտ 30 կմ անցնելով, 21-րդ դարակազմի շայաստանը, բարե՛, կվերջանա, Վասպուրական աշխարհի Պարսպատունիք գավառից անջրպետվելով մայր Արաքսով:

Սյունյաց (Չանգեզուրի) լեռնաշղթային գրեթե զուգահեռվելով՝ միմյանց ազուցած լեռնալանջերը Աժդանական-Կապուտջուղից մեղմաթեք իջնում են դեպի Կարծեաճի դրախտաշունչ դաշտը: Եթե երբեք ձեռքդ ես առել Յայր Միքայել Չանյանի Պատմությունը, ապա սիրտդ կտրոփի: Արաքսը դրախտի չորս գետերից Գեհունն է (ՇՆՆդոց, 2-13), եւ գիտուններից շատերն այն համոզման են, որ Դրախտն էլ Մեծ Յայթունն էր գտնվում:

130 կմ-անոց լեռնաշղթան Ծիրանածորով ճեղքած սրբազան մայր գետը, կարծես, ուրարտական եւ ասորական դժնադեմ արքաների հաղթական ջրփռիչներն իր մշտակա շառաչով դաջում է այսօրվոց Արեւիք եւ անդրկողմ Պարսպատունյաց լեռներին: Մեղրու աղանաղար կիրճի վերաբերյալ հազարան առասպել ու ասք կա...

«Նեղվելով ժայռերի մեջ, Արաքսը կազմում է քարավազներ եւ ահագին աղմուկ է հանում անձուկ ճեղքվածքների մեջ: Ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի տեսնել այսքան ուժգնությամբ արգելքների դեմ կռվող մի ձետ, որ փրփրած՝ այս ու այն կողմ է զարնվում՝ լցնելով նեղ կիրճը ջրային փոշիով» (Լեո, ըստ Ալիշանի): Արգիշտի 1-ինը (մ.թ.ա. 8-րդ դար) մի շքեղ արձանագրության մեջ այս երկրամասն անվանել է Մատուրայանի (Արեւիք):

Խորենացու «Աշխարհացոյց» մատյանում Մեղրու տարածաշրջանն Արեւիք է կոչվում: Գավառանունը ծագել է մեր նախաքրիստոս նախնիների արեւապաշտությունից: Ըստ Ա.Ումանյանի դիվանի՝ Մեղրի անունը լույսի (կրակի) աստված Միհրի աղավաղման ձեւն է, Շվաբիճոր դիցարանը նվիրված էր Վանի թագավորության արեւի աստված Շիվինին, Վահրավար գյուղանվան վահ-ը հնդեվրոպական ծագման արեւն է:

13-րդ դարում Սյունիքի պատմիչ Յայր Ստեփանոսը թվարկել է Սյունիքի 12 գավառները. «Իններորդը՝ Արեւիք գավառը, որ այժմ կոչվում է Տաշտուն եւ Մեղրի» (Օրբ., 9): Տաթևի վանքի տասներորդարյան հարկացուցակում Արեւիքի 24 գյուղերը նշված են հարկաչափերով (դրամ), այդ թվում՝ Մեղրու վանք-20, Կարծեաճ-12, Տաշտուն-12, Ագարակ-8 (Օրբ., 37): Նոր հարկացուցակում (1781թ.), երբ Մեղրին ներկայացված է երկու՝ Կաքավաբերդ եւ Մացրու գավառակներով, հարկատու գյուղերը 36 են, հարկաչափերը՝ դասիկաններով: Կաքավաբերդում՝ Մեղրի-15600, Կարծեաճ-3400, Տաշտուն-5650, Ագարակ-3450: Ակներե է, որ 18-րդ դարում Ագարակը Կարծեաճի համեմատությամբ մեծ համայնք էր:

Ագարակ գյուղանունը հնդեվրոպական ծագման անդաստան, արտ, հերկ իմաստներից է (Աճ.), բարբառում՝ Գիգերակ: Ի դեպ, համանուն քաղաքի 60-ամյա հոբելյանը պատրանքի առիթ չպետք է լինի՝ Ագարակը նոր անուն համարելու համար:

Յայկական լեռնաշխարհում պատմականորեն հաշվվում են 60-ից ավելի նույնանուն բնակավայրեր: Ագարակ անվամբ գյու-

ղեր կային Ծղուկ (Միսիան), Գաբանդ (Գորիս) գավառներում, շեն է Բաղքի (Կապան) Ագարակը, որը մեկբանիստ էր: Բայց Մեղրու Ագարակի համբավը ելել է հանրապետության սահմաններից էլ դուրս: Սա արդեն քաղաք է, որ փթթում է համանուն լքյալ գյուղից 6 կմ դեպի հարավ:

Բնակավայրերն էլ, ըստ երեսույթին, ունեն իրենց ճակատագրերն ու բախտի աստղերը: մի մասը վերանուն է, մեկերկուսի աստղը շողում ու վերածում են քաղաքի: Եթե վաղմիջնադարյան Սյունիքում հայտնի էր Նակորգան քաղաքը (խուրափերի կամրջի մոտ), միջնադարում՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանը (970-1103), ապա մերօրյա Սյունիքը, տեսեք, քաղաքահալության միտում ունի (յոթնաքաղաք Սյունիք): Եվ դեռ կան բնակավայրեր, որոնք գալիք սերունդները «շահաբանիստ» (շահաբ-քաղաքապետ) կդարձնեն: Արեւիքն առինքնուն է հայոց պատմության նվիրական դրվագներով:

Գողթն (բարբառում՝ Կոխտան) եւ Արեւիք գավառները հարեանուն են: Նրանց տարածքների ջրբաժանն է գրեթե միջօրեականի ուղղությամբ ձգվող Սյունիքի լեռնաշղթան, որը Արաքսը ճեղքել ու գոյացրել է Ծիրանածորը՝ Մեղրու կիրճը: Դեռ Պատմահայրն է գրել. «Գողթնեցիների մասին գտա պատմված, թե նրանք անկասկած Միսիական հատվածն են կազմում» (2-ը): Սյունյաց պատմիչ Ստ.Օրբելյանը հաղորդում է, որ հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները եւ նշում Բարդուղիմեոս առաքյալի քարոզչության վայրերը. «Պարսկաստանից վերադառնալիս Բարդուղիմեոսն իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով եւ անցնելով Երասխ գետը՝ մտնում է Միսիականի սահմանները, սկսում է քարոզել Որդվատ գյուղում, Արեւիք գավառում, Բաղքում եւ Գողթնում» (Օրբ., 2):

Յարկավ, Ագարակի հոբելյանն անգուզական փայլ ու խորհուրդ ունի, որովհետեւ այս վայրերը մետաղային են: Սուրբ Գողթնում «միտքը դրեք մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել» (խոր., 3-խէ), եւ, «այն պարկեշտ մարմինը թաղելու համար մի մասն առաջարկում էր տանել Գողթն, որտեղ առաջին անգամ ուսուցել էր» (3-ԿԷ):

Մեր լեռնաշխարհի ճգնավայրերը հայտնի են պատմիչների երկերից ու բանավոր ավանդազրույցներից: «Յետն առնում էր աշակերտներից մի քանիսին եւ գնում լեռնակայք, սորամուտ, ծակախիթ էր ունենում» (Կոր., ԻԲ): Կորյուն Սթանյելու այս պատկերավոր նկարագրությունը ցայժմ արձագանքներ ունի Աժդանական-Կապուտջուղին առնչվող պատմություններում, որոնք գրառել են Ա.Ղանալանյանը, Ս.Խանգաղյանը եւ ուրիշներ:

Սուրբ Գողթնը լուսավորելուց հետո ելավ սահմանակից Սյունյական աշխարհը: «Այստեղ էլ աստվածասեր հնազանդությանը ընդունեց նրան Սյունիքի իշխանը, որի անունը Վաղինակ էր» (Կոր., ԺԴ): Կռահել է, որ Վաղինակ Սյունիք սրբին դիմավորել է Կարծեաճի դաշտում (Արեւիք տուն), կկանգնայի՝ ներկա Ագարակի տեղանքում:

Վաղնջական ժամանակներից սյունեցու համար Արեւիք-Մեղրին հարազատ օրրան է՝ պտղի ու մրգի շտեմարան, մեղրեցին՝ արժանապատվության ու վեհանձնության տիպար. տարեցների բերանում խոսք կա՝ մեղրեցին իր թանին թոռ չի ասի: Իսկ Տիգրան ավուս կասեր՝ առաջին ճերմակ օձիքը մեղրեցու հագին են տեսել:

Սարիեսո Շահինյանը գրել է. « Եթե հյուր գնաք մեղրեցու տունը, ձեզ կրվա, թե քաղաքաբնակ սովետական ծառայողի բնակարանում եք գտնվում: Ընտանիքից ընտանիք շարունակվող տոհմական իտելիգենցիա...»: Այնուհետեւ. «Ճանապարհորդն առանց բազատություններ էլ հասկանում է, թե Մեղրին

ինչու է «Ատլանտիդա». աջից եւ ձախից գաղիկող լեռներ են, որոնք նման են վայրի ցուլի եղջյուրների, որ դուրս է պրծել այգիների խիտ թավուտի միջից: Ամբողջ աշխարհից կտրված լինելու զգացում է համակում ձեզ, կարծես ընկած լինեք մի ճեղք, որտեղ ելք չկա դեպի ռեսպուբլիկայի մնացած տերիտորիան» (Ճանապարհորդություն Սովետ. Յայաստանում, էջ 181):

Կարծեաճի դաշտը, որի տարածքում է Ագարակը, դավիթբեկյան հաղթանակների օրրան է: Չորավարն այստեղից Միսիթար հազարապետին ու Տեր-Ավետիսին 66 մարդով ուղարկեց ձախափ Դուզալ, Քյազուն խանի մոտ՝ օսմանցիների դեմ համագործակցության առաջարկով: Միացյալ ուժերը Կարծեաճի դաշտից փախուստի մատնեցին թշնամուն, եւ Միսիթարն առաջարկեց խանին միասնական զորքով գնալ ու փակել դեպի Օրդուբադ տանող Ծիրանածորը (Ուզունբանի կիրճը): Բայց խաբը հարձակման ժամին լքեց Միսիթարին, եւ հայ զորականները, չերկնչելով, միայնակ կտրեցին կիրճն ու հաղթեցին:

Յայկական «Ատլանտիդայում» մետաղ են արդյունահանել անհիշելի ժամանակներից: Տարածքում հայտնաբերվել են Բրոնզի եւ երկաթի դարաշրջանների բնորոշ բազմաթիվ իրեր ու նյութական մնացորդներ: Ըստ Յանալլախ Ղազվինցու՝ 14-րդ դարի սկզբներին Ղափանում ընդհատվել էր մետաղի հանույթը, մինչդեռ Մեղրու նահիայում այն շարունակվում էր: Եվրոպացի ճանապարհորդ Դյուրան Մեղրին դրախտավայր է համարել, հիշատակել, որ Կարծեաճի մոտ 1890թ. արծաթ էին արդյունահանում: Ալիշանը ճշտել է, որ խոսքը հին Ագարակ գյուղի մասին է: «Ի հրահալելեաց՝ միայն պղինձ հատանի առատապես... յԱրեւիս յԱգարակ գեղք» (էջ5): 1805թ., երբ տարածաշրջանը ոչ պաշտոնապես ներառվել էր Ռուսաստանի կազմում, Ագարակի հանքերը շահագործում էին հույները: Նրանց միջոցով Ագարակ գյուղի մոտ 1817թ. հիմնարկվեց Սյունիքում (Չանգեզուրում) առաջին պղնձածուլարանը: Յանալլախի հայթայթումը դժվարացել էր, եւ ծուլարանը երկար ժամանակ չաշխատեց: 1827թ. Ագարակում իր նկարագրությունն է կազմել Թիֆլիսի լեռնային էքսպեդիցիայի աստիճանավոր Վասկաբոյնիկովը: Արդեն 1844թ. Չուլեցի Յակոբ Ռոզովը կարողացավ վերսկսել պղնձի ծուլումը: Ըստ ՅՄԻ-ի՝ հանքավայրն ընդհատումներով շահագործվել է 1857-58, 1863-69, 1905-13 թվականներին, ինչպես նաեւ՝ Յայրենական մեծ պատերազմից առաջ, կարճ ժամանակով:


Բնաշխարհի գլխիչ ինքնատիպությունն անտարբեր չի թողել ճանապարհորդներին ու հանքաբան-հետազոտողներին: Մեղրու կիրճը նկարագրել է կաթողիկոս Աբ. Կրետացին 1736թ.: Երկրաբանական հետազոտությունների նպատակով 1844-ին Ագարակում եղել են «երկրաբանության հայր», գերմանացի Յերման Աբիխն ու նրան ուղեկցող Խաչատուր Աբովյանը: 1881-ին տարածաշրջան է այցելել Րաֆֆին: 1890թ. ֆրանսիացի մարդաբան եւ հետախույզ Էռնեստ Շանդրը տիկնոջ հետ Փոքր թաղի ավերակներում հայտնաբերել է պղնձե զարդեր ու զենքեր:

Յին Ագարակի ավերակները գտնվում են Կուրիս գյուղից մեկ կիլոմետր հարավ-արեւելք: Յայթմ կանգուն է 17-րդ դարում կառուցված Սբ Ամենափրկիչ եկեղեցին:

Քաղաքը, որ գունավոր մետաղամշակության ոստան է, դարերի սանդուղքի վրա վերընձուլվել է որպես հինավուրց Ագարակ գյուղի առաջավայր եւ շարունակություն, Ծաղկառատ (Գյուլարդ) լեռնաշղթայի արեւելակողմում՝ Ջավխտ, Սբ Գուլհանեն եւ Կուրկուտիայ լեռնազապեների հովանու մերթը: Նկատելի է, որ մյուս՝ Մեղրի քաղաքի նկատմամբ նորօրյա քաղաքի բարքն առաջանցուկ ու տիրական է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
ԱԳԱՐԱԿԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԵՎ
ԱՎԱԳԱՆՈՒՆ

Ագարակ
քաղաքի
գինանշանը
/տարբերակ, հեղինակ՝ Ռոբերտ
Կամոյան/




Ագարակ քաղաքի գինանշանն արտացոլում է տարածաշրջանի աշխարհագրական եւ բնական առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը Յայաստանի Յանալլախ-Քյազունի համար, ազգաբնակչության հիմնական զործունեության ուղղություններն ու սովորույթները: Չինանշանի կանաչ հատվածը խորհրդանշում է բնությունն ու նշան է հույսի ու առատության: Վահանը խորհրդանշում է Յայաստանի հարավային դարպասը, իսկ վահանի վրա պատկերված բանալին՝ այդ դարպասի բանալին, որը հսկվում եւ պահպանվում է սրով: Չինանշանի ներքեւի հատվածը՝ ոսկեգույնը, խորհրդանշում է տարածաշրջանի ընդերքը եւ բնական ռեսուրսների բազմազանությունն ու հարստությունը, հորատման մուրճը՝ հանքարդյունաբերությունը, որը տնտեսության հիմնական ոլորտն է: Չինանշանի աջ հատվածը՝ կարմիրը, խորհրդանշում է արիություն, կյանք եւ հաջողություն: Խաղողի վազը խորհրդանշում է բերքառատություն: Նուրը խորհրդանշում է պտղաբերություն, ողջախոհություն, երկրագործություն, միասնական տիեզերք, Աստծո շնորհների բազմազանություն:

ԱՐԽԻՎ

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մոսկվայի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի 1954 թ. հոկտեմբերի 1-ի որոշումը



■ Ազարակ

Թվեր ու փաստեր

- Ազարակ քաղաքը գտնվում է 33 հարավարևելյան մասում, սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը, գտնվում է Հայաստանը Իրանին կապող ավտոմայրուղուց 1 կմ հեռավորության վրա:
- Քաղաքի տարածքը կազմում է 326,0 հա:
- Ազարակի ազգաբնակչությունը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ 4 800 է, որի 49 տոկոսն աշխատունակ է: Քաղաքի գլխավոր հատակագծի նախագծման համար բնակչության հաշվարկային թիվ է ընդունվել 7 000-ը:
- Քաղաքի միջին բացարձակ բարձրությունը կազմում է մոտ 600մ:
- Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 14,1° C է: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 41,0° C է, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ - 22,0° C:
- Տարեկան տեղումների քանակը 231 օր է:
- Չյան ծածկույթի հաստությունը հասնում է 27մ-ի:
- Տարածքում հանդիպում են 33 կարմիր գրքում գրանցված 14 բուսատեսակ եւ 26 կենդանատեսակ:
- Ազարակի հարավարևմտյան մասում պահպանվել է բնապահպանական տեսակետից շատ արժեքավոր կիսաանապատային էկոհամակարգ (Օիրանածոր), որը 100-120 հա տարածք է զբաղեցնում: Այն յուրօրինակ միջանցք է կենսատափաստանային եւ կիսաանապատային գոտուն բնորոշ ֆաունայի եւ ֆլորայի ներկայացուցիչների համար:

Քաղաքային (ավանային) խորհրդի գործկոմի նախագահներն ու քաղաքապետները

- Խաչատրյան Սոս Մակարի 1954-1969թթ.
- Շարիրյան Սվեթիկ Շամիրի 1969-1974թթ.
- Կոստանյան Նինա Իվանի 1974-1982թթ.
- Գասպարյան Սարգիս Ջովհաննեսի 1982-1985թթ.
- Չեղորգյան Չեղեղն Ջրանրի 1985-1987թթ.
- Առաքելյան Լիրա Սամվելի 1987-1996թթ.
- Խաչատրյան Մայիս Աշոտի 1996-2002թթ.
- Սարգսյան Արմեն Սերյոժայի 2002-2008թթ.
- Զաքարյան Մխիթար Սեյրանի 2008թ.-մ/ա

ՀԶԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հիգերակ-Ագարակ

ՄԵԼԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Կարոտն այրող զգացում է, որ այսօր ինձ էլ է պատել, երբ ցանկանում եմ հնարավոր աճող ինձ սերկայացնել իմ հայրիկի, իմ նախնիների ծննդավայրի՝

երազային այն դրախտի մասին, որ կոչվել է Ագարակ, իրենց իսկ բարբառով՝ Հիգերակ:

Այո, փոքր է եղել այդ բնակավայրը, բայց այստեղ ես ապրել, արարել եմ սերունդներ եմ տվել արժանավոր շատ մարդիկ՝ աշխատասեր, հողատեր, քարից հաց ստեղծող, մարդատեր եմ ազնվագույն, որոնք իրենց հոգու ողջ կորովն ու կրակն են դրել գյուղի համար: Ինքս չեմ ապրել այնտեղ, բայց այնքան եմ լսել հայրիկիցս, տատիկիցս, հորեղբայրներիցս եւ ծանոթ-բարեկամներիցս, որ կարծես իմ եւթյունն էլ է այնտեղ ծեփվորվել: Հոգու ողջ խորությամբ էլ հիանում եմ հպարտանում եմ «հին» ագարակցիներով, եւ եթե ընթերցողը ճանաչում է որեւէ ագարակցու, կհանդուրժի իմ գնահատականների մեջ:

Անշահախնդիր, խելացի, ազնիվ, պրպտող, երկրին նվիրված եմ ագարակցիները եւ ինչպես կասեր տատս՝ են խաչը վկա, մեկ էլ մինչեւ օրս դեռ կանգուն եկեղեցին՝ գյուղի հոգեւոր պաշտպանը միակ:

Տարեց գյուղացիների վկայությամբ (երկարակյաց են եղել շատերը) եւ տրամաբանական ենթադրությամբ տարբեր ժամանակներում գյուղը ձեռքից ձեռք է անցել մերթ՝ պարսիկների, մերթ՝ թուրքերի միջև:

94 տարի ապրած Մուշեղ Գեորգյանի (երկար տարիներ Արարատ-ցեմենտի գործարանի, ապա Արթիկտուֆի տնօրեն, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, Քանաքեռ հեկի կառուցման ղեկավարներից մեկը) «Հուշերում» ասվում է. «Մինչեւ 1914 թվականը քիթի փոքր կտորի վրա ռուսերն զբղջած էր հետեւյալը. «Ագարակը բաղկացած է յոթ ծխից» ու փակցված Մուսիենց տան պատին»:

Հետագայում՝ մինչեւ 1930-ական թթ. ծխերի թիվը հասել է 50-ի: Ընդ որում, այդ 7 ծուխը գաղթած է եղել Պարսկաստանից:

Ագարակ անունը, իրոք, համապատասխանում էր գյուղի թե՛ վայրին, թե՛ բարեբերությանը: Այն դրախտավայրի էր նման, իսկական հանգստավայր էր:

Ագարակը՝ Կաթավաթերդի չորորդ գյուղը (Կուրիս, Գուղեմնիս, Վահրավար, Ագարակ), փոքր էր, ճիշտ է, բայց ուներ բարեբեր, պտղատու այգիներ, ոսկեհատիկ խաղողի՝ մինչեւ Լեհվազ գյուղը ձգվող տարածքներ, ճաշակով եւ կրկիկ տնամերձներ: Ու գյուղացիներն այդ անարատ բարիքներով էլ սիրում էին հյուրասիրել եկվորներին, սեղաններ բացել տան առաջ՝ բարի վայելում ցանկանալով հյուրերին: Եվ երեւի դրա համար է, որ ժողովրդական բանավոր մի խաղիկի մեջ այսպես է ասվում.

Նոռնու պտուղ կըրճեվան...

Սուփրա-սեղան՝ Հիգերակ...

Ագարակը աչքն էր Կաթավաթերդի: Ճիշտ է, նրա հարավային մասում էր, բայց անցողիկներին «Բարի լույս» մաղթելով՝ քաղցր աչքով ճանապարհում էր վերին գյուղերը: Ի դեպ, Կաթավաթերդ անունն էլ պատահա-

կան չէր այդ վայրի համար: Մինչեւ 1930 թվականը՝ հանքի որոնողական աշխատանքները, տասնյակ հազարավոր կաթավաթեր էին ապրում, ձագ հանում, անուշ կախ-կղաներով լցնում շուրջբոլորը: Հանքահետախուզական աշխատանքների հետեւանքով, ցանքատարածքների կրճատման պատճառով մարդկանցից շուտ թռան-զնացին կաթավաթերը. բերդն անայացավ, դատարկվեց աստիճանաբար:

Հիշում եմ ագարակցիները, որ երանելի առավոտներ էին բացվում կաթավաթերի կախ-կղաներով եւ պարտեզներում ծվարած տխրակների դայլայլով: Արեգակի դեղձան շողերով էր բացվում գյուղի օրը, աստղալից մութով պատվում տաս-

րած իրենց օգտակարության մասին գովեստի խոսքեր ասել, կարոտով հիշել եւ օրհնանք մաղթել ու գնահատել:

Այո, շատ են նրանք. գիտության, արվեստի, արդյունաբերության թե շինարարության, մետաքսագործության (Շուշիի մետաքսագործարանի հիմնադիրն ագարակցի Համբարձումյանն է եղել), թե հողագործության բնագավառում, Հայրենական մեծ պատերազմում, երեկ, այսօր, նաեւ վաղը:

Նրանք Գեորգյանների, Կանդազյանների, Ավետիսյանների, Համբարձումյանների, Ստեփանյանների ժառանգներն են, իրենց տոհմածառի ճյուղերը: Բազմաճյուղ տոհմածառի, թերեւս, ամենաշնամավորներից են

1948թ. գյուղը դատարկվեց, գյուղացիները պետք է հեռանային,



Հիգերակ - Ագարակից ցայժմ կանգուն է մնացել XVII դարում կառուցված Սբ Ամենափրկիչ եկեղեցին

նյակ տները: Գյուղի միջով հոսող ջարածի, սառնորակ գետակն էլ քաղցր միճ էր բերում վաստակած շինակահին, որ դեռ չգիտեր, թե ինչ բանկարծեք մետաղի հանքի վրա է ապրում:

Երեւի այդ չքմաղ բնությունն ու էլ ավելի դյուրիչ առավոտներն էին պատճառներից մեկը, որ նախկին ագարակցի, այժմ երեւանաբնակ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիդա Գեորգյանը դարձավ նարեկագետ եւ չմարող ոգեւորությամբ այսօր էլ արտասանում է Նարեկացու «Տաղերը».

Շուշան շողեր հովտին, Շողշողեր դեմն արեգական...

Եվ վերջապես, ի՞նչը պատճառ եղավ այդքան զովական գյուղի վերացմանը:

Դեռես 19-րդ դարի սկզբներին Ագարակի տարածքում գտնվող «մադան» կոչվող վայրում բնակություն էին հաստատել մի երկու ընտանիք՝ ազգությամբ հույն, որոնք Պարսկաստանով եկել-հասել էին Մեղրի, ապա՝ Ագարակ եւ զբաղվում էին պղնձի հանույթով: Նրանք պղնձը կորզում էին հասարակ մեթոդով: Մինչեւ օրս էլ պահպանվել են պղնձի ձուլումից մնացած թափոններ ձորում բխող աղբյուրի եզրերին, որ այժմյա բաց հանքի ամենացածր կետն է: Այդ աղբյուրի ջուրը, ի դեպ, եւժիչ էր. պղնձաջրով վերացնում էին քոս հիվանդությունը:

Փաստորեն, պղնձահանույթի սկզբնավորողները հենց նրանք են եղել՝ Ապուսովը, Թեոդորը, Ստեփանը: Երկար տարիներ ապրելով այստեղ՝ նրանք «հայացան», ոճանք ամուսնացան հայ աղջիկների հետ:

Տրվեցին: Տրվեցին տարբեր վայրեր: Տխրեցին Ագարակը եզերող հի-

նավոր ընկուզենիները, ճյուղ ճյուղի գարկվեցին, որոնք օտար քամիներից պաշտպանում էին գյուղը. ընկավ եւ գյուղի կենտրոնի հսկա ընկուզենին, որի ճղակոտոր մասերը հանգան վարպետ Սիմոնի՝ շալակով բերված, առվի վրա որպես կամուրջ ձգված կեստոննամոց սալաքարի վրա: Ի դեպ, երբ հին ագարակցիները հավաքվել էին 1967 թվին, բուրիին հետաքրքրում էր՝ արդյո՞ք մնացել է այդ քարը, ու կրկին գարնանը պատմում էին միմյանց, թե ի՞նչ ուժի տեր էր վարպետ Սիմոնը, ինչպե՞ս է բերել այն:

Ավակեցին նոր ժամանակներ: Հանքահանության հզոր ձեռքը ծանր իջավ հովվերգական կյանքով ապրող նահապետական գյուղի, կուսական բնույթն ու կրկին գարնանական աշխատանքներից անցան հանքահանության: Գլխատվեցին սարերը. երկրին մետաղ է պետք: 1953 թվականից սկսվեցին հողա-յին աշխատանքները, իսկ 1957-ից՝ հանքի բացումը:

Ո՛ւր գնացին ագարակցիները (հիգերակցիները): Գնացին՝ ուր կարողացան՝ Մեղրի, Երեւան, Տաշքենդ եւ այլուր: Սակայն ուր էլ հասել են, իրենց հետ տարել են մեղրեցու քաղցր ամուսն ու համը, Ազովիսում սովորած իրենց արհեստների ոճն ու ճաշակը, իրենց՝ բնությունից օժտված հոգու հարստությունը, բարոյական կերպարը: Յոթից հիսունի, դեռ ավելիին հասած ընտանիքների շառավիղներից ցանկացածի մասին կարելի է ստեղծագործություններ գրել, երկրին նվի-

րած իրենց օգտակարության մասին գովեստի խոսքեր ասել, կարոտով հիշել եւ օրհնանք մաղթել ու գնահատել:

Այո, շատ են նրանք. գիտության, արվեստի, արդյունաբերության թե շինարարության, մետաքսագործության (Շուշիի մետաքսագործարանի հիմնադիրն ագարակցի Համբարձումյանն է եղել), թե հողագործության բնագավառում, Հայրենական մեծ պատերազմում, երեկ, այսօր, նաեւ վաղը:

Նրանք Գեորգյանների, Կանդազյանների, Ավետիսյանների, Համբարձումյանների, Ստեփանյանների ժառանգներն են, իրենց տոհմածառի ճյուղերը: Բազմաճյուղ տոհմածառի, թերեւս, ամենաշնամավորներից են

Արեւնոյան երեք իմաստուններ

Հարված Խ.Արեւյանի համանուն հոդվածից

Ինձ համար անմոռանալի 1844 թվականի հունիսի կեսերին պ. Աբիսի հետ գիտական նպատակով անցնելով մեր սահմանամերձ լեռների կորդոնի (զինափակ) ամբողջ գիծը, որ ձգվում է Կողբից մինչեւ Մեղրու գեղեցիկ հովիտը, - վերջինս կազմում է Ղարաբաղի եւ Նախիջեւանի սահմանը, - մենք նպատակ ունեինք ուսումնասիրել Արարատից այն կողմ գտնվող Մակուի խամությունը Պարսկաստանում եւ Բայազետի փաշայությունը Թուրքիայում, որպեսզի ավելի լրիվ պատկերացում ունենայինք Ծեր-Եռան մասին...

Խ.Արեւյան, Երկերի լիակապար ժողովածու, յոթերորդ հատոր, Երեւան, 1956

Մեղրու շրջանի միացումը Ռուսաստանին

1805 թվականի մայիսի 14-ին Գյանջայի եւ Ղարաբաղի սահմանագլխին՝ Քյուրաքչայ գետի ափին խփված վրանում, հանդիսավոր իրադրության պայմաններում, գեներալ Ցիցիանովը եւ Իբրահիմ խանը պայմանագիր ստորագրեցին Ղարաբաղի՝ ռուսական հպատակությունը ընդունելու մասին: Մայիսի 21-ին, Քյուրաքչայի ափին նույնպիսի պայմանագիր ստորագրեց նաեւ Շաքիի Սելիմ խանը:

Ղարաբաղի հետ միասին, Քյուրաքչայի պայմանագրով, Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաեւ Ղափանի, Գորիսի եւ Սիսիանի շրջանները: Այդ պայմանագրով թեպետ Մեղրին եւս համարվեց Ռուսաստանին միացված, բայց այն գրավվեց Աբաս-Միրզայի կողմից եւ վերջնականապես Ռուսաստանին միացվեց Թուրքմենչայի պայմանագրով:

1813 Վրաստանի կառավարչապետ եւ ռուսական զորքերի իրամանատար, գեներալ Ա.Տ. Ռոտչևելը Ղարաբաղում՝ Գյուլիստանի ինքնավանում, հանդիպեց շախի լիազոր ներկայացուցիչ Միրզա-Աբուլ-Հասան խանի հետ եւ սկսեց հաշտության բանակցությունները: Այն ավարտվեց հոկտեմբերի 12 (24)-ին կնքված պայմանագրով: Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Ղաղստանի ու Վրաստանի, ինչպես եւ Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խամությունների, Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի, Չանգեզուր-Ղափանի եւ Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին:

1828 թ. փետրվարի 10/12-ին ուղիղ կեսգիշերին Թուրքմենչայում (Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա ընկած փոքրիկ գյուղում) Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ երկկողմանի հաշտության պայմանագիր կնքվեց: Ռուսաստանի կողմից պայմանագիրը ստորագրեցին գեներալ Ի.Պասկևիչը եւ պետական խորհրդական Օբրեզկովը, իսկ Պարսկաստանի կողմից՝ գահաժառանգ Աբաս-Միրզան:

Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում մեծ դեր խաղաց Ա.Ս.Գրիբոլեդովը: Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանի հարավային սահմանները տարածվեցին մինչեւ Կուր-Արաքս-Արարատ գիծը:

Ջավեն Գրիգորյան «Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին»

» ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Ագարակ. փարանցիկ ուղիների գլխավոր հանգուցակետը հարավային Հայաստանում



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի



Անկախացումից առաջ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ շփում չուներ: 1992թ. մայիսի 11-ին բացվեց Մեղրու մաքսակետը (այն ներկա վարչական շենքում չէր): 1998թ. մաքսակետն ունեցավ ներկայիս վարչական շենքը՝ իր փարածքով: Այսօրեղ փարեկան միջինը 27-28 հազար բեռնատար մեքենաների մուտք կա: Հայաստանի խոշոր մաքսակետերից է:

Իրան-Հայաստան գազատարի շինարարությունն սկսվեց 2004թ. եւ ավարտվեց 2009-ին: Կողմերի միջև 2004 թվականին ստորագրված պայմանագրի համաձայն Հայաստանը իրանական գազի դիմաց կվճարի էլեկտրաէներգիայով, յուրաքանչյուր խորանարդ մետրի դիմաց՝ 3 կիլովատտ/ժամ էլեկտրաէներգիա: Շուրջ 200 միլիոն դոլար արժողությամբ գազատարը հանդիսավորությամբ՝ երկու երկրների նախագահների մասնակցությամբ, բացվել էր դեռևս 2007-ին: Գազատարը հնարավորություն կտա փարեկան մինչև 2,3-2,5 մլրդ խմ գազ ներմուծել Իրանից Հայաստան: Իրանական գազը կօգտագործվի ռուսական գազին զուգահեռ՝ անհրաժեշտության դեպքում:

Հայ - թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումից հետո կվերաբացվեն Ագարակից Նախիջեւան եւ Ագարակից Ադրբեջան ձգվող ճանապարհները: Լուսանկարում՝ հարված Ագարակ - Նախիջեւան ավտոմայրուղու Շիրանաձորի հարվածից:



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի



Հայ-իրանական սահմանը Արաքսի կամրջի մերձակայքում: Կամուրջը կառուցվել է 1995-ին: Մինչ այդ՝ անկախության փարիներին, գործում էր ժամանակավոր պոնտոնային կամուրջը:

Լուսանկարը՝ Ա. Ավագյանի



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

«ՀՀ էներգետիկայի նախարարության «Բարձրավոլտ էլեկտրաբազաններ» ՓԲԸ Ագարակ 220 ԿՎ փոխանցարան կետի» միջոցով Հայաստանն ու Իրանի Իսլամական Հանրապետությունը էլեկտրաէներգիա են փոխանցում իրար: Մեղրի-1 եւ Մեղրի-2 էլեկտրահաղորդակցման գծերը միանում են ԻԻՀ Ահար-1 եւ Ահար-2 էլեկտրահաղորդակցման գծերին: Փոխանցարան կետի անհրաժեշտությունը ծագեց, քանի որ այլևս չէր գործում խորհրդային փարիներին եղած միացյալ էներգահամակարգը, որի մաս էր կազմում Հայաստանը, իսկ ՀՀ-ում աշխատում է արոմակայան, եւ այդ պարագայում համակարգում էլ էներգիայի փոխանումներ չպետք է լինեն. պետք է ազատվել էլեկտրաէներգիայի ավելցուկից կամ լրացնել դրա պակասը: Առաջին էլեկտրահաղորդակցման գիծը կառուցվել է 1997 թվականին. այդ ժամանակ փոխանցարան կետը չկար, եւ գիծը Ահարի ենթակայանից (Իրան) միանալուց միանում էր Շինուհայրի ենթակայանին: 2002թ. կառուցվեց Ագարակ 220ԿՎ փոխանցարան կետը: էլեկտրահաղորդակցման երկու գծերով մոտ 700-800մլն կվտ/ժ էլեկտրաէներգիայի հոսք է լինում: Հիմնականում ձմռանը էլ էներգիա է ընդունում Հայաստանը, ամռանը՝ Իրանը: Փոխանցարան կետում մոտ փաստը հոգի է աշխատում: Արդեն հաստատվել է Իրան-Հայաստան երրորդ էլեկտրահաղորդման գծի կառուցման նախագիծը: Այն կլինի երկշղթա՝ 400ԿՎ լարվածությամբ, որը հզորությամբ կգերազանցի գործող գծերին (Մեղրի-1-ը եւ Մեղրի-2-ը 220ԿՎ լարվածություն ունեն): Այն Իրանից Ագարակով կմիանա Հրազդանի ՋԷԿ-ին, այնպեղից էլ՝ Վրաստանի էներգահամակարգին:



Համո Սահյան

Երբ Հայաստան են ասում

Երբ Հայաստան են ասում, երկնքի համ ու բույրից, Աստվածների համբույրից Հարբում է հողը նորից, Ու բարդիներն են նագում:

Երբ Հայաստան են ասում, Նուռը ճշում է քարին, Սարը կանչում է սարին, Եվ բողբոջում է բարին, Եվ չարիքն է նվազում:

Երբ Հայաստան են ասում, Քարն արթնանում է քնից, Սիրտս թռնում է բնից, Եվ կակաչները բլրից Դեպի սարերն են վազում:

Երբ Հայաստան են ասում, ճաքում է նուռը կրքից, Քրտնում է վազը դրկից, Եվ աստղերը երկնքից Ականջիդ բան են ասում...

Երբ Հայաստան են ասում, Արմատներով գորացած, Հնուրյան մեջ խորացած, Նորերի մեջ նորացած Բերդ ու ոստան են ասում:

Այստեղ լեռները երկինգ են հազել



Լուսավորող Ա. Ավագյանի

Այս ավազապի հողը՝ դրախտից բաժին հասած

Այստեղ լեռները մերկ են ու կապույտ, եւ քնաթափախ գագաթների ամպերը երազկոտ ամենուն են՝ արեւի առաջին շողից ամաչկոտ: Հպարտ բարձունքներին ձյունը չի իշխում, եւ լանջերն ի վար չեն կարկաչում անթիվ-անհամար աղբյուրներ: Ամռան տապին շառագունում են լերկ ժայռերի խոժոռ ճակատները: Ծարավից թռչում է գաճաճ մասրենին՝ ջուր երազելով: Իսկ ցածուն մայր գետն է՝ պղտոր, խռոված, որ ուր-մուր գալարումներով խուլ հառաչում է ու դժգոհում, որ դարձել է սահմանաբաժան գիծ: Մեկ խենթանում է, դուրս գալիս, ավերը ողորդում, աղմուկ-աղաղակով իր ցավը պատմում, մեկ էլ սսկվում է ու մեղացած հոսում: Իսկ հողի շուրթերը ճաքում են ծարավից՝ սպասելով կենարար ջրին:

կառչել մեկի փեշերից: Հովիտն ի վար վայել են Արաքսի սանձարձակ քամիները: Երբ ճեղքել են մայր հողի կուրծքը եւ գանձեր հանել, այստեղ դրվել է առաջին քարը, տնկվել է առաջին ծառը, հեռու լեռներից, հողի ընդերքից ջուրն էլ է բերվել: Փթթել է հովտի ավազապի հողում իմ հայրենի քաղաքը՝ ականջն Արաքսի խուլ հառաչանքին: Փթթել է օր օրի, ինչպես իրեն քամիներից պաշտպանող երկնասլաց բարդիների կանաչ օղակը: Սանձվել են քամիները կատաղի, ու հատունացել է առաջին պտուղը՝ ծիրանը քաղցրահամ: Ասում են՝ Աստված Հայաստանին բաժին է հանել իր դրախտից: Եթե դա ճիշտ է, ուրեմն նրա մի փոքր կտորը այս ավազապի հողն է: Նրան կնախանձի անգամ բանաստեղծների կողմից երգված Շիրազը: Դուք երբեք եղե՞լ եք մայիսին իմ քաղաքում: Այստեղ են բուրուն աշխարհի ամենաշքեղ վարդերը (վկա՝ Ասյա մայրիկի մեծ վարդաստանը՝ կարմիր, սպիտակ,

դեղին, ծիրանի...): Չէ՛, հնարավոր չէ թվարկել նրանց երանգները: Այստեղ են բացում իրենց աչուկները առաջին ծնծաղիկը, զանգակն ու մանուշակը, հակինթն ու նարգիզը, հպարտ քաջվարդն ու վարդակակաչը եւ բազմագույն երազներով նայում աշխարհին: Ոնց է շորորում, ճկվում ու նագում շուշանն իր նրբին քույրերով՝ հովտաշուշանով, վագրաշուշանով, փողաշուշանով... Չէ՛, անկրկնելի են բույրերն հասմիկի ու եղրեւանու: Նայում են նրանց, արբեմուն բույրով ու չես կարողանում հիացնումնքը զսպել... Հրաշք է բնությունը... «Ինչ լա՛վ է, որ կամ...»:

տանեն»-ը լսվել է նույնքան քաղցր, մեր հայերենը «դարձել է» մի քիչ ռուսերեն, մի քիչ ուկրաիներեն, մի քիչ օսերեն... ու չի թարգմանվել եւ ոչ մի լեզվով մեր «ջան»-ը, որ միայն մերն է (եւ ես ուրախ եմ, որ չի թարգմանվում եւ ոչ մի լեզվով):

Իր կարծառես կյանքում շատ բան է տեսել, հպարտ կանգնել է՝ կուրծքը դեմ տված չար հողմերին, չի խնայել իր ընտրյալ զավակների կյանքը հայրենյաց գոհասեղանին: Հիմա նրանք մնջում են այն հողի գրկում, որը կյանքի գնով պաշտպանեցին: Նրանց զավակների երդումին արձագանքում են լեռները հպարտ:

Դժվար է ապրում իմ քաղաքն այսօր, ինչպես իմ հանրապետությունը: Ընչուն է նա ճիշտ այնպես, ինչպես իրեն պահող պղնձամուլիթեղնային հսկան:

Ավինա Համբարձումյան Ազարակի միջև, դպրոցի ուսուցչուհի, («Մեղրի» գրական-հասարակական փարեզի, 2003թ.)

Այունյաց երկիր
տ ա ս ս օ Ր յ ա ք Ե Ր Ի Բ
գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներից չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթ տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2100, գինը՝ 300 դրամ:
Ստորագրված է տպագրության 09.10.2009թ.: